



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ  
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

**ՀՐԱՄԱՆ**

No

132

«30» ապրիլի 2021

2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ ՀՀ ՏԱԿՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ  
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՓՈՐՁԱՐԿԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ  
«ԹՎԱՅԻՆ ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԶԱՅԻՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ  
ՓՈՐՁՆԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉԸ ԵՎ ԾՐԱԳՐԵՐԸ (2-12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ) ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին  
կետով՝

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ**

1. 2021-2022 ուսումնական տարում ՀՀ Տավուշի մարզի հանրակրթական ուսումնական  
հաստատություններում փորձարկելու նպատակով հաստատել «Թվային գրագիտություն և  
համակարգչային գիտություն» առարկայի փորձնական չափորոշիչը և ծրագրերը (2-12-րդ  
դասարաններ)՝ համաձայն հավելվածի:

**Վ. ԴՈՒՄԱՆՅԱՆ**

/պաշտոնակատար/

X

ՎԱՀՐԱՄ ՂՈՒՄԱՆՅԱՆ

Signed by: DUMANYAN VAHRAM 1909620211



Հավելված

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի  
2021 թվականի ապրիլի -ի N հրամանի

«Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն»  
առարկայի փորձնական չափորոշիչ և ծրագրեր  
(2-12 դասարաններ)

## 1. Ուսուցման նպատակը՝ ըստ կրթական աստիճանների

«Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն» առարկայի գիտելիքային հիմքը, այդ գիտելիքով փաստարկված դատողություններ անելու կարողությունը և այդ ընթացքում ձևավորվող ու զարգացող հմտությունները խիստ անհրաժեշտ են սովորողին 21-րդ դարում արդյունավետ անձնական և քաղաքացիական կյանքին նախապատրաստելու համար: Առարկայի ընդհանրական նպատակն է պատրաստել և ոգևորել առավել մեծ թվով աշակերտների՝ ընտրելու ապագայի նորարարական և ստեղծագործական մասնագիտություններ: 21-րդ դարում բարդ խնդիրներ լուծելու համար տեխնոլոգիայի արդյունավետ օգտագործումը և դրա ստեղծմանը մասնակցելը համարվում են ընդհանրական գրագիտության և հիմնական հմտություններից մեկը:

«Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն» առարկայի չափորոշիչներն արտահայտում են այն առանցքային և կարևոր ուսումնառության վերջնարդյունքները, որոնք անհրաժեշտ են տարրական դպրոցի 2-րդ դասարանից մինչև ավագ դպրոցի 12-րդ դասարանների աշակերտներին կյանքում հաջողությունների հասնելու համար: Չափորոշիչները ներկայացնում են թվային գրագիտության և համակարգչային գիտության առանցքային տարրերը և նպատակ ունեն ուղղորդել համահունչ և խստապահանջ դասավանդումը՝ կրթելու աշակերտների, որոնք վարպետորեն կտիրապետեն և կկիրառեն առարկայի շրջանակներում մատուցվող գիտելիքը և հմտությունները:

Տարրական ծրագրի ուսուցման նպատակն է աշակերտներին ներկայացնել ալգորիթմիկ մտածողության ամենապարզ տարրերը, ծանոթացնել համակարգչային սարքավորումներից և թվային միջավայրերից անվտանգ օգտվելու միջոցները, յուրացնել համակարգչային սարքավորումների և դրանց բաղադրիչների աշխատանքի հիմնական սկզբունքները, ինչպես նաև օգտագործել համակարգիչները որպես աշխատանքային գործիքներ:

Հիմնական ծրագրի բաժնում, չափորոշչային վերջնարդյունքները թույլ են տալիս

Ա) Ինտեգրել առարկայի կրթական ծրագրի ողջ երկայնքով ներկայացվող հիմնական գաղափարները և աշխատանքի եղանակները;

Բ) Առավել խորությամբ բացահայտել թվային գրագիտության և համակարգչային գիտության աշխատանքի եղանակները այնպիսի համատեքստերում, ինչպիսիք են ներածական ծրագրավորումը, տվյալների հավաքագրումը և վերլուծությունը, ռոբոտաշինությունը և այլն, օգտագործելով դրանք հատուկ առարկայական ոլորտներում:

Միջնակարգ ծրագրի բաժնում չափորոշիչները հնարավորություն են տալիս սովորողներին արհեստավարժ դառնալ ինչպես համակարգչային սարքերի և ծրագրերի օգտագործման ոլորտում, այնպես էլ հասկանալ նոր ծրագրեր ստեղծելու, դրանց համար խնդիրներ սահմանելու և լուծելու կարևորագույն սկզբունքները: Խորացված մակարդակով առարկան ուսումնառող աշակերտները կստանան պրակտիկ ծրագրավորման հմտություններ:

## **2. Առարկայի (դասընթացի) ընդհանուր բնութագիրը**

«Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն» առարկայով փոխանցվող հմտությունները, գիտելիքը և ուսումնառության գործողությունները խիստ կարևոր են աշակերտների անձնական և քաղաքացիական կյանքի արդյունավետությունը բարձրացնելու համար: Այս գիտելիքները և հմտությունները հավասարապես կարևոր են անկախ այն հանգամանքից, թե ինչ ոլորտում է մասնագիտանալու աշակերտն ապագայում՝ տրանսպորտից մինչև արվեստի ոլորտներ, էներգետիկայից մինչև կենսաքիմիական գիտություններ, բիզնեսից և արտադրությունից մինչև առողջապահություն, ֆիզիկա, քիմիա, բնապահպանական գիտություններից մինչև հետազոտությունների զանազան ոլորտներ: Դրանք կարևոր են ինչպես անձնական, այնպես էլ քաղաքացիական կյանքին առնչվող որոշումներ կայացնելիս, հեռախոսների օգտագործումից մինչև ավտոկայանատեղիների և հաշվողական համակարգերով աշխատող այլ սարքերի ու ծառայությունների առնչվելիս:

2-12-րդ դասարանների չափորոշիչները կառուցված են ըստ դպրոցական մակարդակների (2-4-րդ դասարաններ՝ տարրական դպրոց, 5-9-րդ դասարաններ՝ միջին դպրոց և 10-12-րդ դասարաններ՝ ավագ դպրոց): Դպրոցական յուրաքանչյուր մակարդակում չափորոշիչները խմբավորված են չորս հիմնական գիտակարգային գաղափարներով պայմանավորված ուղղությունների շուրջ՝ (1) հաշվողականություն (Computing) ու հասարակություն, (2) թվային գործիքներ ու համագործակցություն, (3) հաշվողական համակարգեր և (4) հաշվարկային (Computational) և ալգորիթմիկ մտածողություն:

## **3. Ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները՝ ըստ կրթական աստիճանների**

### **3.1 Հանրակրթական տարրական ծրագրի «Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն» առարկայի վերջնարդյունքները**

<b>1</b>	<b>ՀՄԳ4.ՀՄՀ</b>	<b>ՀԱՄԱԿԱՐԳԻՉԸ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ</b>
<b>1.1</b>	<b>ՀՄԳ4.ՀՄՀ.ԱՊ</b>	Պատշաճ գնահատել անվտանգությանը և ապահովությանը սպառնացող վտանգները, խնդիրների հետևանքները վերացնելու եղանակները, արդյունավետ կերպով պայքարել կիբեր բռնարարության (կռվարարության) դեմ:
<b>1.1.1</b>	<b>ՀՄԳ4.ՀՄՀ.ԱՊ.1</b>	Անվտանգ օգտագործել էլեկտրական և էլեկտրոնային սարքերը:
<b>1.1.2</b>	<b>ՀՄԳ4.ՀՄՀ.ԱՊ.2</b>	Գաղտնի պահել անձնական տեղեկատվությունը՝ հասկանալով, թե ինչու է դա անհրաժեշտ: Գաղտնի պահել գրանցվելու և համակարգեր մուտք գործելու տվյալները և ճիշտ դուրս գալ համակարգերից և սարքերից:
<b>1.1.3</b>	<b>ՀՄԳ4.ՀՄՀ.ԱՊ.3</b>	Բացատրել, թե ինչ է գաղտնաբառը և ինչու է անհրաժեշտ դա օգտագործել: Օգտագործել բարդ գաղտնաբառեր անձնական սարքերը և տեղեկատվությունը չարտոնված հասանելիությունից պաշտպանելու համար:
<b>1.1.4</b>	<b>ՀՄԳ4.ՀՄՀ.ԱՊ.4</b>	Ճանաչել առցանց հաղորդակցության ապահով և անապահով օրինակները: Իմանալ, թե ինչպես և ում հաղորդել անթույլատրելի թվային բովանդակությունն ու անձանց վերաբերող տեղեկությունը:
<b>1.1.5</b>	<b>ՀՄԳ4.ՀՄՀ.ԱՊ.5</b>	Սահմանել լաբ թվային քաղաքացի լինելու բնութագրիչները, որոնք առնչվում են տեխնոլոգիայի ապահով, պատասխանատու և էթիկապես ճիշտ օգտագործմանը:
<b>1.2</b>	<b>ՀՄԳ4.ՀՄՀ.ԻՐՎ</b>	Հասկանալ տեխնոլոգիա և տեղեկատվություն ստեղծելու և օգտագործելու իրավական ասպեկտները:
<b>1.2.1</b>	<b>ՀՄԳ4.ՀՄՀ.ԻՐՎ.1</b>	Մյուսների հետ առցանց աշխատելիս դրսևորել հարգալից և պատասխանատու վարվեցողություն:
<b>1.2.2</b>	<b>ՀՄԳ4.ՀՄՀ.ԻՐՎ.2</b>	Համակարգչային ծրագրեր մշակելիս, ուրիշների մտքերն ու ստեղծածն օգտագործելիս տալ համապատասխան վերագրումներ:
<b>1.2.3</b>	<b>ՀՄԳ4.ՀՄՀ.ԻՐՎ.3</b>	Հասկանալ հեղինակային իրավունքի հիմնական գաղափարը:
<b>1.3</b>	<b>ՀՄԳ4.ՀՄՀ.ԱՁԴ</b>	Քննել տեխնոլոգիայի, օժանդակ տեխնոլոգիայի, տեխնոլոգիական մասնագիտությունների և կիբեր հանցագործությունների

		ազդեցությունը մարդկանց կյանքի, առևտրային գործունեության և հասարակության վրա:
1.3.1	ՀՄԳ4.ՀՄՀ.ԱԶԴ.1	Համեմատել մարդկանց ապրելակերպն ու աշխատանքը մինչև համակարգչային տեխնոլոգիաների ներդրումը և դրանից հետո:
1.3.2	ՀՄԳ4.ՀՄՀ.ԱԶԴ.2	Քննարկել այն համակարգչային տեխնոլոգիաները, որոնք փոխել են աշխարհը, և այն, թե ինչպես են այդ տեխնոլոգիաներն ազդել մշակութային որոշակի գործելակերպի վրա և միաժամանակ ազդեցություն կրել այդ նույն գործելակերպից:
2	ՀՄԳ4.ԹԳԾ	<b>ԹՎԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ</b>
2.1	ՀՄԳ4.ԹԳԾ.ՕԳՏ	Գտնել և օգտագործել խնդիր լուծելու համար լավագույն թվային ռեսուրսները և գործիքները:
2.1.1	ՀՄԳ4.ԹԳԾ.ՕԳՏ.1	Ընտրել և գործարկել համապատասխան համակարգչային ծրագրեր բազմազան առաջադրանքներ կատարելու համար և ըմբռնել, որ օգտատերերն իրենց օգտագործած տեխնոլոգիայի նկատմամբ տարբեր կարիքներ և նախընտրություններ ունեն:
2.2	ՀՄԳ4.ԹԳԾ.ՀԱՂ	Հաղորդակցվել, համագործակցել և բարելավել առցանց ներկայությունը:
2.2.1	ՀՄԳ4.ԹԳԾ.ՀԱՂ.1	Օգտագործելով ճիշտ տերմինաբանություն՝ նկարագրել այն քայլերը և որոշումները, որոնք կայացվում են համակարգչային ծրագրի իտերատիվ (կրկնվող) գործընթացում:
2.2.2	ՀՄԳ4.ԹԳԾ.ՀԱՂ.2	Նկարագրել ծրագրավորման ընթացքում կատարված ընտրությունները՝ օգտագործելով կողի մեկնաբանություններ, պրեզենտացիաներ և ցուցադրություններ:
2.3	ՀՄԳ4.ԹԳԾ.ՕՊՏ	Կատարել հետազոտություն անհատական աշխատանքը և համագործակցությունը թվային գործիքներով, տվյալներով և տեղեկատվության օգնությամբ օպտիմալացնելու նպատակով:
2.3.1	ՀՄԳ4.ԹԳԾ.ՕՊՏ.1	Մտագրոհի միջոցով ուղիներ գտնել օգտատերերի բազմազան կարիքներին և ցանկություններին առնչվող տեխնոլոգիական պրոդուկտների հասանելիությունը և օգտակարությունը բարելավելու

		համար:
<b>3</b>	<b>ՀՄԳ4.ՍՐՔ</b>	<b>ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՍԱՐՔԵՐ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ</b>
<b>3.1</b>	<b>ՀՄԳ4.ՍՐՔ.ԱՇԽ</b>	Հասկանալ, թե ինչպես են սարքերն աշխատում, հատուկ առաջադրանքների համար ընտրել և օգտագործել համապատասխան հաշվողական սարքերի/ծրագրերի համադրություն:
<b>3.1.1</b>	<b>ՀՄԳ4.ՍՐՔ.ԱՇԽ.1</b>	Հաշվողական համակարգերի (սարքերի) ընդհանուր ֆիզիկական բաղադրիչների գործառույթները ճանաչելիս և բնութագրելիս օգտագործել համապատասխան տերմինաբանություն:
<b>3.1.2</b>	<b>ՀՄԳ4.ՍՐՔ.ԱՇԽ.2</b>	Պահպանել, պատճենել, փնտրել, վերականգնել, փոփոխել և ջնջել տեղեկատվությունը՝ օգտագործելով համակարգչային սարք և սահմանել այն տեղեկատվությունը, որը պահպանվում է որպես տվյալ:
<b>3.2</b>	<b>ՀՄԳ4.ՍՐՔ.ԽԼԾ</b>	Օգտագործել խնդրների լուծման եղանակներ՝ համակարգչային սարքերին և ծրագրերին առնչվող խնդիրները լուծելու համար:
<b>3.2.1</b>	<b>ՀՄԳ4.ՍՐՔ.ԽԼԾ.1</b>	Նկարագրել համակարգչային սարքերի և ծրագրերի հիմնական խնդիրները՝ օգտագործելով ճշգրիտ տերմինաբանություն:
<b>3.2.2</b>	<b>ՀՄԳ4.ՍՐՔ.ԽԼԾ.2</b>	Որոշել հնարավոր լուծումները հանրորեն հայտնի եղանակներով՝ համակարգչային սարքերին և ծրագրերին առնչվող պարզ խնդիրները լուծելու համար:
<b>3.3</b>	<b>ՀՄԳ4.ՍՐՔ.ՑՆՑ</b>	Հասկանալ, թե ինչպես են հաղորդակցվում ցանցերը և գնահատել դրանց թույլ կողմերը:
<b>3.3.1</b>	<b>ՀՄԳ4.ՍՐՔ.ՑՆՑ.1</b>	Մոդելավորել, թե ինչպես է տեղեկատվությունը մասնատվում ավելի փոքր մասերի, ցանցի և ինտերնետի մեջ առկա բազմաթիվ սարքերի միջոցով փոխանցվում փաթեթներով (packets) և նպատակային կետում կրկին հավաքվում մեկ ամբողջության մեջ:
<b>4</b>	<b>ՀՄԳ4.ԱՄՏԾ</b>	<b>ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԵՎ ԱԼԳՈՐԻԹՄԱՅԻՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ</b>
<b>4.1</b>	<b>ՀՄԳ4.ԱՄՏԾ.ՈՒՊ</b>	Ընդհանրացման, մասնատման և աբստրակցիայի միջոցով ստեղծել

		նոր ռեպրեզենտացիա/ներկայացուցչություն, այդ թվում տվյալների ռեպրեզենտացիա:
4.1.1	ՀՄԳ4.ԱՄՏԾ.ՈՒՊ.1	Մոդելավորել, թե ինչպես են համակարգչային ծրագրերը պահպանում և գործածում տվյալները՝ տեղեկատվությունը ներկայացնելու համար օգտագործելով թվեր և այլ սիմվոլներ:
4.1.2	ՀՄԳ4.ԱՄՏԾ.ՈՒՊ.2	Հավաքել և ներկայացնել նույն տվյալները տարբեր տեսողական ֆորմատներով (ձևաչափերով):
4.1.3	ՀՄԳ4.ԱՄՏԾ.ՈՒՊ.3	Մասնատել այն քայլերը, որոնք անհրաժեշտ է կատարել հրամանների ճշգրիտ հաջորդականության միջոցով խնդիրը լուծելու համար:
4.1.4	ՀՄԳ4.ԱՄՏԾ.ՈՒՊ.4	Ստեղծել ծրագրեր, որոնք օգտագործում են փոփոխականներ տվյալներ պահելու և դրանք փոփոխելու համար:
4.2	ՀՄԳ4.ԱՄՏԾ.ՄՈՂ	Իրական կյանքի դեպքերի/իրադարձությունների ռեպրեզենտացիան/ներկայացումը ընդհանրական մոդելների միջոցով:
4.2.1	ՀՄԳ4.ԱՄՏԾ.ՄՈՂ.1	Կանխատեսումներ անելու նպատակով ճանաչել և նկարագրել նմանություններ/օրինաչափություններ գրաֆիկների և աղյուսակների պես տվյալների արտապատկերներում:
4.2.2	ՀՄԳ4.ԱՄՏԾ.ՄՈՂ.2	Օգտագործել տվյալներ՝ պատճառահետևանքային կապեր և ելքի կանխատեսումներ ընդգծելու կամ առաջարկելու, ինչպես նաև գաղափարը հաղորդելու նպատակով:
4.3	ՀՄԳ4.ԱՄՏԾ.ԾՐԳ	Գրել և կատարել սխալների ուղղում ստրուկտուրացված/կառուցակարգված ծրագրավորման լեզուների ալգորիթմների մեջ՝ կիրառելով իտերատիվ/կրկնվող դիզայնի և խնդիրների լուծման սկզբունքները, օգտագործելով ժամանակակից ծրագրավորման լեզուների տիրապետման հմտությունները:
4.3.1	ՀՄԳ4.ԱՄՏԾ.ԾՐԳ.1	Մոդելավորել առօրյա գործընթացները՝ որևէ գործողություն կամ առաջադրանք ավարտին հասցնելու համար ստեղծելով և հետևելով ալգորիթմների (քայլ առ քայլ հրամանների խմբեր):



4.3.2	ՀՄԳ4.ԱՄՏԾ.ԾՐԳ.2	Մշակել համակարգչային ծրագրեր, որոնք պարունակում են հաջորդականություններ և պարզ հանգույցներ, դրանց միջոցով արտահայտել որևէ գաղափար կամ լուծել որևէ խնդիր:
4.3.3	ՀՄԳ4.ԱՄՏԾ.ԾՐԳ.3	Ուղղել (գտնել և ուղղել) սխալներն այնպիսի ալգորիթմներում կամ ծրագրերում, որոնք պարունակում են հաջորդականություններ և պարզ հանգույցներ:
4.3.4	ՀՄԳ4.ԱՄՏԾ.ԾՐԳ.4	Մասնատել խնդիրները՝ ստանալով ավելի փոքր և ավելի հեշտ կառավարելի ենթախնդիրներ, այդ կերպ հստակեցնել և հեշտացնել համակարգչային ծրագրի մշակման գործընթացը:
4.3.5	ՀՄԳ4.ԱՄՏԾ.ԾՐԳ.5	Օգտագործել իտերատիվ/կրկնվող գործընթաց՝ համակարգչային ծրագրի մշակումը պլանավորելու համար՝ ներառելով մյուսների տեսակետները և հաշվի առնելով օգտատերերի նախընտրությունները:
4.3.6	ՀՄԳ4.ԱՄՏԾ.ԾՐԳ.6	Փոփոխել, վերախմբավորել, խառնել կամ միավորել առկա ծրագրի հատվածներ՝ նոր սեփական աշխատանք ստեղծելու, որևէ նոր բան մշակելու կամ եղածին ավելի առաջադեմ առանձնահատկություններ ավելացնելու համար:
4.3.7	ՀՄԳ4.ԱՄՏԾ.ԾՐԳ.7	Թեստավորել և ուղղել (գտնել և ուղղել) ծրագրի կամ ալգորիթմի սխալները՝ համոզվելով, որ այն աշխատում է նախատեսվածին համապատասխան:
4.3.8	ՀՄԳ4.ԱՄՏԾ.ԾՐԳ.8	Ուսուցչի ուղղորդմամբ, համագործակցելով ընկերների հետ, համակարգչային ծրագրի մշակման, իրագործման և վերանայման/ստուգման փուլերում ստանձնել տարբեր դերեր:
4.3.9	ՀՄԳ4.ԱՄՏԾ.ԾՐԳ.9	Նկարագրել, թե ինչպիսի ընտրություններ/որոշումներ են կայացվել համակարգչային ծրագրի մշակման փուլում, օգտագործելով կողի մեկնաբանություններ, պրեզենտացիաներ և ցուցադրություններ:
4.4	ՀՄԳ4.ԱՄՏԾ.ԷՖԿ	Վերլուծել ալգորիթմի արդյունավետությունը և օգտագործման դեպքերը/սցենարները:
4.4.1	ՀՄԳ4.ԱՄՏԾ.ԷՖԿ.1	Մշակել պլան, որը նկարագրում է համակարգչային ծրագրի

		դեպքերի հաջորդականությունը, նպատակը և ակնկալվող վերջնարդյունքները:
4.4.2	ՀՄԳ4.ԱՄՏԾ.ԷՖԿ.2	Համեմատել և կատարելագործել նույն առաջադրանքի կատարման համար օգտագործվող բազմատեսակ ալգորիթմներ և որոշել, թե որն է ամենահամապատասխանը:
4.5	ՀՄԳ4.ԱՄՏԾ.ՄՍՄ	Ստեղծել մոդելներ և սիմուլյացիաներ, ենթադրությունները ձևակերպելու, թեստավորելու, վերլուծելու և կատարելագործելու համար:
4.5.1	ՀՄԳ4.ԱՄՏԾ.ՄՍՄ.1	Կազմակերպել և տեսանելի ներկայացնել հավաքված տվյալները, այնպես, որ հնարավոր լինի ընդգծել դրանց փոխհարաբերությունները և պաշտպանել պնդումը:

**3.2 Հանրակրթական հիմնական ծրագրի «Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն» առարկայի վերջնարդյունքները**

1	ՀՄԳ9.ՀՄՀ	ՀԱՄԱԿԱՐԳԻՉՐ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ
1.1	ՀՄԳ9.ՀՄՀ.ԱՊ	Պատշաճ գնահատել անվտանգության և ապահովության վտանգները, խնդիրների հետևանքները վերացնելու եղանակները, արդյունավետ պայքարել կիբեր բռնարարության/կովարարության դեմ:
1.1.1	ՀՄԳ9.ՀՄՀ.ԱՊ.1	Նկարագրել տեղեկատվությունը հանրայնացնելու և գաղտնի ու ապահով պահելու վտանգներն ու առավելությունները:
1.1.2	ՀՄԳ9.ՀՄՀ.ԱՊ.2	Բացատրել, թե ֆիզիկական և թվային ինչ միջոցներով է հնարավոր պաշտպանել էլեկտրոնային տեղեկատվությունը:
1.1.3	ՀՄԳ9.ՀՄՀ.ԱՊ.3	Քննարկել իրական աշխարհում առկա կիբերանվտանգության խնդիրները, ինչպես է հնարավոր պաշտպանել անձնական տեղեկատվությունը:

1.1.4	ՀՄԳԳ.ՀՄՀ.ԱՊ.4	Ճանաչել տեխնոլոգիայի պատշաճ և ոչ ճիշտ օգտագործման եղանակները կամ դեպքերը այն ժամանակ, երբ կատարում ենք հրապարակումներ սոցիալական մեդիայում, ուղարկում ենք էլեկտրոնային նամակներ կամ տեքստեր և որոնում ենք կատարում ինտերնետում:
1.1.5	ՀՄԳԳ.ՀՄՀ.ԱՊ.5	Հասկանալ սարքերի ապահով և արդյունավետ օգտագործման այն վտանգները (օր.՝ ՍՊԱՄ, ֆիշինգ, վիրուսներ), որոնք առնչվում են տեխնոլոգիայի օգտագործման տարբեր ձևերին (օր.՝ ծրագրային ապահովումներ ներբեռնելիս և տեղադրելիս/օգտագործելիս, հիպերհղումներ/հղումներ ակտիվացնելիս, ֆայլեր բացելիս):
1.1.6	ՀՄԳԳ.ՀՄՀ.ԱՊ.6	Ճանաչել կիբեր բռնարարության/կովարարության տարբեր տեսակները և իմանալ, թե ինչպես վարվել դրանց հետ:
1.1.7	ՀՄԳԳ.ՀՄՀ.ԱՊ.7	Ճանաչել համայնքում առկա այն ռեսուրսները, որոնք կարող են մարդկանց համար ապահովել տեխնոլոգիայի հասանելիություն (օր.՝ գրադարաններ, հայորդաց տներ, համայնքային կենտրոններ, կրթական ծրագրեր, դպրոցներ, սարքեր և համակարգչային ծրագրեր նվիրաբերող նախագծեր):
1.1.8	ՀՄԳԳ.ՀՄՀ.ԱՊ.8	Բացատրել գաղտնիությանն առնչվող այն մտահոգությունները, որոնք առկա են տվյալների հավաքման և առաջացման գործողությունների դեպքում, տեղի են ունենում ավտոմատացված գործընթացների հետևանքով և հնարավոր է, որ ակնհայտ չլինեն այլ համակարգի օգտատերերի համար:
1.1.9	ՀՄԳԳ.ՀՄՀ.ԱՊ.9	Նկարագրել և դրսևորել անվտանգ, պատշաճ և պատասխանատու գործելակերպ առցանց համայնքներում մասնակցություն ունենալիս:
1.1.10	ՀՄԳԳ.ՀՄՀ.ԱՊ.10	Խորհուրդ տալ անվտանգության այնպիսի միջոցներ, որոնք աշխատանքի և օգտագործման տարբեր իրավիճակներում հաշվի կառնեն արդյունավետության, կենսունակության և էթիկական ազդեցության գործոնները:

1.1.11	ՀՄԳԳ.ՀՄՀ.ԱՊ.11	Տեղեկատվության ապահով փոխանցումը մոդելավորելու նպատակով կիրառել ծածկագրման բազմակի մեթոդներ: Համեմատել անվտանգության տարբեր միջոցներ՝ հաշվի առնելով հաշվողական համակարգի օգտակարության և անվտանգության դրական և բացասական կողմերը:
1.1.13	ՀՄԳԳ.ՀՄՀ.ԱՊ.13	Բացատրել հաքերության/կայքահեռության դրական և բացասական նպատակները:
1.2	ՀՄԳԳ.ՀՄՀ.ԻՐՎ	Հասկանալ տեխնոլոգիա և տեղեկատվություն ստեղծելու և օգտագործելու իրավական հայեցակետերը:
1.2.1	ՀՄԳԳ.ՀՄՀ.ԻՐՎ.1	Ներկառուցել առկա ծրագրային կոդը, մեդիան և գրադարանները ելքային ծրագրերում և տալ պատշաճ վերագրում: Թվել և բացատրել լիցենզիաների գլխավոր տեսակները:
1.2.2	ՀՄԳԳ.ՀՄՀ.ԻՐՎ.2	Ծրագրեր ստեղծելիս կամ վերակազմավորելիս պահպանել մտավոր սեփականության իրավունքը և տալ համապատասխան վերագրումներ:
1.2.3	ՀՄԳԳ.ՀՄՀ.ԻՐՎ.3	Օգտագործել հանրային բաց տարածքի կամ "ստեղծագործ համայնքներում" (creative commons) տեղադրված մեդիա նյութերը և զերծ մնա առանց թույլտվության մյուսների կողմից ստեղծված նյութերի պատճենումից կամ օգտագործումից:
1.2.4	ՀՄԳԳ.ՀՄՀ.ԻՐՎ.4	Ռեսուրսներ (ինչպիսիք են գրադարանները) օգտագործելիս, գնահատել լիցենզիաների այն տեսակները, որոնք սահմանափակում կամ արգելում են հաշվարկային արտիֆակտների օգտագործումը:
1.2.5	ՀՄԳԳ.ՀՄՀ.ԻՐՎ.5	Բացատրել, թե ինչպիսի օգտակար և վնասակար ազդեցություն կարող են ունենալ մտավոր սեփականության օրենքները նորարարության վրա:
1.2.6	ՀՄԳԳ.ՀՄՀ.ԻՐՎ.6	Հասկանալ GNU, Ընդհանուր հանրային լիցենզիայի, Բաց ծրագրային կոդով ապահովման գաղափարները:
1.2.7	ՀՄԳԳ.ՀՄՀ.ԻՐՎ.7	Գնահատել ապահովության, օրենքների և էթիկայի համատեքստում

		գաղտնիության սոցիալական և տնտեսական հետևանքները:
1.3	ՀՄԳԳ.ՀՄՀ.ԱԶԴ	Քննարկել տեխնոլոգիայի, օգնող և օժանդակ տեխնոլոգիայի, տեխնոլոգիական մասնագիտությունների և կիրքեր հանցագործությունների ազդեցությունը մարդկանց կյանքի, առևտրային գործունեության և հասարակության վրա:
1.3.1	ՀՄԳԳ.ՀՄՀ.ԱԶԴ.1	Համեմատել մարդկանց առօրյա և մասնագիտական գործունեության վրա ազդող համակարգչային տեխնոլոգիաների վատ և լավ դրսևորումները:
1.3.2	ՀՄԳԳ.ՀՄՀ.ԱԶԴ.2	Քննարկել առկա տեխնոլոգիաների դիզայնում կողմնակալության հասանելիության խնդիրները:
1.3.3	ՀՄԳԳ.ՀՄՀ.ԱԶԴ.3	Գնահատել, թե ինչպես է հաշվողականությունն ազդում մարդկանց անձնական, էթիկական, սոցիալական, տնտեսական և մշակութային գործելակերպի վրա:
1.3.4	ՀՄԳԳ.ՀՄՀ.ԱԶԴ.4	Ստուգել և կատարելագործել հաշվողական արտիֆակտները (աշխատանքները)՝ նվազեցնելով կողմնակալությունը և անհավասարության դրսևորումները:
1.3.5	ՀՄԳԳ.ՀՄՀ.ԱԶԴ.5	Գնահատել, թե ինչպես է հնարավոր մեդիան և տեխնոլոգիան օգտագործել տեղեկատվությունը աղավաղելու, չափազանցնելու և սխալ ներկայացնելու նպատակով: Գնահատել թվային տեղեկատվական աղբյուրների, այդ թվում վեբկայքերի կողմնակալությունը:
2	ՀՄԳԳ.ԹԳԾ	<b>ԹՎԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ</b>
2.1	ՀՄԳԳ.ԹԳԾ.ՕԳՏ	Գտնել և օգտագործել խնդիր լուծելու համար լավագույն թվային ռեսուրսները և գործիքները
2.1.1	ՀՄԳԳ.ԹԳԾ.ՕԳՏ.1	Հաշվողական արտեֆակտները/աշխատանքները բարելավելու նպատակով փնտրել/գտնել բազմատեսակ տեսանկյուններ:
2.1.2	ՀՄԳԳ.ԹԳԾ.ՕԳՏ.2	Գնահատել և կատարելագործել հաշվողական արտիֆակտները՝

		դրանք ավելի օգտագործելի և հասանելի դարձնելու համար:
2.1.3	ՀՄԳԳ.ԹԳԾ.ՕԳՏ.3	Ցուցադրել, թե ինչ եղանակներով է տվյալ ալգորիթմը կիրառվում տարբեր ոլորտների խնդիրները լուծելու համար: Ճանաչել առօրյա կյանքի տարբեր ոլորտներում առկա ինվարիանտները/կայուն չփոփոխվող ֆունկցիաները/հատկությունները կամ քանակական միավորները:
2.2	ՀՄԳԳ.ԹԳԾ.ՀԱՂ	Հաղորդակցվել, համագործակցել և բարելավել առցանց ներկայությունը:
2.2.1	ՀՄԳԳ.ԹԳԾ.ՀԱՂ.1	Փնտրել և ներառել թիմակիցների և օգտատերերի արձագանքը՝ օգտատերերի կարիքներին համապատասխան լուծումը կատարելագործելու համար:
2.2.2	ՀՄԳԳ.ԹԳԾ.ՀԱՂ.2	Համագործակցությամբ հաշվողական արտեֆակտներ/աշխատանքներ մշակելիս բաշխել առաջադրանքները և պահպանել նախագծի ժամանակացույցը:
2.2.3	ՀՄԳԳ.ԹԳԾ.ՀԱՂ.4	Փաստաթղթավորել նախագծային որոշումները՝ օգտագործելով տեքստ, գրաֆիկներ, պրեզենտացիաներ և ցուցադրություններ բարդ և խճճված համակարգչային ծրագրեր մշակելիս:
2.3	ՀՄԳԳ.ԹԳԾ.ՕՊՏ	Թվային գործիքներով, տվյալներով և տեղեկատվության օգնությամբ անհատական աշխատանքը և համագործակցությունը օպտիմալացնելու նպատակով կատարել հետազոտություն:
2.3.1	ՀՄԳԳ.ԹԳԾ.ՕՊՏ.1	Հաշվողական արտեֆակտներ ստեղծելիս համագործակցել բազմաթիվ աջակից/ներդրողների հետ՝ օգտագործելով այնպիսի ռազմավարություններ, ինչպիսիք են ամբոխային/հանրային աղբյուրաստեղծումը (crowdsourcing) կամ հարցումները:
2.3.2	ՀՄԳԳ.ԹԳԾ.ՕՊՏ.2	Բազմատեսակ մշակույթներից եկող և տարբեր մասնագիտական ոլորտներում աշխատող մարդկանց միջև կապվածությունը բարելավելու նպատակով իրագործվող նախագծի վրա աշխատելիս օգտագործել համագործակցային գործիքներ և մեթոդներ:
3	ՀՄԳԳ.ՍՐՔ	ՀԱՄԱԿԱՐԳԶԱՅԻՆ ՍԱՐՔԵՐ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

3.1	<b>ՀՄԳԳ.ՍՐՔ.ԱՇԽ</b>	Հասկանալ, թե ինչպես են սարքերն աշխատում, հատուկ առաջադրանքների համար ընտրել ու օգտագործել համապատասխան հաշվողական սարքերի/ծրագրերի համադրություն:
3.1.1	<b>ՀՄԳԳ.ՍՐՔ.ԱՇԽ.1</b>	Նկարագրել, թե համակարգ կազմելու նպատակով ինչպես են գործում հաշվողական սարքերի ներքին և արտաքին մասերը:
3.1.2	<b>ՀՄԳԳ.ՍՐՔ.ԱՇԽ.2</b>	Մոդելավորել, թե առաջադրանքներ կատարելու նպատակով ինչպես են համակարգչային սարքը և ծրագիրը միասին աշխատում որպես միասնական համակարգ:
3.1.3	<b>ՀՄԳԳ.ՍՐՔ.ԱՇԽ.3</b>	Համեմատել ծրագրային հավելվածների, համակարգային ծրագրերի և սարքերի շերտերի միջև արտակարգի և փոխազդեցության մակարդակները:
3.2	<b>ՀՄԳԳ.ՍՐՔ.ԽԼԾ</b>	Օգտագործել խնդրների լուծման եղանակներ՝ համակարգչային սարքերի և ծրագրերին առնչվող խնդիրները լուծելու համար:
3.2.1	<b>ՀՄԳԳ.ՍՐՔ.ԽԼԾ.1</b>	Մշակել ուղեցույցներ, որոնք պարունակում են համակարգչային խնդիրների լուծման եղանակներ, որոնք օգտագործելով՝ մյուսները կարող են ճանաչել և ուղղել սխալները:
3.3	<b>ՀՄԳԳ.ՍՐՔ.ՑՆՑ</b>	Հասկանալ, թե ինչպես են հաղորդակցվում ցանցերը և գնահատել դրանց թույլ կողմերը:
3.3.1	<b>ՀՄԳԳ.ՍՐՔ.ՑՆՑ.1</b>	Ճանաչել տվյալների ներկայացման տարատեսակ մոտեցումները, դրանց լավ կողմերն ու թերությունները:
3.3.2	<b>ՀՄԳԳ.ՍՐՔ.ՑՆՑ.2</b>	Մոդելավորել պրոտոկոլների դերը ցանցով և ինտերնետով տվյալներ փոխանցելիս:
3.3.3	<b>ՀՄԳԳ.ՍՐՔ.ՑՆՑ.3</b>	Գնահատել ցանցերի մասշտաբավորումն ու հուսալիությունը՝ նկարագրելով ռաուտերների, սվիչների, սերվերների, տոպոլոգիայի և հասցեավորման փոխհարաբերությունները:
3.3.4	<b>ՀՄԳԳ.ՍՐՔ.ՑՆՑ.4</b>	Օրինակներ բերել, որոնք նկարագրում են, թե ինչպես զգայուն տվյալները կարող են ազդեցություն կրել չարամիտ նպատակով կիրառվող համակարգչային ծրագրերից և այլ հարձակումներից:

4	ՀՄԳԳ.ԱՄՏԾ	ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԵՎ ԱԼԳՈՐԻԹՄԻԿ ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ
4.1	ՀՄԳԳ.ԱՄՏԾ.ՌԵՊ	Ընդհանրացման, մասնատման և արստրակցիայի միջոցով ստեղծել նոր ռեպրեզենտացիա/ներկայացուցչություն, այդ թվում տվյալների ռեպրեզենտացիա:
4.1.1	ՀՄԳԳ.ԱՄՏԾ.ՌԵՊ.1	Օգտագործել բլոկ սխեմաներ կամ կեղծ կոդ բարդ խնդիրներ՝ որպես ալգորիթմներ լուծելու համար:
4.1.2	ՀՄԳԳ.ԱՄՏԾ.ՌԵՊ.2	Ներկայացնել տվյալները՝ օգտագործելով գաղտնագրման բազմատեսակ սխեմաներ:
4.1.3	ՀՄԳԳ.ԱՄՏԾ.ՌԵՊ.3	Կատարելագործել հաշվարկային մոդելները՝ հիմնվելով այն տվյալների վրա, որոնք ստեղծվել են նույն այդ մոդելների միջոցով:
4.1.4	ՀՄԳԳ.ԱՄՏԾ.ՌԵՊ.4	Օգտագործել ցանկեր պարզ փոփոխականները կրկնողաբար օգտագործելու փոխարեն լուծումները պարզեցնելու և հաշվարկային (computational) խնդիրներն ընդհանրացնելու համար:
4.1.5	ՀՄԳԳ.ԱՄՏԾ.ՌԵՊ.5	Մասնատել խնդիրներն ավելի փոքր բաղադրիչների՝ օգտագործելով համակարգային վերլուծություն և այնպիսի կառուցվածքային տարրեր, ինչպիսիք են ընթացակարգերը, մոդուլները և/կամ օբյեկտները:
4.1.6	ՀՄԳԳ.ԱՄՏԾ.ՌԵՊ.6	Բացատրել, թե ինչպես է արստրակցիան/վերացարկումը թաքցնում առօրյա օբյեկտներում/ապրանքներում/սարքերում ներկառուցված հաշվողական համակարգերի հիմքում ընկած ծրագրի իրականացման մանրամասները:
4.1.7	ՀՄԳԳ.ԱՄՏԾ.ՌԵՊ.7	Թարգմանել բիթերի մեկ ռեպրեզենտացիայից մյուսը՝ օգտագործելով իրական կյանքի երևույթներ, ինչպիսիք են նիշերը, թվերը և նկարները:
4.1.8	ՀՄԳԳ.ԱՄՏԾ.ՌԵՊ.8	Ստեղծել տվյալների ինտերակտիվ վիզուալիզացիաներ՝ օգտագործելով ծրագրային գործիքներ, ինչով հնարավոր է մյուսներին օգնել ավելի լավ հասկանալու իրական կյանքում հանդիպող երևույթները:
4.2	ՀՄԳԳ.ԱՄՏԾ.ՄՈԴ	Իրական կյանքի դեպքերի/իրադարձությունների



		ռեպրեզենտացիան ընդհանրական մոդելների միջոցով:
4.2.1	ՀՄԳԳ.ԱՄՏԾ.ՄՈԴ.1	Օգտագործելով հաշվարկային գործիքներ՝ հավաքել տվյալներ և վերափոխել դրանք առավել օգտակար կամ հուսալի դարձնելու համար:
4.2.2	ՀՄԳԳ.ԱՄՏԾ.ՄՈԴ.2	Սխտեմատիկորեն նախագծել և մշակել ծրագրեր ավելի լայն լսարանների համար՝ ներկառուցելով օգտատերերից ստացվող արձագանքները:
4.2.3	ՀՄԳԳ.ԱՄՏԾ.ՄՈԴ.3	Որևէ երևույթից կամ գործընթացից քաղված տվյալների տարբեր տարրերի հարաբերությունները ներկայացնելու նպատակով ստեղծել հաշվարկային մոդելներ:
4.3	ՀՄԳԳ.ԱՄՏԾ.ԾՐԳ	Գրել և կատարել սխալների ուղղում ստրուկտուրացված/կառուցակարգված ծրագրավորման լեզուների ավգորիթմների մեջ՝ կիրառելով իտերատիվ/կրկնվող դիզայնի և խնդիրների լուծման սկզբունքները, օգտագործելով ժամանակակից ծրագրավորման լեզուների տիրապետման հմտությունները:
4.3.1	ՀՄԳԳ.ԱՄՏԾ.ԾՐԳ.1	Բաղդատել խնդիրները և ենթախնդիրները մասերի այնպես, որ ավելի դյուրին դառնա համակարգչային ծրագրերի նախագծումը, իրականացումը և վերանայումը:
4.3.2	ՀՄԳԳ.ԱՄՏԾ.ԾՐԳ.2	Ստեղծել որոշ պարամետրերով ընթացակարգեր, որոնց շնորհիվ հնարավոր է կոդն առավել լավ կազմակերպել և դյուրացնել դրա վերաօգտագործումը:
4.3.3	ՀՄԳԳ.ԱՄՏԾ.ԾՐԳ.3	Խորհուրդ տալ, թե ինչպես բարելավել հաշվողական/համակարգչային սարքի դիզայնը՝ հիմնվելով վերլուծության վրա, որը ցույց է տալիս, թե ինչպես են օգտատերերը շփվում սարքի հետ:
4.3.4	ՀՄԳԳ.ԱՄՏԾ.ԾՐԳ.4	Մասնատել խնդիրները՝ ստանալով ավելի փոքր և ավելի դյուրորեն կառավարելի ենթախնդիրներ և դրա միջոցով հստակեցնել և դյուրացնել համակարգչային ծրագրի մշակման գործընթացը:
4.3.5	ՀՄԳԳ.ԱՄՏԾ.ԾՐԳ.5	Օգտագործել իտերատիվ/կրկնվող գործընթաց համակարգչային

		ծրագրի մշակումը պլանավորելու համար՝ ներառելով մյուսների տեսակետները և հաշվի առնելով օգտատերերի նախընտրությունները:
4.3.6	ՀՄԳԳ.ԱՄՏԾ.ԾՐԳ.6	Փոփոխել, վերախմբավորել, խառնել կամ միավորել առկա ծրագրի հատվածներ՝ նոր սեփական աշխատանք ստեղծելու, որևէ նոր բան մշակելու կամ եղածին ավելի առաջադեմ առանձնահատկություններ ավելացնելու համար:
4.3.7	ՀՄԳԳ.ԱՄՏԾ.ԾՐԳ.7	Թեստավորել և ուղղել (գտնել և ուղղել) ծրագրի կամ ալգորիթմի սխալները՝ համոզվելով, որ այն աշխատում է նախատեսվածին համապատասխան:
4.3.8	ՀՄԳԳ.ԱՄՏԾ.ԾՐԳ.8	Ուսուցչի ուղղորդմամբ, համագործակցելով ընկերների հետ, համակարգչային ծրագրի մշակման, իրագործման և վերանայման/ստուգման փուլերում ստանձնել տարբեր դերեր:
4.3.9	ՀՄԳԳ.ԱՄՏԾ.ԾՐԳ.9	Նկարագրել թե ինչպիսի ընտրություններ/որոշումներ են կայացվել համակարգչային ծրագրի մշակման փուլում, օգտագործելով կողի մեկնաբանություններ, պրեզենտացիաներ և ցուցադրություններ:
4.3.10	ՀՄԳԳ.ԱՄՏԾ.ԾՐԳ.10	Ստեղծել հաշվարկային խնդիրներ լուծելու համար օգտագործվող նախատիպեր, ալգորիթմներ՝ հիմնվելով աշակերտի նախնական գիտելիքների և անձնական հետաքրքրությունների վրա:
4.3.11	ՀՄԳԳ.ԱՄՏԾ.ԾՐԳ.11	Ստեղծել թվային արտեֆակտներ/աշխատանքներ՝ օգտագործելով համակարգչային ծրագրի ներսում ընթացակարգեր, տվյալների և ընթացակարգերի համակցություններ կամ անկախ, բայց փոխկապակցված ծրագրեր:
4.3.12	ՀՄԳԳ.ԱՄՏԾ.ԾՐԳ.12	Նախագծել և մշակել հաշվարկային արտեֆակտներ/աշխատանքներ՝, աշխատելով թիմերով և օգտագործելով համագործակցության գործիքներ:
4.4	ՀՄԳԳ.ԱՄՏԾ.ԷՖԿ	Վերլուծել ալգորիթմի արդյունավետությունը և օգտագործման դեպքերը/սցենարները:
4.4.1	ՀՄԳԳ.ԱՄՏԾ.ԷՖԿ.1	Ճանաչել թեստավորման/ստուգման պարզ սցենարները:

		Սիստեմատիկորեն թեստավորել և կատարելագործել ծրագրերը՝ օգտագործելով բազմակողմանի թեստավորման սցենարների լայն ընտրանի:
4.4.2	ՀՄԳԳ.ԱՄՏԾ.ԷՖԿ.2	Հիմնավորել որոշակի հսկողական կառույցների (specific control structures) ընտրությունը, երբ առկա վտանգների և առավելությունների մեջ մտնում են ծրագրի իրականացման, ընթերցելու կարողության և դրա կատարողականին առնչվող խնդիրներ, և բացատրել կատարված ընտրությունների ու կայացված որոշումների առավելություններն ու թույլ կողմերը:
4.4.3	ՀՄԳԳ.ԱՄՏԾ.ԷՖԿ.3	Գնահատել տվյալների տարրերի կազմակերպման եղանակին և տվյալների պահպանման տեղին առնչվող առավելություններն ու վտանգները/թերությունները:
4.5	ՀՄԳԳ.ԱՄՏԾ.ՄՍՄ	Ստեղծել մոդելներ և սիմուլյացիաներ՝ ենթադրությունները ձևակերպելու, թեստավորելու, վերլուծելու և կատարելագործելու համար:
4.5.1	ՀՄԳԳ.ԱՄՏԾ.ՄՍՄ.1	Ստեղծել պարզ անվանված փոփոխականներ, որոնք ներկայացնում են տվյալների տարբեր տեսակներ, և դրանց որոշակի արժեքների վրա կատարել գործողություններ:
4.5.2	ՀՄԳԳ.ԱՄՏԾ.ՄՍՄ.2	Փաստաթղթավորել ծրագրերը, այնպես, որ լինի առավել դյուրին դրանց տրամաբանությանը հետևելը, թեստավորելը կամ դրանցում առկա սխալներն ուղղելը:
4.5.3	ՀՄԳԳ.ԱՄՏԾ.ՄՍՄ.3	Մշակել նախագծեր, որոնք տվյալներ հավաքելու և փոխանակելու նպատակով միավորում են համակարգչային սարքերի և ծրագրերի բաղադրիչները:
4.5.4	ՀՄԳԳ.ԱՄՏԾ.ՄՍՄ.4	Սիստեմատիկորեն ճանաչել/գտնել և ուղղել համակարգչային սարքերի և դրանց մասերի խնդիրները:
4.5.5	ՀՄԳԳ.ԱՄՏԾ.ՄՍՄ.5	Նախագծել և աստիճանաբար կամ իտերատիվ կերպով մշակել հաշվարկային արտիֆակտներ, որոնք գործնական միտում ունեն, անհատապես արտահայտվելու նպատակ կամ թիրախավորում են

		հասարակական խնդիր, ընդ որում այնպես, որ հրամաններ կատարելու համար օգտագործվեն իրադարձություններ կամ դեպքեր:
--	--	---

### 3.3 Հանրակրթական միջնակարգ ծրագրի «Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն» առարկայի վերջնարդյունքները

1	ՀՄԳ12.ՀՄՀ	ՀԱՄԱԿԱՐԳԻՉԸ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ
1.1	ՀՄԳ12.ՀՄՀ.ԱՊ	Պատշաճ գնահատել անվտանգության և ապահովության վտանգները, խնդիրների հետևանքները վերացնելու եղանակները, արդյունավետ պայքարել կիբեր բռնարարության կամ կովարարության դեմ:
1.1.1	ՀՄԳ12.ՀՄՀ.ԱՊ.1	Համեմատել սարքերը և տեղեկատվությունը չարտոնված հասանելիությունից պաշտպանության ծրագրավորողների կողմից կիրառվող եղանակները:
1.1.2	ՀՄԳ12.ՀՄՀ.ԱՊ.2	Բացատրել անվտանգությանն առնչվող այն խնդիրները, որոնցով պայմանավորված՝ ստեղծվում են կոմպրոմիսային/փոխզիջումային համակարգչային ծրագրեր:
1.1.3	ՀՄԳ12.ՀՄՀ.ԱՊ.3	Մշակել միջոցներ և ռազմավարություններ կիբեր բռնարարության և կովարարության դեմ պայքարելու համար:
1.1.4	ՀՄԳ12.ՀՄՀ.ԱՊ.4	Զարգացնել դրական ներկայություն վերամիջավայրում (օր.՝ թվային ռեզյումե, պորտֆոլիո, ներկայություն սոցիալական մեդիայում):
1.1.5	ՀՄԳ12.ՀՄՀ.ԱՊ.5	Ճանաչել տեխնոլոգիայի օգտագործման այն եղանակները, որոնք նպաստում են ցկյանս ուսումնառությանը:
1.1.6	ՀՄԳ12.ՀՄՀ.ԱՊ.6	Քննարկել հաշվողական տեխնոլոգիաների սոցիալական, տնտեսական և մշակութային ազդեցությունը:
1.2	ՀՄԳ12.ՀՄՀ.ԻՐՎ	Հասկանալ տեխնոլոգիա և տեղեկատվություն ստեղծելու և օգտագործելու իրավական հայեցակետերը:

1.2.1	ՀՄԳ12.ՀՄՀ.ԻՐՎ.1	Քննարկել և քննադատել այն օրենքներն ու կանոնակարգերը, որոնք ազդեցություն ունեն ծրագրային ապահովման մշակման և օգտագործման վրա:
1.2.2	ՀՄԳ12.ՀՄՀ.ԻՐՎ.2	Հասկանալ թվային աշխատանքներին առնչվող տեղական և միջազգային օրենքները և կանոնակարգերը և վերլուծել դրանց ազդեցությունը թվային գաղտնիության, անվտանգության, մտավոր սեփականության և ցանցային հասանելիության վրա:
1.3	ՀՄԳ12.ՀՄՀ.ԱՁԴ	Քննարկել տեխնոլոգիայի, օժանդակ տեխնոլոգիայի, տեխնոլոգիական մասնագիտությունների և կիբեր հանցագործությունների ազդեցությունը մարդկանց կյանքի, առևտրային գործունեության և հասարակության վրա:
1.3.1	ՀՄԳ12.ՀՄՀ.ԱՁԴ.1	Գնահատել հաշվողական արտեֆակտները/աշխատանքները և առաջարկել եղանակներ, որոնցով հնարավոր է առավելագույնի հասցնել հասարակության վրա դրանց դրական ազդեցությունը և նվազեցնել բացասականը:
1.3.2	ՀՄԳ12.ՀՄՀ.ԱՁԴ.2	Գնահատել հավասարության, հասանելիության ազդեցությունը գլոբալ աշխարհում հաշվողական ռեսուրսների բաշխվածության վրա:
1.3.3	ՀՄԳ12.ՀՄՀ.ԱՁԴ.3	Կանխատեսել, թե ինչպես կարող է էվոլյուցիա ապրել և էլ ավելի զարգանալ մեր մշակույթի որոշ ասպեկտներ հեղափոխած հաշվողական նորարարությունը:
2	ՀՄԳ12.ԹԳԾ	<b>ԹՎԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ</b>
2.1	ՀՄԳ.ԹԳԾ.ՕԳՏ	Գտնել և օգտագործել խնդիր լուծելու համար լավագույն թվային ռեսուրսները և գործիքները:
2.1.1	ՀՄԳ12.ԹԳԾ.ՕԳՏ.1	Համեմատել ծրագրավորման բազմաթիվ լեզուները և քննարկել, թե ինչպես են դրանց առանձնահատկությունները դարձնում դրանք առավել հարմար տարբեր խնդիրներ լուծելու համար:
2.2	ՀՄԳ12.ԹԳԾ.ՀԱՂ	Հաղորդակցվել, համագործակցել և բարելավել առցանց ներկայությունը:

2.2.1	ՀՄԳ12.ԹԳԾ.ՀԱՂ.1	Խմբային ծրագրավորման նախագծերում օգտագործել տարբերակի հսկողության համակարգեր, ծրագրավորման ինտեգրված միջավայրեր (integrated development environments), ինչպես նաև համագործակցության գործիքներ և գործելակերպ (կողի փաստաթղթավորում):
2.3	ՀՄԳ12.ԹԳԾ.ՕՊՏ	Կատարել հետազոտություն թվային գործիքներով, տվյալներով և տեղեկատվության օգնությամբ անհատական աշխատանքը և համագործակցությունն օպտիմալացնելու նպատակով:
2.3.1	ՀՄԳ1212.ԹԳԾ.ՕՊՏ.1	Գնահատել համակարգչային ծրագրի առանցքային որակական հատկանիշներն այնպիսի գործընթացների միջոցով, ինչպիսին է կողի վերանայումը (code review):
3	ՀՄԳ12.ՍՐՔ	<b>ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՍԱՐՔԵՐ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ</b>
3.1	ՀՄԳ12.ՍՐՔ.ԱՇԽ	Հասկանալ, թե ինչպես են սարքերն աշխատում, հատուկ առաջադրանքների համար ընտրել և օգտագործել համապատասխան հաշվողական սարքերի/ծրագրերի համադրություն:
3.1.1	ՀՄԳ12.ՍՐՔ.ԱՇԽ.1	Նկարագրել, թե ինչ եղանակներով են հաշվողական համակարգերը սարքերի բաղադրիչների միջոցով իրագործում տրամաբանությունը, ներմուծումն ու արտահանումը:
3.1.2	ՀՄԳ12.ՍՐՔ.ԱՇԽ.2	Դասակարգել օպերացիոն համակարգի ծրագրի դերերը:
3.3	ՀՄԳ.ՍՐՔ.ՑՆՑ	Հասկանալ, թե ինչպես են հաղորդակցվում ցանցերը և գնահատել դրանց թույլ կողմերը:
3.3.1	ՀՄԳ12.ՍՐՔ.ՑՆՑ.1	Նկարագրել այն խնդիրները, որոնք ազդում են ցանցի գործունեության վրա (օր:՝ թողունակությունը,

		ծանրաբեռնվածությունը, ուշացումը և տոպրոգիան):
<b>4</b>	<b>ՀՄԳ12.ԱՄՏԾ</b>	<b>ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԵՎ ԱԼԳՈՐԻԹՄԻԿ ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ</b>
<b>4.1</b>	<b>ՀՄԳ12.ԱՄՏԾ.ՌԵՊ</b>	Ընդհանրացման, մասնատման և արստրակցիայի միջոցով ստեղծել նոր ռեպրեզենտացիա/ներկայացուցչություն, այդ թվում տվյալների ռեպրեզենտացիա:
<b>4.1.1</b>	<b>ՀՄԳ12.ԱՄՏԾ.ՌԵՊ.1</b>	Օգտագործել տվյալների վերլուծության գործիքներ և տեխնիկաներ՝ բարդ համակարգերը ներկայացնող/ռեպրեզենտացնող տվյալներում նմանություններ և օրինաչափություններ վեր հանելու համար:
<b>4.1.2</b>	<b>ՀՄԳ12.ԱՄՏԾ.ՌԵՊ.2</b>	Վերլուծել լայնամասշտաբ հաշվողական խնդիր և վեր հանել ընդհանրացմանը ենթակա նմանություններ ու օրինաչափություններ, որոնք կարող են լուծման համար կիրառելի լինել:
<b>4.2</b>	<b>ՀՄԳ12.ԱՄՏԾ.ՄՈԴ</b>	Իրական կյանքի դեպքերի/իրադարձությունների ռեպրեզենտացիան ընդհանրական մոդելների միջոցով:
<b>4.2.1</b>	<b>ՀՄԳ12.ԱՄՏԾ.ՄՈԴ.1</b>	Նկարագրել, թե ինչպես է արհեստական բանականությունն առաջ մղում բազմաթիվ համակարգչային ծրագրերի և ֆիզիկական համակարգերի զարգացումը:
<b>4.3</b>	<b>ՀՄԳ12.ԱՄՏԾ.ԾՐԳ</b>	Գրել և կատարել սխալների ուղղում ստրուկտուրացված ծրագրավորման լեզուների ալգորիթմների մեջ՝ կիրառելով իտերատիվ/կրկնվող դիզայնի և խնդիրների լուծման սկզբունքները, օգտագործելով ժամանակակից ծրագրավորման լեզուների տիրապետման հմտությունները:
<b>4.3.1</b>	<b>ՀՄԳ12.ԱՄՏԾ.ԾՐԳ.1</b>	Օգտագործել և հարմարեցնել դասական ալգորիթմները հաշվարկային խնդիրներ լուծելու նպատակով:
<b>4.3.2</b>	<b>ՀՄԳ12.ԱՄՏԾ.ԾՐԳ.2</b>	Նկարագրել ռեկուրսիվ/վերադարձող ալգորիթմի կատարման/գործարկման ընթացքը/քայլերի հաջորդականությունը:
<b>4.3.3</b>	<b>ՀՄԳ12.ԱՄՏԾ.ԾՐԳ.3</b>	Կառուցել խնդիրների լուծումներ՝ օգտագործելով աշակերտների ստեղծած բաղադրիչներ, ինչպիսիք են ընթացակարգերը, մոդուլները և օբյեկտները:

4.3.4	<b>ՀՄԳ12.ԱՄՏԾ.ԾՐԳ.4</b>	Ցուցադրել կողի վերաօգտագործումը՝ ստեղծելով ծրագրային լուծումներ, որոնց համար օգտագործվել են գրադարաններ և հավելվածային ծրագրի միջերես (Application Program Interface (API)):
4.3.5	<b>ՀՄԳ12.ԱՄՏԾ.ԾՐԳ.5</b>	Մշակել և օգտագործել թեստային սցենարների շարք՝ վավերացնելու, որ ծրագիրը կատարում է նախագծման մասնագրերով (specifications) նախատեսված գործողությունները:
4.3.6	<b>ՀՄԳ12.ԱՄՏԾ.ԾՐԳ.6</b>	Մշակել համակարգչային ծրագրեր բազմատեսակ հաշվարկային հարթակների (multiple computing platforms) համար:
4.3.7	<b>ՀՄԳ12.ԱՄՏԾ.ԾՐԳ.7</b>	Փոփոխել գոյություն ունեցող ծրագիրը՝ ավելացնելով լրացուցիչ ֆունկցիոնալություն և քննարկել դրա նախատեսված/մտադրված և չնախատեսված ազդեցությունները (օր.՝ մեկ այլ ֆունկցիոնալության վերացումը կամ փջանալը):
4.4	<b>ՀՄԳ12.ԱՄՏԾ.ԷՖԿ</b>	Վերլուծել ալգորիթմի արդյունավետությունը և օգտագործման դեպքերը/սցենարները:
4.4.1	<b>ՀՄԳ12.ԱՄՏԾ.ԷՖԿ.1</b>	Գնահատել ալգորիթմները դրանց արդյունավետության, ճշգրտության և պարզության տեսանկյունից:
4.4.2	<b>ՀՄԳ12.ԱՄՏԾ.ԷՖԿ.2</b>	Համեմատել և հակադրել տվյալների հիմնարար կառուցվածքները և դրանց կիրառելիությունը:
4.5	<b>ՀՄԳ12.ԱՄՏԾ.ՄՍՍ</b>	Ստեղծել մոդելներ և սիմուլյացիաներ՝ ենթադրությունները ձևակերպելու, թեստավորելու, վերլուծելու և կատարելագործելու համար:
4.5.1	<b>ՀՄԳ12.ԱՄՏԾ.ՄՍՍ.1</b>	Ընտրել տվյալների հավաքման գործիքներ և մեթոդներ՝ գեներացնելու/ստեղծելու տվյալների այնպիսի խմբեր, որոնք հիմնավորում են պնդումը կամ առավել փաստարկված են հաղորդում տեղեկատվությունը:



4.5.2	ՀՄԳ12.ԱՄՏԾ.ՄՍՄ.2	Գնահատել մոդելների և սիմուլյացիաների կարողությունը՝ ենթադրությունների առավել կատարյալ տարբերակները թեստավորելու և պաշտպանելու համար:
4.5.3	ՀՄԳ12.ԱՄՏԾ.ՄՍՄ.3	Պլանավորել և մշակել ծրագրեր լայն լսարանների համար՝ օգտագործելով ծրագրային լուծումների կյանքի ցիկլի գործընթացը (software life cycle process):

#### 4. Բովանդակության կառուցման հիմնական սկզբունքները

Առարկան կառուցված է հիմնական գիտակարգային գաղափարների ուղղությունների հիման վրա, որոնք սկսում են ուսումնասիրվել 2րդ դասարանից և շաունակվում են մինչև 12րդ դասարան: Դրանք են՝

- (1) հաշվողականություն (Computing) ու հասարակություն,
- (2) թվային գործիքներ ու համագործակցություն,
- (3) հաշվողական համակարգեր և
- (4) հաշվարկային (Computational) և ալգորիթմիկ մտածողություն:

Յուրաքանչյուր ուղղություն այնուհետև բաժանվում է թեմաների, որոնք բաղկացած են համապատասխան չափորոշիչներից: Առարկայի ուսումնառության գործողությունները ինտեգրված են չափորոշիչների ողջ երկայնքով և օգնում են սահմանելու աշխատանքի կատարման կամ առաջադիմության այնպիսի սկնկալիքներ, որոնք հստակեցնում են, թե ինչ պետք է իմանան և ինչ պետք է կարողանան անել աշակերտները:

Տարբեր ուղղություններում ներառված չափորոշիչները երբեմն կարող են սերտորեն շաղակցված լինել: Դպրոցական յուրաքանչյուր մակարդակում և յուրաքանչյուր ուղղության մեջ ներառված չափորոշիչները ցուցադրում են իմացական բարդության լայն շրջանակ, ինչպիսին որ առկա է Բլումի վերանայված տաքսոնոմիայում՝ հիշելու, ըմբռնելու, կիրառելու, վերլուծելու, գնահատելու և ստեղծելու իմացական կարողության մակարդակներում:

#### Հաշվողականությունը և հասարակությունը (ՀևՀ)

Աշխատանքը համակարգչային տեխնոլոգիաներով և դրանց ստեղծումը ազդեցություն ունեն բոլոր մարդկանց վրա և համընդհանուր հետևանքներ այնպիսի ոլորտների վրա, ինչպիսիք են հեռահաղորդակցությունը, օգնող-օժանդակող տեխնոլոգիաները, սոցիալական ցանցերը և, վերջապես, տնտեսությունն ամբողջությամբ: Հասարակությունն արժևորում է հաշվողական և համակարգչային ոլորտում ստեղծված նորարարությունները: Հաշվողականությունն առանցքային բաղադրիչ է բազմաթիվ մասնագիտությունների համար, իսկ թվային մեդիայի բովանդակությունն ընդհանրապես ազդեցություն է թողնում բոլոր քաղաքացիների և հասարակության վրա: Ինտերնետի, մեդիայի, սարքերի հասանելիության աշխարհում առկա անհավասարությունները կարող են հանգեցնել արդարության և իշխանության անհավասարակշռված պայմանների: Մյուս կողմից՝ անձնական գաղտնիության, էթիկայի, անվտանգության և հեղինակային իրավունքի պահպանման սկզբունքները կարող են ներգործել թվային ապահովության և անվտանգության վրա, ինչպես և ազդում են միջանձնային և համայնքների ու հասարակությունների փոխհարաբերությունների վրա:

### **Թվային գործիքներ և համագործակցություն (ԹԳՀ)**

Թվային գործիքները համակարգչային ծրագրային լուծումներ են, որոնք թվային ձևաչափով տվյալներ են արտադրում, գործածում կամ պահպանում են (օրինակ՝ տեքստային խմբագրիչներ, նկարչական ծրագրեր, նկարների/տեսանյութերի/երաժշտության խմբագրիչներ, սիմուլյատորներ, համակարգչային դիզայնի կամ հրատարակչական ծրագրեր): Թվային գործիքները կարևոր են հետազոտություն իրականացնելու, հաղորդակցվելու, համագործակցելու և սոցիալական, աշխատանքային կամ անձնական միջավայրեր ստեղծելու համար: Թվային գործիքների արդյունավետ օգտագործումը մեծ ազդեցություն կարող է ունենալ դպրոցում կամ աշխատանքում հաջողության հասնելու համար:

### **Հաշվողական համակարգեր (ՀՇՀՄ)**

Հաշվողական համակարգերը պարունակում են բաղադրիչներ, ինչպիսիք են սարքերը, ծրագրային ապահովումները, միջերեսները և ցանցերը, որոնց միջոցով միանում են համայնքներ, սարքեր, մարդիկ և ծառայություններ: Հաշվողական համակարգերը մարդ-համակարգիչ գործընկերության միջոցով մարդկանց ստեղծելու, համագործակցելու և սովորելու հնարավորություն են տալիս: Բազմաթիվ հաշվողական համակարգերի ճիշտ դիզայնը/մշակումը մարդկանց սխալները

վերացնելու, նոր համակարգեր ստեղծելու և ընդարձակելու հնարավորություն է տալիս: Հաշվողական համակարգերը անընդհատ գործելու համար պահանջում են համակարգչում կամ ծրագրերում առաջացող խնդիրների լուծում և ճիշտ շահագործում:

### **Հաշվողական կամ ալգորիթմիկ մտածողություն (ՀԱՄ)**

Հաշվողական կամ ալգորիթմիկ մտածողությունը խնդիր լուծելու գործընթացի տեսակ է, որը պահանջում է մարդուց մտածել այնպիսի նոր ձևով, որը հնարավոր է դարձնում խնդիր լուծելու կամ լուծում ստեղծելու համար օգտագործել համակարգիչ: Համակարգիչների արագ և ճշգրիտ կերպով ծրագիր աշխատեցնելու կարողությունը, խնդիրներ լուծելու, դրանք մշակելու և սահմանելու նոր հնարավորություններ է ստեղծում: Հաշվարկային կամ ալգորիթմիկ մտածողությունը բնորոշվում է հետևյալ պնդումներով.

- Մտքերն ու խնդիրները հնարավոր է այնպես վերլուծել, մոդելավորել և վերացարկել, որ մարդիկ և համակարգիչները կարողանան միասին աշխատել դրանց ուղղությամբ:
- Մշակել այնպիսի լուծումներ և ալգորիթմներ, որոնց կիրառությամբ հնարավոր է օգտագործել այդ խնդիրների արեստրահված ռեսուրսները (ներառյալ տվյալների կառուցվածքը):
- Ճանաչել/գտնել և գործարկել լուծումներ (օրինակ՝ ծրագրեր գրելու միջոցով):

## **5. Ուսումնական գործընթացի ուսումնամեթոդական և նյութատեխնիկական աջակցության նկարագրությունը**

### **5.1 Սովորողների հետ աշխատանքի հիմնական մեթոդների և տեխնոլոգիաների նկարագրությունը**

Արդյունավետ ծրագիրը հիմնված է զգուշությամբ ընտրված այնպիսի բովանդակային չափորոշիչների վրա, որոնք հստակ են, դիպուկ, կենտրոնացված են և մատուցվում են որոշակի համաձայնեցված հաջորդականությամբ:

Թեմաների հաջորդականությունը և դրանց ուսումնառությունը պետք է հիմնված լինի մանկավարժական և մեթոդական այն փորձի և գիտելիքների վրա, որոնք հաշվի են առնում, թե

ինչպես են ժամանակի ընթացքում զարգանում սովորողների գիտելիքները, հմտություններն ու ըմբռնումը: Այն, թե ինչ և ինչպես ենք աշակերտներին սովորեցնում, պետք է հիմնված լինի ոչ միայն թեմաների պարզ ցանկի վրա, այլև արտացոլի այն առանցքային գաղափարները, որոնք կանխորոշում են, թե ինչպես է այս ոլորտում կառուցված գիտելիքային բազան, ինչպես է այն ստեղծվում և զարգանում: Սովորողներին պետք է խնդրել կիրառել իրենց սովորածը և դրա միջոցով ցույց տալ, թե ինչպես են իրենք մտածում և ընկալում բովանդակությունը:

Ստեղծարարությունը և խնդիրների լուծումը հաշվողական մտածողության և այս առարկայի ընդհանուր ծրագրի արդյունավետ իրականացման կարևորագույն առանձնահատկություններն են: Հաշվողական մտածողության հմտությունները պահանջում են, տարբեր խնդիրներ լուծելով, փորձարարության զարգացում: Բացի այդ, դրանք պահանջում են սարքերի, գործիքների, ծառայությունների, տեխնիկաների և դրանց աշխատանքի հիմքում ընկած սկզբունքների հիմնովին ընկալում: Զինվելով այս առավել խորքային գիտելիքով՝ աշակերտներն այնուհետև կարող են ճկուն կերպով օգտագործել առարկայի շրջանակում ձեռք բերվող հմտությունները նոր արդյունքներ ստեղծելու, տարբեր խնդիրներ լուծելու, ինչպես նաև միևնույն խնդրի լուծման համար այլընտրանքային եղանակներ գտնելու համար: Խնդիրների լուծումը պահանջում է մտածել՝ ելնելով սեփական փորձից, համառություն, այլոց գաղափարներից սովորելու կարողություն և քննադատական հայացքով սեփական աշխատանքին անդրադառնալու կարողություն: Աշակերտները պետք է կարողանան ներկայացնել իրենց գաղափարները և համագործակցել մյուսների հետ: Նրանք պետք է կարողանան վերլուծել իրավիճակը և հիմնավորել իրենց կողմից առաջարկվող լուծումները:

Թվային գործիքների, հաշվողական սարքերի և ծառայությունների ուսումնական միջավայրում ինտեգրվելուն զուգընթաց և աշակերտների՝ գիտելիք և հմտություն ստանալուն, դրանք վերափոխելուն ու նորը ստեղծելուն համընթաց՝ բացվում են սովորելու նոր հնարավորություններ: Շարժուն երկրաչափական ապլետները (ապլետը շատ փոքր ծրագիր է, որը կատարում է մեկ կամ մի քանի պարզ գործողություն), օրինակ, օգնում են աշակերտներին տեսանելի դարձնել և ըմբռնել բարդ մաթեմատիկական գաղափարները: Սիմուլյացիոն կամ մոդելավորող ծրագրերը հնարավորություն են տալիս աշակերտներին հետազոտելու իրական կյանքում հանդիպող խնդիրների մոդելներ, ինչպիսիք են կլիմայի փոփոխությունը և բնակչության աճը:

Խնդիրներ ստեղծելու և դրանք լուծելու հաջողված փորձերը եռանդ և մեծ հետաքրքրություն են առաջացնում: Աշակերտները սովորում են լուծել առօրյա կյանքում, հասարակության մեջ նաև ապագա աշխատավայրում առաջացող խնդիրներ:

## **5.2 Առարկայի դասավանդման համար անհրաժեշտ նյութատեխնիկական աջակցությունը**

Համակարգչային գիտություն և թվային գրագիտություն առարկան արդյունավետ կերպով ուսումնառելու համար սովորողներին անհրաժեշտ է համակարգչային դասասենյակ, որտեղ համակարգիչների նվազագույն քանակը պետք է մեկ համակարգչով առավելագույնը երկու սովորողների աշխատելու հնարավորություն տա: Վերջնարդյունքները և օրինակելի ծրագրերը որևէ կերպ չեն պարտադրում օգտվել վճարովի ծրագրային փաթեթներից: Ներկայացվող վերջնարդյունքներին հնարավոր է հասնել ինչպես բաց աղբյուրի ծրագրային ապահովումների, այնպես էլ բազմատեսակ առցանց գործիքների ու տեխնոլոգիական ուսումնական հարթակներում առկա անվճար միջավայրերով:

Տարրական ծրագրի միայն սահմանափակ քանակությամբ դասերն են պահանջում համակարգչային տեխնիկայի հետ աշխատանք: Սակայն, ծրագրի վերջնարդյունքներին հասնելը, հնարավոր է նաև առանց դասարանում համակարգիչների օգտագործման:

Հիմնական և միջնակարգ մակարդակներում, ծրագրի իրագործումը, ի լրումն համակարգչային դասասենյակի, պահանջում է նաև էլեկտրոնային սարքերի, դրանցով աշխատելու գործիքների և նյութերի և դետալների հավաքածու, որոնք կարող են առանձին հատկացված լինել առարկայի դասավանդման համար, կամ կազմել ֆիզիկայի լաբորատոր սարքերի մի մասը:

## **5.3 Ուսումնական գործունեության տեսակները**

Ուսումնական գործունեության տեսակները նպաստում են այնպիսի վերաբերմունքի և հմտությունների յուրացմանը, որոնք աշակերտը կիրառելու է թվային գրագիտության և համակարգչային գիտության խնդիրներ լուծելիս: Աշակերտները, տարեցտարի կրթական ծրագրով առաջ շարժվելով, պետք է անցնեն ավելի ու ավելի բարդ ուսումնական գործունեության տեսակների: Արդյունավետ դասավանդումը զուգորդում է ուսումնառության գործողությունները առարկայի բովանդակության հետ և տալիս աշխատանքի կատարման առավել հարուստ համատեքստ:

Ուսումնական գործունեության տեսակների հիմքում ընկած են ինչպես «Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն» առարկային հատուկ 7 տեսակները, որոնք ներկայացված են ստորև, այնպես էլ գիտության և ճարտարագիտության 8 պրակտիկաները (հմտություններն ու աշխատանքի եղանակները), որոնց հակիրճ նկարագրությունը տրված է վերջում: Ուսումնական գործունեության տեսակների այս երկու խմբերն առավել մանրամասն կներկայացվեն ուսուցչական ձեռնարկներում և կներառեն ըստ դպրոցական մակարդակների պրակտիկաների կիրառման հստակ գործողություններ և օրինակներ:

#### 1. Ստեղծել

Թվային գրագիտությունը և համակարգչային գիտությունը գիտակարգեր են, որոնցում աշակերտը ցուցադրում է իր ստեղծարար մտածողությունը, կառուցում է գիտելիք և տեխնոլոգիան օգտագործելով՝ մշակում է նորարարական աշխատանքներ (արտիֆակտներ) և գործընթացներ: Աշակերտները ներգրավվում են հաշվողականության խնդիրներում ստեղծարար առումով՝ նախագծելով և մշակելով հետաքրքիր հաշվողական արտիֆակտներ և կիրառելով յուրացրած մեթոդները խնդիրները ստեղծագործաբար լուծելու համար:

#### 2. Միացնել

Հաշվողականության ոլորտում զարգացումները շատ ավելի մեծ ազդեցություն ունեն հասարակության վրա և բազմաթիվ կարևոր նորարարությունների նախադրյալ են դարձել: Այդ զարգացումներն առնչվում են ինչպես անհատ մարդկանց, հասարակությանը, առևտրային շուկաներին, այնպես էլ նորարարություններին: Աշակերտներն ուսումնասիրում են այդ ազդեցությունները և միմյանց միացնում հաշվողական տարբեր գաղափարներ:

#### 3. Աբստրահում/վերացարկում

Հաշվողական մտածողությունը պահանջում է հասկանալ և կիրառել տարբեր մակարդակների վերացարկում: Աշակերտները կիրառում են վերացարկումը մոդելներ կառուցելու և տեղեկատվությունը դասակարգելու ու կառավարելու նպատակով:

#### 4. Վերլուծել

Աշակերտները կիրառում են քննադատական մտածողության և վերլուծական հմտությունները տեղեկատվությունը, տեղեկատվական աղբյուրները և իրենց ու այլոց ստեղծած հաշվողական աշխատանքները գտնելու, գնահատելու և վերլուծելու համար:

## 5. Հաղորդակցվել

Հաղորդակցությունը երկու և ավելի մարդկանց միջև տեղեկատվության արտահայտումն ու փոխանակումն է: Հաղորդակցությունը ներառում է գրավոր և բանավոր ձևեր, ինչպես նաև առարկայական ռեպրեզենտացիաներ, որոնք լինում են գրաֆիկների, վիզուալիզացիաների, ներկայացումների, պատմությունների և վերլուծությունների տեսքով: Արդյունավետ հաղորդակցությունը ճշգրիտ է, պարզ, հակիրճ, համոզիչ և պատասխանատու:

## 6. Համագործակցել

Մարդիկ, համագործակցելով թիմերով, նույն վայրում կամ աշխարհով մեկ, հաճախ կարող են հասնել ավելիին, քան առանձին առանձին աշխատելով: Արդյունավետ համագործակցությունը հիմնվում է տարբեր տեսակետների, հմտությունների, գիտելիքների և վերաբերմունքի վրա, որով արձագանքում են թիմի անդամները բարդ, հաճախ հստակ պատասխան չունեցող խնդիրներով զբաղվելիս կամ նպատակ ունենալիս:

## 7. Հետազոտել

Աշակերտները կիրառում են թվային գործիքներ, տեղեկատվությունը օրինական, ապահով և էթիկապես ճիշտ կերպով հավաքելու, գնահատելու և օգտագործելու համար:

### 5.4 Գիտության և ճարտարագիտության պրակտիկաները

Ի լրումն առարկայի ուսումնական գործունեության տեսակների, առարկայի արդյունավետ դասավանդումը մեծապես կարող է օգտվել Գիտության և ճարտարագիտության պրակտիկաներից, որոնք մշակվել են ԱՄՆ-ում «Նոր սերնդի գիտության ստանդարտների» մշակման և զարգացման ծրագրի շրջանակում:

Դասավանդման և ուսումնառության գործողությունները, կամ կիրառվող պրակտիկաները նկարագրում են գիտնականների ու ճարտարագետների կողմից կիրառվող այնպիսի վարքագծեր/աշխատանքի եղանակներ, որոնք դրսևորվում են այն ժամանակ, երբ նրանք հետազոտում են, կառուցում են բնության աշխարհի մասին մոդելներ և տեսություններ: Պրակտիկա բառը սույն փաստաթղթի համատեքստում նշանակում է աշխատանքի եղանակների և հմտությունների ամբողջություն:

## 1. Հարցադրումներ անել և խնդիրներ սահմանել

Գիտության պրակտիկան ենթադրում է ձևակերպել և կատարելագործել այնպիսի հարցեր, որոնք օգնում են մտածելու և գտնելու պատասխաններ այն մասին, թե ինչպես ենք մենք նկարագրում և բացատրում այն, թե ինչպես է բնական և մարդու կողմից ստեղծված աշխարհը կառուցված և թե ինչն է հնարավոր էմպիրիկ եղանակով ստուգել:

## 2. Մշակել և օգտագործել մոդելներ

Գիտության և ճարտարագիտության այս պրակտիկան առաջարկում է օգտագործել և կառուցել մոդելներ, որոնք հանդես են գալիս որպես գաղափարների և բացատրությունների ներկայացման համար օգտակար գործիքներ: Այդ գործիքները ներառում են սխեմաներ, պատկերներ, ֆիզիկական նմուշներ, մաթեմատիկական ներկայացումներ, անալոգներ և համակարգչային սիմուլյացիաներ:

## 3. Պլանավորել և իրականացնել հետազոտություններ

Գիտնականներն ու ճարտարագետները պլանավորում և իրականացնում են հետազոտություններ դաշտային պայմաններում կամ լաբորատորիաներում, անհատապես կամ միմյանց հետ համագործակցությամբ: Նրանց հետազոտությունները համակարգային են և պահանջում են հստակեցնել, թե ինչն են համարելու տվյալ, և գտնել փոփոխականներն ու պարամետրերը:

## 4. Վերլուծել և մեկնաբանել տվյալներ

Գիտական հետազոտություններից ստացվում են տվյալներ, որոնք անհրաժեշտ է վերլուծել՝ դրանցից իմաստ քաղելու նպատակով: Քանի որ տվյալների օրինաչափությունները և միտումները միշտ չէ, որ ակնհայտ են լինում, գիտնականներն օգտագործում են մի շարք գործիքներ, ներառյալ տվյալների վերածումը աղյուսակների, գրաֆիկական մեկնաբանությունները, վիզուալիզացիաներն ու վիճակագրական վերլուծությունները, որոնց օգնությամբ հնարավոր է դառնում գտնել տվյալների կարևոր հատկություններ և օրինաչափություններ: Գիտնականները գտնում են



հետազոտության մեջ սխալների աղբյուրները և հաշվարկում են արդյունքների ճշգրտության աստիճանը: Ժամանակակից տեխնոլոգիաները մեծաքանակ տվյալների հավաքումն ավելի դյուրին են դարձնում՝ այդպիսով ստեղծելով վերլուծությունների համար օգտագործվող երկրորդական աղբյուրներ:

## **5. Օգտագործել մաթեմատիկական և հաշվողական մտածողություն**

Ե՛վ գիտության, և՛ ճարտարագիտության ոլորտներում մաթեմատիկական և հաշվողականությունը հիմնարար (ֆունդամենտալ) գործիքներ են, որոնցով ներկայացվում են ֆիզիկական փոփոխականներն ու դրանց փոխկապվածությունները: Դրանք օգտագործվում են մի շարք առաջադրանքներում, ինչպիսիք են սիմուլյացիաների կառուցումը, տվյալների վիճակագրական վերլուծությունը և քանակական կախվածությունների հայտնաբերումը, արտահայտումը և կիրառումը:

## **6. Ձևակերպել բացատրություններ և նախագծել լուծումներ**

Գիտության արդյունքը բացատրություններն են, իսկ ճարտարագիտության արդյունքը՝ լուծումները:

## **7. Ներգրավվել ապացույցից բխող փաստարկելու/հիմնավորելու մեջ**

Փաստարկումը/հիմնավորումը գործընթաց է, որի միջոցով հասնում ենք բացատրությունների և լուծումների:

## **8. Ստանալ, գնահատել և հաղորդել տեղեկատվություն**

Գիտնականներն ու ճարտարագետները պետք է կարողանան հստակ և համոզիչ հաղորդել իրենց հղացած գաղափարներն ու մեթոդները: Անհատապես կամ խմբերով գաղափարներ քննադատելն ու հաղորդելը խիստ կարևոր մասնագիտական գործունեություն է:

### **5.5 Համընդհանուր խաչվող հասկացություններ**

Խաչվող հասկացությունները առանցքային գաղափարներ են, որոնք ընդհանրական են տարբեր գիտությունների համար և օգնում են սովորողներին միավորելու տարբեր առարկաներից ձեռք բերած գիտելիքները աշխարհի մասին մեկ ամբողջական պատկերացման շրջանակներում:

Դրանք պետք է մեծ ուշադրության արժանանան դպրոցի բոլոր աստիճաններում, բոլոր առարկաների, այդ թվում՝ «Բնագիտություն» առարկայի ուսուցման ժամանակ:

Առանձնացվում են յոթ այդպիսի առանցքային գաղափարներ:

### 1. Օրինաչափություններ:

Դրանք հանդիպում են ամենուր, կանոնավոր կառուցվածքներում, կրկնվող պատահարներում և հարաբերություններում, օրինակ, ծաղիկների, փաթիլների կառուցվածքում, տարվա եղանակների հերթականության մեջ: Համապատասխան մոդելները առաջին քայլն են հանդիսանում պատասխանելու այն հարցին, թե ինչպես են առաջանում դրանք: Օրինաչափությունների ճանաչողության առաջին քայլերից մեկը դասակարգումն է, որն իրականացվում է նմանությունների ու տարբերությունների բացահայտման արդյունքում:

### 2. Պատճառ և հետևանք, մեխանիզմ և կանխատեսում:

Գիտության շատ հարցեր վերաբերում են նրան, թե ինչու և ինչպես է այն տեղի ունենում:

Ցանկացած նախնական պատասխան կամ վարկած, որ A-ն առաջ է բերում B-ն, պահանջում է A-ն B-ին կապող փոխազդեցության որոշակի շղթայի կառուցում: Օրինակ, որ հիվանդությունները կարող են փոխանցվել համան միջոցով, սկզբնական շրջանում բժիշկներն ընդունում էին թերահավատորեն, քանի որ բացակայում էր որևէ ճշմարտանման մեխանիզմ: Այսօր վարակիչ հիվանդություններ ասելով հասկանում են վարակված և առողջ մարդկանց միջև որոշակի միկրոօրգանիզմների (վիրուսներ, բակտերիաներ) փոխանցում:

### 3. Մասշտաբ, համամասնություն, քանակ:

Կարևոր է գիտակցել, որ համակարգերը, գործընթացները տարբերվում են իրենց չափերով (օրինակ՝ բջիջ, երկրագունդ, գալակտիկա), ժամանակամիջոցներով (օրինակ՝ նանովայրկյան, ժամ, հազարամյակ), նրանցով անցնող էներգիայի քանակությամբ (օրինակ՝ լամպ, էլեկտրական ցանց, Արեգակ), ինչպես նաև այդ տարբեր մեծությունների մասշտաբների հարաբերությամբ:

4. Համակարգեր և համակարգերի մոդելներ:

Բնական աշխարհը շատ մեծ և բարդ է այն միանգամից և ամբողջապես ուսումնասիրելու համար:

Դրա համար այն ուսումնասիրում են մաս առ մաս: Ուսումնասիրության միավորը համակարգն է:

Համակարգը միմյանց հետ կապված օբյեկտների մեկ ամբողջություն է:

Համակարգը կարող է կազմված լինել, օրինակ, օրգաններից, մեքենաներից, տարրական մասնիկներից, գալակտիկաներից: Համակարգն ունի սահմաններ, բաղադրիչներ, ռեսուրսներ, հոսքեր, հետադարձ կապ: Չնայած ցանկացած իրական համակարգ փոխազդում և կախված է այլ համակարգերից, սակայն սովորաբար այն ուսումնասիրելու համար հարկ է լինում մեկուսացնել մնացած համակարգերից և ուսումնասիրել առանձին:

5. Էներգիա և նյութ, հոսքեր, ցիկլեր, պահպանություն:

Գիտության կարևորագույն ձեռքբերումներից մեկն այն է, որ ցանկացած համակարգում որոշ

մեծություններ կարող են փոփոխվել միայն համակարգից դուրս եկող կամ մտնող հոսքերի

արդյունքում: Պահպանման նման օրենքները սահմանափակումներ են դնում համակարգում

ընթացող երևույթների վրա, անկախ համակարգի տեսակից: Դա վերաբերում է էներգիային և

նյութին: Էներգիայի և նյութի հաղորդումը էական նշանակություն ունի համակարգի

գործունեության համար:

6. Կառուցվածք և գործառույթ:

Գործառույթը կարելի է բացատրել կառուցվածքով, իսկ կառուցվածքը կարելի է բացատրել՝

ելնելով գործառույթից: Բնական և արհեստական համակարգերի գործունեությունը կախված է

համակարգը կազմող մասերի փոխադարձ կապերից: Մասշտաբի իմացությունը կարևոր է

իմանալու համար, թե ինչ երևույթներ են կարևոր համակարգի այս կամ այն որակը ապահովելու

համար: Օրինակ, գազերի ճնշումը բացատրելու համար կարևոր չի դիտարկել ներմոլեկուլային

կառուցվածքը, սակայն այն կարևոր է հասկանալու համար, թե հաստատուն ծավալի դեպքում

ինչո՞ւ ճնշման և ջերմաստիճանի հարաբերությունը տարբեր է տարբեր գազերի համար:

7. Կայունություն և փոփոխություն:

Բնական գիտությունները և մաթեմատիկական ուսումնասիրում են, թե ինչպես են տեղի ունենում

փոփոխությունները բնության մեջ, տեխնիկայում: Կայունությունը և հաստատունությունը նույնպես

հանդիսանում են դրանց ուսումնասիրության առարկան:

Կայունությունը վիճակ է, որի ժամանակ համակարգի որոշ ասպեկտներ անփոփոխ են մնում:  
 Կայունությունը նշանակում է, որ փոքր խտտորումների դեպքում համակարգը վերադառնում է իր սկզբնական վիճակին: Կայունության ամենապարզ վիճակը ստատիկ հավասարակշռությունն է (օրինակ՝ պատին հենված աստիճանը):

**6. Ժամաքանակի բաշխումը ըստ դասարանների**

Դասարան	Դասաժամ (հիմնական)	Դասաժամ (խորացված)
2	34	
3	34	
4	34	
5	34	
6	34	
7	34	
8	34	
9	34	
10	34	102
11	34	102
12	34	102

**7. Ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքների գնահատումը**

«Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն» առարկայի շրջանակում աշակերտների ուսումնառության գնահատումը պետք է լինի բազմազան ձևերով, որոնցով պայմանավորված կլինի նաև դասավանդման և ուսումնառության գործընթացը:

Գնահատումն արտացոլում է դասարանային աշխատանքի արդյունքները և ցույց է տալիս աշակերտի ուսումնառության այն վերջնարդյունքները, որոնք հիմնված են գիտելիքի և աշխատանքի կատարման (performance) նպատակների վրա: Սույն չափորոշիչներում ներկայացված վերջնարդյունքների շարքը առարկայի գիտելիքի և կատարողականի նպատակներ

սահմանելու գլխավոր սկզբնաղբյուրն է: Գնահատումն օգնում է ուսուցիչներին բարելավելու դասարանային փորձառությունը, պլանավորելու կրթական ծրագիրը, կրթելու և զարգացնելու ինքնուրույն ուղղորդվող սովորողների, զեկուցելու սովորողների առաջընթացի մասին և գնահատելու ծրագրերը: Այն նպաստում է աշակերտներին պատշաճ հետադարձ կապ ընձեռելուն այն մասին, թե ինչպես են իրենց գիտելիքները և հմտությունները զարգանում և ինչ է հնարավոր անել աշխատանքը բարելավելու համար: Գնահատումը հնարավորություն է տալիս ծնողներին իմանալու, թե ինչպիսին է իրենց երեխաների առաջադիմությունը և ինչ է հնարավոր անել այն բարելավելու համար:

Գնահատման տարբեր գործողություններից ստացվող ավստորոշիչ տեղեկատվությունը հնարավորություն է տալիս ուսուցիչներին օրեցօր կամ շաբաթից շաբաթ փոփոխելու և հարմարեցնելու իրենց կիրառվող գործողությունները՝ նպաստելով աշակերտների առաջադիմության բարելավմանը: Գոյություն ունեն գնահատման բազմաթիվ տեսակներ, ինչպիսիք են թղթով և գրչով թեստերը, աշխատանքի կատարման գնահատումը, հարցազրույցները, պորտֆոլիոները, ինչպես նաև նվազ ֆորմալ ձևերը, ինչպիսին են, օրինակ, կանոնավոր դիտարկումները, թե ինչպես է աշակերտը արձագանքում դասավանդմանը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ այս չափորոշիչներում հատուկ շեշտադրվում է ուսումնառության գործողությունների դերը, պետք է մշակել աշխատանքի կատարման վրա հիմնված գնահատման ձևեր, որոնք հնարավորություն կտան աշակերտներին ցուցադրելու, թե ինչ են սովորել իրական աշխարհում առկա խնդիրների և գիտելիքի կիրառման համատեքստում:

## **8. Գրականության ցանկ**

1. «Օգնեք ձեր երեխաներին տիրապետել համակարգչային գիտությանը: Յուրահատուկ տեսողական քայլ առ քայլ ուղեցույց համակարգիչների, ծրագրավորման և հաղորդակցության համար»: Գլխավոր խմբագիրներ՝ Սթիվեն Քարթոն և Սուեֆա Լի: Դոուլինգ Կինդեռսլի հրատարակչություն – 2018թ.
2. «Մասաչուսեցի կրթական չափորոշիչների ծրագիր – Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն կրթական ծրագիր, մանկապարտեզից մինչև 12րդ դասարան»: Մասաչուսեց նահանգի տարրական և միջնակարգ կրթության դեպարտամենտ – 2016թ.
3. «Համակարգչային գիտություն – առարկայական ծրագիր», Քեմբրիջ Ինթերնեյշնլ Էյ-Էս և Էյ մակարդակներ: Քեմբրիջի գնահատման և միջազգային կրթական ծրագրերի գրասենյակ – 2019թ.

4. «Հաջորդ սերնդի գիտության ստանդարտների թեմատիկ բաշխում» - <https://www.nextgenscience.org/> - 2013-2020թթ
5. «Տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաներ» – Քեմբրիջ Այ-Ջի-Սի-Էս-Ի – դասագիրք: Հեղինակներ՝ Գրահամ Բրաուն, Բրայան Սարգենթ, Դեյվիդ Ուաթսոն: Հրատ. Հոդդեր Էդուքեյշն – 2015թ.
6. «Հաշվողական մեքենաների ասոցիացիայի «Համակարգչային գիտություն» առարկայի մանկապարտեզից մինչև 12րդ դասարան կրթական ծրագրի վերջնական հաշվետվություն» Աշխատանքային խմբի ղեկավար Ալեն Թաքեր, Բոուդոլին քոլեջ, հոկտեմբեր 2003թ.
7. «Պարտադիր կրթության մեջ հաշվողական մտածողության և ծրագրավորման ներմուծման նորոգիկ երկրների մոտեցումը»: Նախաձեռնվել և ֆինանսավորվել է NORDIC@BETT2018 աշխատանքային խմբի կողմից: Հեղինակներ՝ Ստեֆանիա Բոկկոնի, Աուգուստո Չիոկկարիելլո, Ջեֆրի Էրփ: հունվար 2018թ.
8. «Ծրագրավորումը, կոդավորումը և Համակարգչային գիտության փոփոխվող կրթական ծրագիրը դպրոցներում»: UNESCO/IFIP ծրագրի զեկույցը ԵԱՀԿ ժողովին: Ներկայացնող՝ Դեյվիդ Ստորտե ՅՈՒՆԵՍԿՈ: 4 փետրվարի 2018թ.
9. «Հաշվողականություն և թվային գրագիտություն՝ համապարփակ մոտեցում ցուցաբերելու հրավեր»: Ուսումնասիրությունը մշակվել է Եվրոպական Ինֆորմատիկայի մասնագիտական համայնքների խորհրդի աջակցությամբ: ECDL հիմնադրամ – 2015թ.
10. «Բացատրված համակարգչային գիտություն» - Նելլ Դեյլ և Ջոն Լյուիս, Ջոնես և Բարտլետ Լերնինգ հրատակչություն – 2019
11. Օ-Մակարդակ Հաշվողականության կրթական ծրագիր, միջնակարգ բարձր մակարդակ: Սինգապուրի կրթության նախարարություն, Կրթական ծրագրերի պլանավորման և մշակման բաժին: 2016թ.
12. ԱՄՆ Համակարգչային գիտության ուսուցիչների ասոցիացիայի չափորոշիչներ: <https://csteachers.org/page/standards>

### **Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն**

<b>Թեմա 2-1 (3 ժամ)</b>	<b>Դասարան 2</b>	
<b>Ինչպես անվտանգ օգտվել էլեկտրոնային սարքերից</b>	<b>Կող - (ՀՄԳԿ.ՀՄՀ.ԱՊ.1)</b>	<b>Աղբյուր</b>
<b>Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ</b>		
Անվտանգ օգտագործել էլեկտրական/էլեկտրոնային սարքերը: <span style="background-color: #90EE90; display: inline-block; width: 15px; height: 15px; vertical-align: middle;"></span>		
<b>Վերջնարդյունքներ</b>		
<p>Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կկարողանա.</p> <ul style="list-style-type: none"> <li>- Բացատրել էլեկտրականության հետ կապված աշխատանքի գլխավոր սկզբունքները, թե ինչ կարելի անել և ինչ՝ ոչ:</li> <li>- Ցույց տալ էրգոնոմիկայի տեսանկյունից այն ճիշտ դիրքերը, որոնք կարելի է ընդունել համակարգչի կամ հաշվողական այլ սարքերով աշխատելիս:</li> <li>- Պատկերացում ունենալ էլեկտրական սարքերով աշխատանքի մասին:</li> <li>- Հարմարավետ ձևավորել աշխատանքային տեղը:</li> </ul>		
<b>Բովանդակություն</b>		
<p>Էլեկտրոնային ապահովություն և առողջություն:</p> <p>Սարքերի միացում և անջատում. վտանգ պարունակող գործողությունները սարքերով աշխատանքի ժամանակ:</p> <p>Հրավտանգ դեպքեր, ճիշտ գործողություններ նման դեպքերում:</p> <p>Ինչպես կահավորել, հարմարեցնել աշխատատեղը դպրոցում և տանը: Նստելու ճիշտ դիրքերը:</p> <p>Առողջարար ֆիզիկական վարժություններ մարմնի, աչքերի համար աշխատանքի և ուսման ընթացքում:</p>		
<b>Գործնական աշխատանքներ</b>	<b>Ընդհանրական խաչվող գաղափարներ</b>	
<ul style="list-style-type: none"> <li>- Հարցեր տալ և խնդիրներ սահմանել:</li> <li>- Ներգրավվել ապացույցից բխող</li> </ul>	<p>Պատճառ և հետևանք, մեխանիզմ և կանխատեսում _ _ _ _ _</p>	

փաստարկման/հիմնավորման գործընթացում: _ Տեղեկություններ ստանալ, գնահատել և հաղորդել:	
<b>ՀՊՁ Կարողունակություններ</b>	<b>ՀՊՁ Վերջնարդյունքներ</b>
Կ5	S14
Կ3	S31
<b>Նշումներ</b>	

<b>Թեմա 2-2 (2 ժամ)</b>	<b>Դասարան 2</b>	
<b>Տեխնոլոգիան քո կյանքում</b>	<b>Կող - (ՀՄԳԿ. ՀՄՀ. ԱԶԴ. 1)</b>	<b>Աղբյուր</b>
	<b>(AH)</b>	
<b>Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ</b>		
Համեմատել, թե ինչպես են մարդիկ ապրել և աշխատել մինչև համակարգչային տեխնոլոգիաների իրագործումն ու կիրառումը և դրանից հետո:		
<b>Վերջնարդյունքներ</b>		
<p>Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կկարողանա.</p> <ul style="list-style-type: none"> <li>- Գտնել և նկարագրել, թե ինչպես են մարդիկ (օրինակ՝ աշակերտները, սովորողները, ուստիկանները) օգտագործում տեխնոլոգիաների բազմաթիվ տեսակներ իրենց առօրյա անձնական և աշխատանքային կյանքում:</li> <li>- Նկարագրել, թե ինչպես են մարդիկ նույն աշխատանքներն իրականացրել մինչև այս տեխնոլոգիաների գոյությունը:</li> </ul>		
<b>Բովանդակություն</b>		
Տեխնոլոգիան քո կյանքում.		



- Ովքե՞ր են օգտագործում տեխնոլոգիա և ի՞նչ են նրանք անում տեխնոլոգիայի օգնությամբ:	
<b>Գործնական աշխատանքներ</b>	<b>Ընդհանրական խաչվող գաղափարներ</b>
- Տվյալներ վերլուծել և մեկնաբանել: - Ներգրավվել ապացույցից բխող փաստարկման/հիմնավորման գործընթացում: _ Տեղեկություններ ստանալ, գնահատել և հաղորդել:	Գիտատեխնիկական նորարարություն
<b>ՀՊՁ Կարողունակություններ</b> Կ7	<b>ՀՊՁ Վերջնարդյունքներ</b> S12
<b>Նշումներ</b>	

<b>Թեմա 2-3 (4 ժամ)</b>	<b>Դասարան 2</b>	
<b>Համակարգիչներն ամենուր են: Կարևոր ստեղծողներ և գործողություններ</b>	<b>Կող - (ՀՄԳ4.ԹԳԾ.ՕԳՏ.1)</b>	<b>Աղբյուր</b>
<b>Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ</b>		
Ընտրել և գործարկել համապատասխան համակարգչային ծրագրեր՝ բազմազան առաջադրանքներ կատարելու համար և ըմբռնել, որ օգտատերերն իրենց օգտագործած տեխնոլոգիայի նկատմամբ տարբեր կարիքներ և նախընտրություններ ունեն : <b>u</b>		
<b>Վերջնարդյունքներ</b>		
Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կկարողանա. - Նկարագրել տարբեր գործողություններ, որոնք մարդիկ կատարում են հաշվողական սարքերի միջոցով, ներառյալ՝ հեռախոսներով և պլանշետներով: - Գտնել և օգտագործել ստեղծաշարի վրա առկա տառերը, թվերը և հատուկ ստեղծերը: - Ստեղծել պարզ թվային արտեֆակտ (նկար, տեսանյութ, կարճ տեքստ):		

- Ստեղնաշարից օգտվելով՝ ներմուծել կարճ տեքստ՝ բանեցնելով մկնիկը, դիտարկել փաստաթղթի ցանկացած հատվածը և գտնել այնպիսի հրամաններ, ինչպիսիք են՝ տպել, պահպանել և ստուգել ուղղագրությունը:
- Նկարել և փոփոխել պարզ նկարներ կամ պատկերներ՝ օգտագործելով գծերի համադրություն, պարզ ուրվագծեր և գունավորել դրանք, ընտրել գույներ, ուրվապատկերներ և տարբեր հաստության գծեր՝ օգտագործելով պարզ գործիքները:
- Օգտագործել նշելու, կտրելու, պատճենելու և տեղադրելու, ինչպես նաև վերջին գործողությունները չեղարկելու հրամանները, դրանց միջոցով փոփոխել աշխատանքը և պահպանել վերջնական տարբերակը:

**Բովանդակություն**

- Համակարգիչներն ամենուր են:
- Աշխատանքներ, որոնք ավելի հարմար և արագ են արվում համակարգիչներով, սմարթֆոններով և տաբլետներով:
    - Ծրագրեր ընկերների հետ խոսելու, երաժշտություն լսելու համար:
    - Ծրագրեր գնումների համար - Ծնողներ
- Ստեղնաշարի տառերը և հատուկ ստեղները:
- Բացատի ստեղն, փոխանջատել, ջնջել:
- Նկարում ենք համակարգչով.
- Թվային և իրական նկարներ:
- Կարևոր հրամաններ, որոնք արժի օգտագործել.
- Ընտրել, կտրել, պատճենել, տեղադրել, չեղարկել, վերադարձնել:

Գործնական աշխատանքներ	Ընդհանրական խաչվող գաղափարներ
- Բացատրություններ ձևակերպել և լուծումներ մշակել:	Անհատական և մշակութային արտահայտում Գիտատեխնիկական նորարարություն
<b>ՀՊՁ Կարողունակություններ</b> Կ5	<b>ՀՊՁ Վերջնարդյունքներ</b> S14

## Նշումներ

<b>Թեմա 2-4 (2 ժամ)</b>	<b>Դասարան 2</b>
<b>Համակարգիչ և համակարգչային ծրագրեր:</b> <b>Ո՛վ է գլխավոր դերակատարը:</b>	<b>Կող - (ՀՄԳԿ.ԹԳԾ.ՀԱՂ.1) Աղբյուր (AH)</b>

### Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ

Օգտագործելով ճիշտ տերմինաբանություն՝ նկարագրել այն քայլերը և որոշումները, որոնք կայացվում են համակարգչային ծրագրի իտերատիվ/կրկնվող գործընթացում:

### Վերջնարդյունքներ

Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կկարողանա.

- Սահմանել համակարգչային ծրագիրը՝ որպես հրամանների խումբ, որը մարդիկ ստեղծել են որևէ գործողություն կատարելու համար:
- Բացատրել, որ համակարգիչները միայն հետևում են ծրագրի կարգադրություններին:
- Անհատապես կամ համագործակցությամբ ստեղծել պարզ ծրագիր՝ օգտագործելով տեսողական հրահանգներ կամ գործիքներ, որոնք չեն պահանջում տեքստային ծրագրավորման լեզու (օրինակ՝ առանց համակազմի ծրագրավորման գործողություններ, բլոկերի վրա հիմնված ծրագրավորման լեզու):

### Բովանդակություն

Ի՞նչ է համակարգիչը և ի՞նչ է համակարգչային ծրագիրը:

Ինչպե՞ս կարող ես ստեղծել հրահանգներ (ծրագիր) որևէ գործողություն ավարտելու համար:

<b>Գործնական աշխատանքներ</b>	<b>Ընդհանրական խաչվող գաղափարներ</b>
<ul style="list-style-type: none"> <li>- Մոդելներ մշակել և օգտագործել:</li> <li>- Բացատրություններ ձևակերպել և լուծումներ</li> </ul>	Պատճառ և հետևանք, մեխանիզմ և կանխատեսում

մշակել:	Անհատական և մշակութային արտահայտում
<b>ՀՊՁ Կարողունակություններ</b> Կ5	<b>ՀՊՁ Վերջնարդյունքներ</b> S14
<b>Նշումներ</b>	

<b>Թեմա 2-5 (2 ժամ)</b>	<b>Դասարան 2</b>	
<b>Ինչ և ինչպես ենք ուղարկում և ստանում սարքերով</b>	<b>Կող - (ՀՄԳԿ.ԹԳԾ.ՕՊՏ.1)</b>	<b>Աղբյուր</b>
<b>Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ</b>		
<p>Մտագրոհի միջոցով գտնել ուղիներ օգտատերերի բազմազան կարիքներին և ցանկություններին առնչվող տեխնոլոգիական արդյունքների հասանելիությունը և օգտակարությունը բարելավելու համար:</p>		
<b>Վերջնարդյունքներ</b>		
<p>Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կկարողանա.</p> <ul style="list-style-type: none"> <li>- Օգտագործել թվային տարբեր գործիքներ տեղեկատվությունը մյուսների ցուցադրելու համար:</li> <li>- Նկարագրել, թե ինչ տարբերություն կա թվային և ոչ թվային աշխատանքներն ընտանիքի կամ ընկերների հետ կիսվելու սկզբունքներում:</li> <li>- Օգտագործել էլեկտրոնային փոստի որևէ ծրագիր, դրանով գրել և ուղարկել հաղորդագրություններ, հավաքել, կարդալ և պատասխանել հաղորդագրություններին:</li> </ul>		
<b>Բովանդակություն</b>		
<p>Սկսում ենք էլեկտրոնային փոստով աշխատանքը.</p> <ul style="list-style-type: none"> <li>- Ուղարկում և ստանում ենք հաղորդագրություններ:</li> <li>- Կցում ենք, ուղարկում և ստանում ենք ֆայլեր:</li> </ul>		

- Պատասխանում ենք նամակներին:  
 Ներկայացնում ենք մեր աշխատանքը և մտքերն ուսուցիչներին, ծնողներին և ընկերներին:  
 - Երբ և ինչու ենք օգտագործում էլեկտրոնային փոստ և կարճ հաղորդագրությունների ծրագրեր:

<b>Գործնական աշխատանքներ</b>	<b>Ընդհանրական խաչվող գաղափարներ</b>
<ul style="list-style-type: none"> <li>- Բացատրություններ ձևակերպել և լուծումներ մշակել:</li> <li>- Տեղեկատվություն ստանալ, գնահատել և հաղորդել:</li> </ul>	Մասշտաբ, համամասնություն և քանակ Անհատ և հարաբերություններ
<b>ՀՊՁ Կարողունակություններ</b> Կ7	<b>ՀՊՁ Վերջնարդյունքներ</b> S9
<b>Նշումներ</b>	

<b>Թեմա 2-6 (2 ժամ)</b>	<b>Դասարան 2</b>
<b>Ինչ և ինչպես ենք միացնում և հանում համակարգչից:</b>	<b>Կող - (ՀՄԳ4.ՍՐՔ.ԱՇԽ.1) Աղբյուր (BC)</b>
<b>Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ</b>	
Հաշվողական համակարգերի (սարքերի) ընդհանուր ֆիզիկական բաղադրիչների գործառույթը ճանաչելիս և բնութագրելիս օգտագործել համապատասխան տերմինաբանություն:	
<b>Վերջնարդյունքներ</b>	
Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կկարողանա. <ul style="list-style-type: none"> <li>- Գտնել, նշել և տեսակավորել համակարգչի գլխավոր մուտքային և ելքային սարքերը:</li> </ul>	
<b>Բովանդակություն</b>	

Ճանաչել և նշել պարզ մուտքային սարքերը.

- մկնիկ,
- ջոյստիկ,
- ստեղնաշար,
- ցանցային տեսախցիկ,
- միկրոֆոն:

Ինչպես են աշխատում պարզ ելքային սարքերը.

- բարձրախոս,
- տեսասարք, դիսփլեյ,
- պրոյեկտոր:

Գործնական աշխատանքներ	Ընդհանրական խաչվող գաղափարներ
<ul style="list-style-type: none"> <li>- Մոդելներ մշակել և օգտագործել:</li> <li>- Բացատրություններ ձևակերպել և լուծումներ մշակել:</li> </ul>	<p>Կառուցվածք և գործառույթ</p> <p>Գիտատեխնիկական նորարարություն</p>
<p><b>ՀՊՁ Կարողունակություններ</b></p> <p>Կ4</p> <p>Կ1</p>	<p><b>ՀՊՁ Վերջնարդյունքներ</b></p> <p>S1</p> <p>S2</p>
<b>Նշումներ</b>	

Թեմա 2-7 (1 ժամ)	Դասարան 2
<b>Ինչ և ինչպես ենք միացնում և հանում համակարգչից</b>	<b>Կող - (ՀՄԳ4.ՍՐՔ.ԱՇԽ.2) Աղբյուր (BC)</b>
<b>Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ</b>	
Պահպանել, պատճենել, փնտրել, վերականգնել, փոփոխել և ջնջել տեղեկատվությունը՝ օգտագործելով համակարգչային սարք և սահմանել այն տեղեկատվությունը, որը պահպանվում է	

որպես տվյալ:	
<b>Վերջնարդյունքներ</b>	
Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կկարողանա. - Կատարել պարզ գործողություններ նիշքերով. պահպանել, վերաբացել, գտնել:	
<b>Բովանդակություն</b>	
Ինչպես կատարել պարզ գործողություններ նիշքերով. - բացել/փակել, - գտնել, - պահպանել:	
<b>Գործնական աշխատանքներ</b>	<b>Ընդհանրական խաչվող գաղափարներ</b>
- Տեղեկատվություն ստանալ, գնահատել և հաղորդել:	_ Պատճառ և հետևանք, մեխանիզմ և կանխատեսում
<b>ՀՊՁ Կարողունակություններ</b> Կ5	<b>ՀՊՁ Վերջնարդյունքներ</b> S14
<b>Նշումներ</b>	

<b>Թեմա 2-8 (3 ժամ)</b>	<b>Դասարան 2</b>
<b>Հավաքում ենք տվյալներ</b>	<b>Կող - (ՀՄԳ4. ԱՄՏԾ. ՌԵՊ. 2) Աղբյուր (BC)</b>
<b>Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ</b>	
Հավաքել և ներկայացնել նույն տվյալները տարբեր տեսողական ձևաչափերով:	

<b>Վերջնարդյունքներ</b>	
Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կկարողանա. Թղթի վրա հավաքել մեզ շրջապատող աշխարհի մասին պարզ տվյալներ :	
<b>Բովանդակություն</b>	
Ինչպես հավաքել տվյալներ	
<b>Գործնական աշխատանքներ</b>	<b>Ընդհանրական խաչվող գաղափարներ</b>
- Տվյալներ վերլուծել և մեկնաբանել:	Օրինաչափություններ Մասշտաբ, համամասնություն և քանակ
<b>ՀՊՁ Կարողունակություններ</b> Կ7 Կ1	<b>ՀՊՁ Վերջնարդյունքներ</b> S3 S15
<b>Նշումներ</b>	

<b>Թեմա 2-9 (2 ժամ)</b>	<b>Դասարան 2</b>
<b>Ալգորիթմներն առօրյա կյանքում</b>	<b>Կող - (ՀՄԳ4.ԱՄՏԾ.ՌԵՊ.3) Աղբյուր (BC)</b>
<b>Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ</b>	
Մասնատել այն քայլերը, որոնք անհրաժեշտ է կատարել հրամանների ճշգրիտ հաջորդականության միջոցով խնդիրը լուծելու համար:	
<b>Վերջնարդյունքներ</b>	
Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կկարողանա. - Բաժանել գործողություններն ավելի պարզ գործողությունների:	



<b>Բովանդակություն</b>	
<p>Ինչպես բաժանել այս գործողությունները քայլերի.</p> <ul style="list-style-type: none"> <li>- պատրաստել սենդվիչ,</li> <li>- լվանալ ատամները,</li> <li>- պատկերել մարմին,</li> <li>- տեղափոխել հերոսին էկրանի տարածքում:</li> </ul>	
<b>Գործնական աշխատանքներ</b>	<b>Ընդհանրական խաչվող գաղափարներ</b>
- Բացատրություններ ձևակերպել և լուծումներ մշակել:	Համակարգեր և մոդելներ
<b>ՀՊՁ Կարողունակություններ</b> Կ7	<b>ՀՊՁ Վերջնարդյունքներ</b> S9
<b>Նշումներ</b>	

<b>Թեմա 2-10 (4 ժամ)</b>	<b>Դասարան 2</b>	
<b>Ալգորիթմներն առօրյա կյանքում</b>	<b>Կող - (ՀՄԳ4.ԱՄՏԾ.ԾՐԳ.1)</b>	<b>Աղբյուր (BC)</b>
<b>Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ</b>		
<p>Մոդելավորել առօրյա գործընթացները, որևէ գործողություն կամ առաջադրանք ավարտին հասցնելու համար ստեղծել ալգորիթմներ (քայլ առ քայլ հրամանների խմբեր) և հետևել դրանց:</p>		
<b>Վերջնարդյունքներ</b>		
<p>Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կկարողանա.</p> <ul style="list-style-type: none"> <li>- Դրված նպատակին հասնելու համար պլանավորել հրամանների կարճ հաջորդականություն (քայլաշար):</li> </ul>		

<b>Բովանդակություն</b>	
Ի՞նչ են քայլաշարերը: Ինչպե՞ս ստեղծել պարզ կենցաղային գործերի քայլաշարեր:	
<b>Գործնական աշխատանքներ</b>	<b>Ընդհանրական խաչվող գաղափարներ</b>
- Բացատրություններ ձևակերպել և լուծումներ մշակել:	Մասշտաբ, համամասնություն և քանակ
<b>ՀՊՁ Կարողունակություններ</b> Կ7	<b>ՀՊՁ Վերջնարդյունքներ</b> S5 S9
<b>Նշումներ</b>	

<b>Թեմա 2-11 (4 ժամ)</b>	<b>Դասարան 2</b>	
<b>Քանի՞ քայլ կա մեկ քայլում</b>	<b>Կող - (ՀՄԳ4.ԱՄՏԾ.ԷՖԿ.1)</b>	<b>Աղբյուր (AH)</b>
<b>Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ</b>		
Մշակել պլան, որը բովանդակում է համակարգչային ծրագրի դեպքերի հաջորդականությունը, նպատակը և ակնկալվող վերջնարդյունքները:		
<b>Վերջնարդյունքներ</b>		
Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կկարողանա. - Սահմանել ալգորիթմը՝ որպես որոշված քայլերի հաջորդականություն: - Առանց համակարգիչ օգտագործելու՝ անհատապես կամ համագործակցությամբ ստեղծել պարզ ալգորիթմներ որևէ գործողություն ավարտին հասցնելու նպատակով (օրինակ՝ բրդում պատրաստել, նախապատրաստվել դպրոցին, գրադարանից գիրք վերցնել):		

<b>Բովանդակություն</b>	
Պլանավորում ենք գործողություն՝ քայլ առ քայլ:	
<b>Գործնական աշխատանքներ</b>	<b>Ընդհանրական խաչվող գաղափարներ</b>
- Մոդելներ մշակել և օգտագործել: - Բացատրություններ ձևակերպել և լուծումներ մշակել:	Համակարգեր և մոդելներ
<b>ՀՊՁ Կարողունակություններ</b> Կ7	<b>ՀՊՁ Վերջնարդյունքներ</b> S9
<b>Նշումներ</b>	

<b>Թեմա 2-12 (3 ժամ)</b>	<b>Դասարան 2</b>	
<b>Պարզ պատկերներ խոսքերի ու թվերի փոխարեն</b>	<b>Կող - (ՀՄԳ4.ԱՄՏԾ.ՄՍՍ .1)</b>	<b>Աղբյուր (AH)</b>
<b>Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ</b>		
Կազմակերպել և տեսանելի ներկայացնել հավաքված տվյալները, այնպես, որ հնարավոր լինի ընդգծել դրանց փոխհարաբերությունները և պաշտպանել պնդումը:		
<b>Վերջնարդյունքներ</b>		
Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կկարողանա. - Գտնել/ճանաչել տեղեկատվության տարբեր տեսակներ (օրինակ՝ տեքստ, գծապատկեր, գրաֆիկ, թվեր, նկարներ, աուդիո, տեսանյութ, առարկաներ): - Գտնել, ուսումնասիրել և հավաքել տեղեկություններ որևէ թեմայի, խնդրի կամ հարցի վերաբերյալ՝ օգտագործելով տարիքին համապատասխան թվային տեխնոլոգիա:		

Բովանդակություն	
Ի՞նչ է տվյալը, ի՞նչ է տեղեկույթը, ինչպե՞ս կարող ենք դրանք ցույց տալ:	
Գործնական աշխատանքներ	Ընդհանրական խաչվող գաղափարներ
<ul style="list-style-type: none"> <li>- Հարցեր տալ և խնդիրներ սահմանել:</li> <li>- Հետազոտություններ պլանավորել և իրականացնել:</li> <li>- Տվյալներ վերլուծել և մեկնաբանել:</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>Օրինաչափություններ</li> <li>Գիտատեխնիկական նորարարություն</li> </ul>
ՀՊՁ Կարողունակություններ	ՀՊՁ Վերջնարդյունքներ
Կ7	S12
Կ2	S10
	S07
	S06
Նշումներ	

**Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն**

**3-րդ դասարան (առաջարկվում է 34 դասաժամ)**

Թեմա 3-1 (2 ժամ)	Դասարան 3	
Սովորում ենք սարքերով աշխատել	Կող - (ՀՄԳԿ. ՀՄՀ. ԱՊ. 1)	Աղբյուր (SM)
Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ		
Անվտանգ օգտագործել էլեկտրական/էլեկտրոնային սարքերը: <span style="background-color: #90EE90; display: inline-block; width: 15px; height: 15px; vertical-align: middle;"></span>		
<b>Վերջնարդյունքներ</b>		

Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կկարողանա.

- Ցուցաբերել հրաժարվելու կարողություն և այդպիսով խուսափել տեխնոլոգիական սարքերի օգտագործմամբ պայմանավորված առողջական վտանգներից:

- Օգնություն խնդրել, հարցեր տալ, որոնք կնպաստեն անձնական առողջության ամրապնդմանը:

- Ցուցաբերել վարքի տարբեր դրսևորումներ, որոնք օգնում են խուսափելու առողջական խնդիրներից:

- Մյուսների հետ վարվել այնպես, որ առողջությանը վնաս չլինի:

- Ցուցաբերել հմտություններ, որոնք հնարավորություն կտան էլեկտրական սարքերով աշխատանքի ընթացքում խուսափելու առողջությանը հասցվող վնասներից:

- Ցուցաբերել ուրիշներից օգնություն խնդրելու կարողություն այն դեպքերում, երբ առողջությանը սպառնացող հնարավոր վտանգ կա, գիտակցել նման վտանգները:

- Ուրիշներին խրախուսել, որ անվտանգ օգտվեն էլեկտրական սարքերից:

### Բովանդակություն

Էլեկտրոնային ապահովություն և առողջություն, էլեկտրոնային սարքերով աշխատանք:

Միացում, անջատում, հասկանալ:

Անսարքություններ, դրանց դեպքում օգնության կանչելը մեծահասակներին:

Սարքերով աշխատանքի հմտությունների հաղորդում համադասարանցիներին:

#### Գործնական աշխատանքներ

#### Ընդհանրական խաչվող գաղափարներ

- Հարցեր տալ և խնդիրներ սահմանել:
- Ներգրավվել ապացույցից բխող փաստարկման/հիմնավորման գործընթացում:
- 
- Տեղեկատվություն ստանալ, գնահատել և հաղորդել:

Պատճառ և հետևանք, մեխանիզմ և կանխատեսում

#### ՀՊՁ Կարողունակություններ

Կ5

#### ՀՊՁ Վերջնարդյունքներ

S14

Կ3	S31
<b>Նշումներ</b>	

<b>Թեմա 3-2 (2 ժամ)</b>	<b>Դասարան 3</b>	
<b>Որտե՞ղ է այն: Տեխնոլոգիան քո տանը, դպրոցում և այլուր:</b>	<b>Կող - (ՀՄԳԿ.ՀՄՀ.ԱԶԴ.2)</b>	<b>Աղբյուր</b>
	<b>(AH)</b>	

**Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ**

Քննարկել այն համակարգչային տեխնոլոգիաները, որոնք փոխել են աշխարհը, և մեկնաբանել, թե ինչպես են այդ տեխնոլոգիաներն ազդել մշակութային որոշակի գործելակերպի վրա և նույն գործելակերպից ազդեցություն կրել:

**Վերջնարդյունքներ**

Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կկարողանա.

- Գտնել համայնքում ռեսուրսներ, որոնցով հնարավոր է տեխնոլոգիան մարդկանց համար հասանելի դարձնել (օրինակ՝ գրադարաններ, մշակույթի տներ, համայնքային կենտրոններ, կրթական ծրագրեր, դպրոցներ, համակարգիչների և ծրագրերի նվիրատվության ծրագրեր):

**Բովանդակություն**

Որտե՞ղ և ի՞նչ համակարգիչներ կան.

- գրադարաններ,
- մշակույթի տներ,
- համայնքային կենտրոններ,
- կրթական ծրագրեր, դպրոցներ,
- համակարգիչների և ծրագրերի նվիրատվության ծրագրեր:

<b>Գործնական աշխատանքներ</b>	<b>Ընդհանրական խաչվող գաղափարներ</b>
------------------------------	--------------------------------------

<ul style="list-style-type: none"> <li>- Հարցեր տալ և խնդիրներ սահմանել:</li> <li>- Տեղեկատվություն ստանալ, գնահատել և հաղորդել:</li> </ul>	Գիտատեխնիկական նորարարություն
<b>ՀՊՁ Կարողունակություններ</b> Կ5 Կ7	<b>ՀՊՁ Վերջնարդյունքներ</b> S14 S11
<b>Նշումներ</b>	

<b>Թեմա 3-3 (2 ժամ)</b>	<b>Դասարան 3</b>	
<b>Համակարգչով և առանց համակարգչի տեքստեր, նկարներ, գրաֆիկներ</b>	<b>Կող - (ՀՄԳԿ.ԹԳԾ.ՕԳՏ.1)</b>	<b>Աղբյուր</b>
<b>Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ</b>		
<p>Ընտրել և գործարկել համապատասխան համակարգչային ծրագրեր՝ բազմազան առաջադրանքներ կատարելու համար և ըմբռնել, որ օգտատերերն իրենց օգտագործած տեխնոլոգիայի նկատմամբ տարբեր կարիքներ և նախընտրություններ ունեն:</p>		
<b>Վերջնարդյունքներ</b>		
<p>Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կկարողանա.</p> <ul style="list-style-type: none"> <li>- Գտնել համակարգչով կամ հաշվողական սարքով և առանց դրա որևէ գործողություն անելու տարբերությունները:</li> <li>- Բացահայտել տեքստային խմբագրման ծրագրերում նոր գործիքներ (օրինակ՝ փաստաթղթերում նկարներ ավելացնել, փոխել տեքստի ոճը, չափսը, գույնը և սկսել հասկանալ, թե ինչպես տարբեր առարկաներ տեղավորել մեկ էջի վրա):</li> <li>- Ստեղծել և մշակել նկարներ՝ օգտագործելով տարրատեսակ գրաֆիկական գործիքներ, պահպանել փոփոխված տարբերակը՝ չջնջելով բնօրինակը:</li> <li>- Օգտագործել համակարգչային ծրագրերը որևէ պարզ տեղեկատվություն դասակարգելու</li> </ul>		

համար և ներկայացնել ստացված արդյունքը պարզ աղյուսակներով կամ գրաֆիկներով:

### Բովանդակություն

Ի՞նչ կարող ենք անել համակարգչով կամ սարքով և առանց դրա:

Ուսումնասիրում ենք տեքստը.

- ավելացնում ենք, հեռացնում ենք, փոխում ենք նկարի չափսերը, տեքստի ոճը, չափսը և գույնը,
- դասավորում ենք տեքստը և պատկերները էջի վրա:

Ուսումնասիրում ենք նկարները.

- ծրագրեր նկարներ ստեղծելու համար,
- նկարում և պահպանում ենք պարզ նկարներ:

Սկսում ենք պարզ գծապատկերներով և գրաֆիկներով աշխատանքը.

- պարզ աղյուսակներ,
- տվյալները ներմուծում ենք աղյուսակի մեջ,
- աղյուսակներից գծապատկերներ և գրաֆիկներ:

#### Գործնական աշխատանքներ

#### Ընդհանրական խաչվող գաղափարներ

- Հարցեր տալ և խնդիրներ սահմանել:
- Տվյալներ վերլուծել և մեկնաբանել:
- Բացատրություններ ձևակերպել և լուծումներ մշակել:

Անհատական և մշակութային արտահայտում \_  
Գիտատեխնիկական նորարարություն \_ \_

#### ՀՊՁ Կարողունակություններ

Կ5

#### ՀՊՁ Վերջնարդյունքներ

S14

#### Նշումներ



<b>Թեմա 3-4 (2 ժամ)</b>	<b>Դասարան 3</b>	
<b>Ինչպե՛ս և ո՞ւմ համար ենք փոխում մեր աշխատանքը</b>	<b>Կող - (ՀՄԳԿ.ԹԳԾ.ՀԱՂ.1)</b>	<b>Աղբյուր</b>
<b>Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ</b>		
<p>Օգտագործելով ճիշտ տերմինաբանություն՝ նկարագրել այն քայլերը և որոշումները, որոնք կայացվում են համակարգչային ծրագրի իտերատիվ/կրկնվող գործընթացում:</p>		
<b>Վերջնարդյունքներ</b>		
<p>Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կկարողանա.</p> <ul style="list-style-type: none"> <li>- Օգտագործել համակարգչային ծրագրերը կատարված աշխատանքը բարելավելու համար:</li> <li>- Գտնել փաստաթղթի տեսքը փոխելու եղանակներ՝ հարմարեցնելով այն որևէ լսարանի կարիքներին, պահպանել և վերաբացել աշխատանքները:</li> </ul>		
<b>Բովանդակություն</b>		
<p>Բարելավում ենք մեր աշխատանքը: Փոփոխում ենք միևնույն տեքստը, նկարը տատիկների և պապիկների համար, ընկերների համար:</p>		
<b>Գործնական աշխատանքներ</b>	<b>Ընդհանրական խաչվող գաղափարներ</b>	
<ul style="list-style-type: none"> <li>- Բացատրություններ ձևակերպել և լուծումներ մշակել:</li> <li>- Տեղեկատվություն ստանալ, գնահատել և հաղորդել:</li> </ul>	Անհատական և մշակութային արտահայտում	
<b>ՀՊՁ Կարողունակություններ</b> Կ5	<b>ՀՊՁ Վերջնարդյունքներ</b> S14	
<b>Նշումներ</b>		

--

<b>Թեմա 3-5 (2 ժամ)</b>	<b>Դասարան 3</b>
<b>Շարժում ենք նկարներ, աղյուսակներ և տեքստեր</b>	<b>Կող - (ՀՄԳԿ.ԹԳԾ.ՕԳՏ.2) Աղբյուր (ԱԿ)</b>

**Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ**

Նկարագրել ծրագրավորման ընթացքում կատարված ընտրությունները՝ օգտագործելով կողի մեկնաբանություններ, պրեզենտացիաներ և ցուցադրություններ:  

**Վերջնարդյունքներ**

Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կկարողանա.

- Նկարագրել տարբեր թվային գործիքներ, որոնք կարող են օգտագործվել միևնույն գործն անելու համար, և բերել օրինակներ, թե որ դեպքում են կիրառում որևէ հատուկ գործիք:
- Կատարել պարզ բանալի բառերով որոնումներ՝ ուսուցչի տրամադրած թվային աղբյուրներից տեղեկատվություն գտնելու համար:
- Նավարկել լոկալ և ցանցային, ինչպես նաև առցանց և ամպային միջավայրերում և մեկից մյուսը ֆայլեր տեղափոխել (ներբեռնել, վերբեռնել):
- Օգտագործել թվային գործիքներ (լոկալ կամ առցանց)՝ դրանցով մուլտիմեդիա արտեֆակտներ բանեցնելու և հրապարակելու համար:
- Տպել մեկ թուղթում հինգ բառ, անգամ դասարանի թիվը 5 բառ/թուղթ արագությամբ (օրինակ՝ 5-րդ դասարանցին պետք է տպի 5\*5բառ/թուղթ, 25 բառ/թուղթ արագությամբ):

**Բովանդակություն**

Նկար տեքստո՞ւմ, թե տեքստ նկարում, ո՞ր գործիքը օգտագործել:

Աղյուսակները տեքստո՞ւմ թե հակառակը, ո՞ր գործիքն է լավագույնը:

Կարևոր բառեր և որոնումներ:

Շրջում ենք համակարգչի, լոկալ ցանցի և ինտերնետի մեջ:

Շարժում ենք առարկաներ համակարգչի և համացանցի միջև:

Տեսանյութեր, նկարներ, տեքստ և աղյուսակներ. բոլորը մեկ վայրում:

Խաղում ենք տպելու խաղեր.

- Մատների ճիշտ տեղը ստեղնաշարի վրա:

Գործնական աշխատանքներ	Ընդհանրական խաչվող գաղափարներ
- Բացատրություններ ձևակերպել և լուծումներ մշակել: - Տեղեկատվություն ստանալ, գնահատել և հաղորդել:	Կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ _ _ Գիտատեխնիկական նորարարություն
<b>ՀՊՁ Կարողունակություններ</b> Կ1	<b>ՀՊՁ Վերջնարդյունքներ</b> S15
<b>Նշումներ</b>	

Թեմա 3-6 (2 ժամ)	Դասարան 3	
Աշխատում ենք միասին, կիսվում մեր աշխատանքով և ստանում մյուսներից	Կող - (ՀՄԳԿ.ԹԳԾ.ՕՊՏ.1)	Աղբյուր (AK)
<b>Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ</b>		
Մտագրոհի միջոցով գտնել ուղիներ օգտատերերի բազմազան կարիքներին և ցանկությունների առնչվող տեխնոլոգիական պրոդուկտների հասանելիությունը և օգտակարությունը բարելավելու համար: <span style="background-color: #90EE90; display: inline-block; width: 20px; height: 15px; vertical-align: middle;"></span>		
<b>Վերջնարդյունքներ</b>		
Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կկարողանա. - Օգտագործել տարբեր թվային գործիքներ տեղեկատվության փոխանակման, ինչպես նաև ուսուցիչների հետ հաղորդակցման, հետադարձ կապ ունենալու նպատակով: - Նկարագրել մարդկանց տարբեր խմբեր, որոնց կարող է անհրաժեշտ լինել սովորողի		

ստեղծված թվային արտիֆակտը (տեսանյութ, տեքստ, նկար, ձայն):

- Ձարգացնել էլեկտրոնային փոստից օգտվելու հմտությունները, կցել, ուղարկել և ստանալ կից ֆայլեր, օգտագործել հասցեագիրքը և կառավարել էլփոստում պահվող թղթապանակները
- Օգտագործել պարզ կիսվող աշխատանքային միջավայրեր միասին տեքստ գրելու համար:

### Բովանդակություն

Համատեղ աշխատանք համակարգչի միջոցով.

- տեսազանգեր,
- կիսվում ենք օրացույցներով,
- կիսվում ենք տեքստերով, նկարներով և աղյուսակներով,
- միասին աշխատում ենք մեկ փաստաղթի վրա,
- ում են պետք մեր աշխատանքները և ինչու (տեսանյութ, տեքստ, նկար, ձայն):

Ուսումնասիրում ենք էլփոստի գործիքները.

- կցում, ուղարկում, ստանում և բացում ենք ֆայլեր,
- դասավորում ենք էլփոստի նամակները, թղթապանակներ և թեգեր,
- դասավորում ենք մեր կոնտակտային տվյալները, հասցեագիրք:

#### Գործնական աշխատանքներ

- Բացատրություններ ձևակերպել և լուծումներ մշակել:
- Տեղեկատվություն ստանալ, գնահատել և հաղորդել:

#### Ընդհանրական խաչվող գաղափարներ

Մասշտաբ, համամասնություն և քանակ  
Անհատ և հարաբերություններ

#### ՀՊՁ Կարողունակություններ

Կ7

#### ՀՊՁ Վերջնարդյունքներ

S9

### Նշումներ

<b>Թեմա 3-7 (1 ժամ)</b>	<b>Դասարան 3</b>	
<b>Ի՞նչ և ինչպե՞ս ենք միացնում և դուրս բերում համակարգչից</b>	<b>Կող - (ՀՄԳԿ.ՍՐՔ.ԱՇԽ.1)</b>	<b>Աղբյուր (BC)</b>
<b>Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ</b>		
Հաշվողական համակարգերի (սարքերի) ընդհանուր ֆիզիկական բաղադրիչների գործառույթը ճանաչելիս և բնութագրելիս օգտագործել համապատասխան տերմինաբանություն:		
<b>Վերջնարդյունքներ</b>		
<p>Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կկարողանա.</p> <ul style="list-style-type: none"> <li>- Ճանաչել և մատնանշել համակարգչի մուտքային և ելքային սարքերը և դրանց տեսակները:</li> <li>- Համեմատել տարատեսակ մուտքային և ելքային սարքերը՝ ուրվագծելով դրանց առավելությունները և թերությունները որոշակի դեպքերում:</li> </ul>		
<b>Բովանդակություն</b>		
<p>Ինչպես են աշխատում մասնագիտացված մուտքային սարքերը.</p> <ul style="list-style-type: none"> <li>- հպումային մակեևույթներ, հպասարքեր,</li> <li>- վիրտուալ իրականության ղեկավարող սարքեր,</li> <li>- սքաններներ (երկչափ և եռաչափ):</li> </ul> <p>Ինչպես են աշխատում մասնագիտացված ելքային սարքերը.</p> <ul style="list-style-type: none"> <li>- տպիչներ (երկչափ և եռաչափ),</li> <li>- հոլոգրաֆիկ տեսասարքեր,</li> <li>- վիրտուալ իրականության սաղավարտներ:</li> </ul>		
<b>Գործնական աշխատանքներ</b>	<b>Ընդհանրական իս աշվող գաղափարներ</b>	
<ul style="list-style-type: none"> <li>- Մոդելներ մշակել և օգտագործել:</li> <li>- Բացատրություններ ձևակերպել և լուծումներ մշակել:</li> </ul>	<p>Կառուցվածք և գործառույթ</p> <p>Գիտատեխնիկական նորարարություն</p>	
<b>ՀՊՁ Կարողունակություններ</b>	<b>ՀՊՁ Վերջնարդյունքներ</b>	

Կ4	S1
Կ1	S2
<b>Նշումներ</b>	

<b>Թեմա 3-8 (1 ժամ)</b>	<b>Դասարան 3</b>
<b>Կարևոր կոճակներ ավելի արագ աշխատելու համար</b>	<b>Կող - (ՀՄԳԿ.ՍՐՔ.ԱՇԽ.2) Աղբյուր (BC)</b>

**Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ**

Պահպանել, պատճենել, փնտրել, վերականգնել, փոփոխել և ջնջել տեղեկատվությունը՝ օգտագործելով համակարգչային սարք և սահմանել այն տեղեկատվությունը, որը պահպանվում է որպես տվյալ:

**Վերջնարդյունքներ**

Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կկարողանա.

Կատարել պարզ գործողություններ նիշքերի հետ ստեղնաշարի ամփոփ կոճակների միջոցով. պահպանել, պատճենել-տեղադրել, բացել, ջնջել:

Ճանաչել ամփոփ կոճակների օգտագործման առավելությունները:

**Բովանդակություն**

Արագ աշխատելու գաղտնիքները:

Ստեղնաշարի ամփոփ կոճակներ.

- ctrl+s
- ctrl+c/ctrl+v

- ctrl+o	
- del	
<b>Գործնական աշխատանքներ</b>	<b>Ընդհանրական խաչվող գաղափարներ</b>
- Տեղեկատվություն ստանալ, գնահատել և հաղորդել:	Պատճառ և հետևանք, մեխանիզմ և կանխատեսում Կառուցվածք և գործառույթ
<b>ՀՊՁ Կարողունակություններ</b> Կ5	<b>ՀՊՁ Վերջնարդյունքներ</b> S14
<b>Նշումներ</b>	

<b>Թեմա 3-9 (2 ժամ)</b>	<b>Դասարան 3</b>
<b>Համակարգչային խափանումները</b>	<b>Կող - (ՀՄԳ4.ՍՐՔ.ԽԼԾ.1) Աղբյուր (BC)</b>
<b>Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ</b>	
Նկարագրել համակարգչային սարքերի և ծրագրերի հիմնական խնդիրները, օգտագործելով ճշգրիտ տերմինաբանություն:	
<b>Վերջնարդյունքներ</b>	
<p>Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կկարողանա.</p> <p>- ճանաչել և ներկայացնել տեխնիկական խնդիրներ, ինչպիսիք են . սարքը չի հակազդում, հոսանքի սնուցումը բացակայում է, ցանցային կապը բացակայում է, հավելվածը վթարվում է, ձայնի բացակայություն, գաղտնաբառի մուտքագրումը չի գործում:</p>	
<b>Բովանդակություն</b>	
Ճանաչում ենք հաճախ հանդիպող համակարգչային ծրագրային և սարքային խնդիրներ.	

- սարքը չի հակազդում,
  - հավելվածը վթարվում է,
  - գաղտնաբառի մուտքագրումը չի գործում:
- Սարքային խնդիրներ.
- ձայնը բացակայում է,
  - ցանցային կապը բացակայում է,
  - հոսանքի սնուցումը բացակայում է:

<b>Գործնական աշխատանքներ</b>	<b>Ընդհանրական խաչվող գաղափարներ</b>
<ul style="list-style-type: none"> <li>- Հարցեր տալ և խնդիրներ սահմանել:</li> <li>- Տեղեկատվություն ստանալ, գնահատել և հաղորդել:</li> </ul>	<p>Պատճառ և հետևանք, մեխանիզմ և կանխատեսում</p> <p>Կառուցվածք և գործառույթ</p>
<b>ՀՊՁ Կարողունակություններ</b> Կ7	<b>ՀՊՁ Վերջնարդյունքներ</b> S10
<b>Նշումներ</b>	

<b>Թեմա 3-10 (1 ժամ)</b>	<b>Դասարան 3</b>	
<b>Տվյալների պահպանման եղանակները</b>	<b>Կող - (ՀՄԳ4. ԱՄՏԾ. ՌԵՊ.1)</b>	<b>Աղբյուր (BC)</b>
<b>Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ</b>		
Մոդելավորել, թե ինչպես են համակարգչային ծրագրերը պահպանում և գործածում տվյալները՝ տեղեկատվությունը ներկայացնելու համար օգտագործելով թվեր և այլ սիմվոլներ:		
<b>Վերջնարդյունքներ</b>		
Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կկարողանա.		
- Նկարագրել, թե ինչպես է իրական աշխարհում տեղեկատվությունը տարբերվում համակարգչային ծրագրերի տեղեկատվությունից:		



<b>Բովանդակություն</b>	
<p>Ի՞նչ է տվյալը և ինչու՞ է այն կարևոր:</p> <p>0-րի և 1-րի աշխարհում:</p> <p>Երկուական (բինար) և տասական համակարգերը:</p> <p>Ինչո՞ւ են մարդիկ օգտագործում տասական համակարգը:</p>	
<b>Գործնական աշխատանքներ</b>	<b>Ընդհանրական խաչվող գաղափարներ</b>
<ul style="list-style-type: none"> <li>- Մոդելներ մշակել և օգտագործել:</li> <li>- Տվյալներ վերլուծել և մեկնաբանել:</li> <li>_ Կիրառել մաթեմատիկական և հաշվողական մտածողություն:</li> </ul>	<p>Պատճառ և հետևանք, մեխանիզմ և կանխատեսում</p> <p>Գիտատեխնիկական նորարարություն</p>
<b>ՀՊՁ Կարողունակություններ</b>	<b>ՀՊՁ Վերջնարդյունքներ</b>
Կ7	S5 S6
<b>Նշումներ</b>	

<b>Թեմա 3-11 (2 ժամ)</b>	<b>Դասարան 3</b>	
<b>Հավաքում ենք տվյալներ</b>	<b>Կող - (ՀՄԳ4.ԱՄՏԾ.ՌԵՊ.2)</b>	<b>Աղբյուր (BC)</b>
<b>Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ</b>		
Հավաքել և ներկայացնել նույն տվյալները տարբեր տեսողական ֆորմատներով:		
<b>Վերջնարդյունքներ</b>		
Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կկարողանա.		
- Համակարգչով կամ առանց դրա մեզ շրջապատող աշխարհի վերաբերյալ պարզ տվյալներ		

հավաքել:

- Նկարագրել համակարգչով կամ թղթով տվյալներ հավաքելու առավելությունները:

**Բովանդակություն**

Հավաքում ենք տվյալներ՝ օգտագործելով ծրագրեր.

- սքաթչ ցուցակներ,
- տեքստային փաստաթուղթ,
- լայն կիրառելիության էջեր Open office, Excel, այլ աղյուսակներ:

**Գործնական աշխատանքներ**

**Ընդհանրական խաչվող գաղափարներ**

- Հետազոտություններ պլանավորել և իրականացնել:
- Տվյալներ վերլուծել և մեկնաբանել:

Օրինաչափություններ  
Մասշտաբ, համամասնություն և քանակ

**ՀՊՁ Կարողունակություններ**

**ՀՊՁ Վերջնարդյունքներ**

Կ7

S3

Կ1

S15

**Նշումներ**

**Թեմա 3-12 (2 ժամ)**

**Դասարան 3**

**Ինչպես են գործում խաղերի միավորները (փոփոխականներ)**

**Կոդ - (ՀՄԳ4.ԱՄՏԾ.ՌԵՊ.4) Աղբյուր (BC)**

**Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ**

Ստեղծել ծրագրեր, որոնք օգտագործվում են փոփոխականներ, տվյալներ պահելու և դրանք փոփոխելու համար:

**Վերջնարդյունքներ**

Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կկարողանա.

- Ճանաչել փոփոխականներ և որոշել դրանց արժեքները:
- Սահմանել և անվանել փոփոխականները իրական կյանքի գործողությունների համատեքստում:
- Ստեղծել իրավիճակներ, որոնք պահանջում են օգտագործել այդ փոփոխականները:
- Փոփոխականներին տալ արժեքներ:
- Օգտագործել փոփոխականներն այն տեղերում, որտեղ տվյալ ծրագրի կամ քայլերի հաջորդականության մեջ որևէ արժեք կրկնվում է:

### Բովանդակություն

Ի՞նչ է փոփոխականը:

Որո՞նք են փոփոխականներ օգտագործելու առավելությունները:

Ինչպե՞ս օգտվել փոփոխականներից.

- ստեղծել/հայտարարել փոփոխականներ,
- վերագրել արժեք,
- ավելացնել, պակասեցնել արժեքը:

#### Գործնական աշխատանքներ

- Մոդելներ մշակել և օգտագործել:
- Տվյալներ վերլուծել և մեկնաբանել:
- Կիրառել մաթեմատիկական և հաշվողական մտածողություն:

#### Ընդհանրական խաչվող գաղափարներ

Համակարգեր և մոդելներ  
Էներգիա և նյութ, հոսքեր, ցիկլեր, պահպանում

#### ՀՊՁ Կարողունակություններ

Կ7

#### ՀՊՁ Վերջնարդյունքներ

S12

S14

### Նշումներ

Թեմա 3-13 (2 ժամ)	Դասարան 3	
Օրինաչափությունները մեր շրջապատում	Կող - (ՀՄԳԿ.ԱՄՏԾ.ՄՈԴ.1)	Աղբյուր (BC)
<b>Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ</b>		
<p>Կանխատեսումներ անելու նպատակով ճանաչել և նկարագրել նմանություններ/օրինաչափություններ գրաֆիկների և աղյուսակների պես տվյալների արտապատկերումներում:</p>		
<b>Վերջնարդյունքներ</b>		
<p>Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կկարողանա.</p> <ul style="list-style-type: none"> <li>- Տվյալները գործածել այնպես, որ հնարավոր լինի աշխարհի մասին եզրահանգումներ և կանխատեսումներ անել:</li> </ul>		
<b>Բովանդակություն</b>		
<p>Ինչպե՞ս ճանաչել օրինաչափությունները.</p> <ul style="list-style-type: none"> <li>- օրինաչափություններ կազմված թվերից,</li> <li>- օրինաչափություններ կազմված ձևերից,</li> <li>- օրինաչափություններ կազմված գույներից:</li> </ul> <p>Ինչպե՞ս ասել, թե ինչ կլինի, օգտագործելով օրինաչափությունը:</p>		
<b>Գործնական աշխատանքներ</b>	<b>Ընդհանրական խաչվող գաղափարներ</b>	
<ul style="list-style-type: none"> <li>- Հարցեր տալ և խնդիրներ սահմանել:</li> <li>- Հետազոտություններ պլանավորել և իրականացնել:</li> <li>- Տվյալներ վերլուծել և մեկնաբանել:</li> </ul>	<p>Օրինաչափություններ</p> <p>Պատճառ և հետևանք, մեխանիզմ և կանխատեսում</p>	
<p><b>ՀՊԶ Կարողունակություններ</b></p> <p>Կ7</p>	<p><b>ՀՊԶ Վերջնարդյունքներ</b></p> <p>S6</p>	

Կ2	S7
Կ1	S15
<b>Նշումներ</b>	

<b>Թեմա 3-14 (2 ժամ)</b>	<b>Դասարան 3</b>
<b>Պատկերներ համակարգչի միջոցով</b>	<b>Կող - (ՀՄԳԿ. ԱՄՏԾ. ԾՐԳ. 1) Աղբյուր (BC)</b>

**Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ**

Մոդելավորել առօրյա գործընթացները, որևէ գործողություն կամ առաջադրանք ավարտին հասցնելու համար ստեղծել և հետևել ալգորիթմների (քայլ առ քայլ հրամանների խմբեր):

**Վերջնարդյունքներ**

Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կկարողանա.

- Պլանավորել հրահանգների կարճ հաջորդականություն (ալգորիթմ) որոշակի նպատակի հասնելու համար:
- Թարգմանել շարժումները՝ ներկայացնելով դրանք որպես հրամանների շարքեր:
- Պլանավորել ալգորիթմ, քայլերի հաջորդականություն, որում առկա են կրկնություններ և որով հնարավոր է նկարել պարզ ուրվագիծ կամ պատկեր:

**Բովանդակություն**

Ինչպես տրոհել պատկերները քայլաշարերի:

Ինչպես մոդելավորել շարժվելու ուղղությունները քայլ առ քայլ:

<b>Գործնական աշխատանքներ</b>	<b>Ընդհանրական խաչվող գաղափարներ</b>
<ul style="list-style-type: none"> <li>- Մոդելներ մշակել և օգտագործել:</li> <li>- Բացատրություններ ձևակերպել և լուծումներ մշակել:</li> </ul>	<p>Պատճառ և հետևանք, մեխանիզմ և կանխատեսում</p> <p>Կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ</p>
<b>ՀՊՁ Կարողունակություններ</b> Կ7	<b>ՀՊՁ Վերջնարդյունքներ</b> S5 S9
<b>Նշումներ</b>	

<b>Թեմա 3-15 (2 ժամ)</b>	<b>Դասարան 3</b>	
<b>Պատկերներ համակարգչի միջոցով</b>	<b>Կող - (ՀՄԳ4.ԱՄՏԾ.ԾՐԳ.2)</b>	<b>Աղբյուր (BC)</b>
<b>Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ</b>		
<p>Մշակել համակարգչային ծրագրեր, որոնք պարունակում են հաջորդականություններ և պարզ հանգույցներ, որոնց միջոցով հնարավոր է արտահայտել որևէ գաղափար կամ լուծել որևէ խնդիր:</p>		
<b>Վերջնարդյունքներ</b>		
<p>Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կկարողանա.</p> <ul style="list-style-type: none"> <li>- Հաշվել, թե քանի անգամ պետք է որոշակի գործողություն կրկնել, և ներկայացնել օղակի գաղափարը:</li> <li>- Ստեղծել ծրագիր, որը ներկայացված է որևէ նպատակի հասնելու համար անհրաժեշտ հրահանգերի/քայլերի հաջորդականության տեսքով:</li> <li>- Ճանաչել օղակներ/ցիկլեր/լուփեր օգտագործելու առավելությունները մեխանիկական կրկնության նկատմամբ:</li> <li>- Տարբերակել այն հրամանները, որոնք պետք է կրկնվեն օղակներով/ցիկլերով/լուփերով, և այն</li> </ul>		

հրամանները, որոնք պետք է օգտագործվեն ինքնուրույն:

**Բովանդակություն**

Ինչպե՞ս պարզեցնել ծրագիրը՝ օգտագործելով օղակներ/ցիկլեր/լուփեր.

- կրկնել այսքան անգամ,
- կրկնել անվերջ:

Ինչպե՞ս նկարել ուրվապատկերներ՝ օգտագործելով օղակներ/ցիկլեր/լուփեր.

- քառակուսի,
- շրջան:

**Գործնական աշխատանքներ**

**Ընդհանրական խաչվող գաղափարներ**

- Մոդելներ մշակել և օգտագործել:
- Բացատրություններ ձևակերպել և լուծումներ մշակել:
- Ներգրավվել ապացույցից բխող փաստարկման/հիմնավորման գործընթացում:

Օրինաչափություններ  
 Էներգիա և նյութ, հոսքեր, ցիկլեր, պահպանում  
 Անհատական և մշակութային արտահայտում

**ՀՊՁ Կարողունակություններ**

- Կ2
- Կ7

**ՀՊՁ Վերջնարդյունքներ**

- S08
- S09
- S10

**Նշումներ**

**Թեմա 3-16 (1 ժամ)**

**Դասարան 3**

**Կրկնվող քայլեր. փորձում, սխալվում և ուղղում ենք**

**Կող - (ՀՄԳ4.ԱՄՏԾ.ԾՐԳ.3) (BC)**

**Աղբյուր**

**Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ**

Ուղղել (գտնել և ուղղել) սխալներն այնպիսի ալգորիթմներում կամ ծրագրերում, որոնք պարունակում են հաջորդականություններ և պարզ հանգույցներ:

**Վերջնարդյունքներ**

Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կկարողանա.  
 - Կանխատեսել կրկնություն ներառող ծրագրի ելքը:

**Բովանդակություն**

Փոխում ենք քայլերի հաջորդականությունը:  
 Հետևում ենք ալգորիթմին քայլ առ քայլ:  
 Փորձ և սխալ, խնդիրներ և լուծումներ ալգորիթմներում և ծրագրերում:

**Գործնական աշխատանքներ**

**Ընդհանրական խաչվող գաղափարներ**

- Հարցեր տալ և խնդիրներ սահմանել:  
 - Կիրառել մաթեմատիկական և հաշվողական մտածողություն:

Օրինաչափություններ  
 Էներգիա և նյութ, հոսքեր, ցիկլեր, պահպանում

**ՀՊՁ Կարողունակություններ**

**ՀՊՁ Վերջնարդյունքներ**

Կ2

S28

**Նշումներ**

**Թեմա 3-17 (2 ժամ)**

**Դասարան 3**

**Քայլ առ քայլ: Պլանավորում ենք գործողությունները**

**Կող - (ՀՄԳ4.ԱՄՏԾ.ԷՖԿ.1) Աղբյուր (AH)**

**Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ**



Մշակել պլան, որը նկարագրում է համակարգչային ծրագրի դեպքերի հաջորդականությունը, նպատակը և ակնկալվող վերջնարդյունքները:

**Վերջնարդյունքներ**

Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կկարողանա.

- Սահմանել ալգորիթմը՝ որպես հրահանգների հաջորդականություն, որը կարող է իրականացվել համակարգչով:

**Բովանդակություն**

Եկեք պլանավորենք գործողություն քայլ առ քայլ:

Ի՞նչ արդյունք ենք սպասում:

**Գործնական աշխատանքներ**

**Ընդհանրական խաչվող գաղափարներ**

- Մոդելներ մշակել և օգտագործել:
- Կիրառել մաթեմատիկական և հաշվողական մտածողություն:
- Բացատրություններ ձևակերպել և լուծումներ մշակել:

Օրինաչափություններ  
Համակարգեր և մոդելներ

**ՀՊՁ Կարողունակություններ**

Կ7

**ՀՊՁ Վերջնարդյունքներ**

S9

**Նշումներ**

**Թեմա 3-18 (2 ժամ)**

<p>Օգտագործել ցանկեր՝ պարզ փոփոխականները կրկնողաբար օգտագործելու փոխարեն լուծումները պարզեցնելու և հաշվարկային (computational) խնդիրներն ընդհանրացնելու համար:</p>		
<b>Վերջնարդյունքներ</b>		
<p>Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կկարողանա.</p> <ul style="list-style-type: none"> <li>- Բացատրել փոփոխականի տեսակի գաղափարը:</li> <li>- Խմբավորել փոփոխականները՝ ըստ դրանց ֆունկցիոնալության:</li> <li>- Նկարագրել դասավորությունների և ցանկերի (arrays and lists) գաղափարը:</li> <li>- Օգտագործել ցուցակները Python լեզվում նույնանման տեսակի և նպատակի համար ծառայող արժեքները խմբավորելու համար:</li> </ul>		
<b>Բովանդակություն</b>		
<p>Փոփոխականների տեսակները:          Զանգվածների և ցուցակների գաղափարները:</p>		
<b>Գործնական աշխատանքներ</b>	<b>Ընդհանրական խաչվող գաղափարներ</b>	
<ul style="list-style-type: none"> <li>- Մոդելներ մշակել և օգտագործել:</li> <li>- Տվյալներ վերլուծել և մեկնաբանել:</li> </ul>	<p>Օրինաչափություններ          Մասշտաբ, համամասնություն և քանակ          Համակարգեր և մոդելներ</p>	
<p><b>ՀՊԶ Կարողունակություններ</b></p> <p>Կ2          Կ7          Կ8</p>	<p><b>ՀՊԶ Վերջնարդյունքներ</b></p> <p>Հ6          Հ7          Հ12</p>	

43	Հ14
45	
<b>Նշումներ</b>	

<b>Թեմա 7-15 - (2 ժամ)</b>	<b>Դասարան 7</b>	
<b>Ֆունկցիոնալ օրինաչափություններ</b>	<b>Կող - (ՀՄԳԳ. ԱՄՏԾ. ՌԵՊ. 5)</b>	<b>Աղբյուր</b>
	<b>(AG)</b>	

**Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ**

Մասնատել խնդիրները ավելի փոքր բաղադրիչների՝ օգտագործելով համակարգային վերլուծություն և այնպիսի կառուցվածքային տարրեր, ինչպիսիք են ընթացակարգերը, մոդուլները և օբյեկտները:

**Վերջնարդյունքներ**

Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կկարողանա.

- Գտնել պարզ ալգորիթմային կոդերում ֆունկցիոնալ օրինաչափություններ (functional patterns):

**Բովանդակություն**

Ֆունկցիոնալ օրինաչափության կրկնությունը

<b>Գործնական աշխատանքներ</b>	<b>Ընդհանրական խաչվող գաղափարներ</b>
<ul style="list-style-type: none"> <li>- Մոդելներ մշակել և օգտագործել:</li> <li>- Կիրառել մաթեմատիկական և հաշվողական մտածողություն:</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>Օրինաչափություններ</li> <li>Կառուցվածք և գործառույթ</li> </ul>



ՀՊՁ Կարողունակություններ	ՀՊՁ Վերջնարդյունքներ
Կ2	Հ6
Կ7	Հ7
Կ8	Հ12
Կ3	Հ8

<b>Նշումներ</b>

<b>Թեմա 7-16 (2 ժամ)</b>	<b>Դասարան 7</b>
<b>Թվային համակարգեր և ներկայացումներ</b>	<b>Կող - (ՀՄԳԳ. ԱՄՏԾ. ՌԵՊ. 7) Աղբյուր (AG)</b>

**Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ**

Բիթերի մեկ ռեպրեզենտացիան թարգմանել մյուսի՝ օգտագործելով իրական կյանքի երևույթներ, ինչպիսիք են նիշերը, թվերը և նկարները:

**Վերջնարդյունքներ**

Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կկարողանա.

- Բացատրել, թե ինչ է ընկած տարբեր թվային համակարգերի հիմքում:
- Բացատրել և կարողանալ ներկայացնել նիշերի տվյալները (character data) դրանց ներքին բինար ձևով:
- Ներկայացնել դրական ամբողջ թվերը երկուական/բինար համակարգում:

**Բովանդակություն**

Թվային համակարգեր:  
 Բինար համակարգեր:  
 Նիշերի ներկայացումը թվերի միջոցով:

Երկուականից տասական փոխակերպում:	
<b>Գործնական աշխատանքներ</b>	<b>Ընդհանրական խաչվող գաղափարներ</b>
<ul style="list-style-type: none"> <li>- Մոդելներ մշակել և օգտագործել:</li> <li>- Տվյալներ վերլուծել և մեկնաբանել:</li> <li>- Կիրառել մաթեմատիկական և հաշվողական մտածողություն:</li> </ul>	<p>Համակարգեր և մոդելներ</p> <p>Կառուցվածք և գործառույթ</p> <p>Կայունություն և փոփոխություն</p>
<b>ՀՊՁ Կարողունակություններ</b>	<b>ՀՊՁ Վերջնարդյունքներ</b>
Կ2	Հ4
Կ7	Հ6
	Հ8
	Հ9
<b>Նշումներ</b>	

<b>Թեմա 7-17 (1 ժամ)</b>	<b>Դասարան 7</b>	
<b>Աշխատանք աղյուսակներով</b>	<b>Կոդ - (ՀՄԳԳ.ԱՄՏԾ.ՄՈԴ.1)</b>	<b>Աղբյուր (BC)</b>
<b>Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ</b>		
Օգտագործելով հաշվողական գործիքներ՝ տվյալներ հավաքել և վերափոխել դրանք առավել օգտակար կամ հուսալի դարձնելու համար:		
<b>Վերջնարդյունքներ</b>		
Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կկարողանա.		
<ul style="list-style-type: none"> <li>- Ներմուծել պիտակներ (labels) և թվեր աղյուսակում:</li> <li>- Ներմուծել և պատճենել պարզ բանաձևեր</li> </ul>		

Բովանդակություն	
<p>Պիտակներ թվային աղյուսակներում.</p> <ul style="list-style-type: none"> <li>- երբ կիրառել պիտակներ,</li> <li>- քանաձևեր, ներմուծում և պատճենում:</li> </ul>	
Գործնական աշխատանքներ	Ընդհանրական խաչվող գաղափարներ
<ul style="list-style-type: none"> <li>- Մոդելներ մշակել և օգտագործել:</li> <li>- Տվյալներ վերլուծել և մեկնաբանել:</li> <li>- Կիրառել մաթեմատիկական և հաշվողական մտածողություն:</li> <li>- Տեղեկատվություն ստանալ, գնահատել և հաղորդել:</li> </ul>	<p>Օրինաչափություններ</p> <p>Պատճառ և հետևանք, մեխանիզմ և կանխատեսում</p> <p>Մասշտաբ, համամասնություն և քանակ</p>
ՀՊՁ Կարողունակություններ	ՀՊՁ Վերջնարդյունքներ
<p>Կ5</p> <p>Կ2</p>	<p>Հ30</p> <p>Հ29</p> <p>Հ28</p>
Նշումներ	

Թեմա 7-18 (2 ժամ)	Դասարան 7
Տվյալներ աղյուսակներում և հարցումների եղանակներ	Կոդ - (ՀՄԳ9.ԱՄՏԾ.ՄՈԴ.3) Աղբյուր (AG)
Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ	
<p>Որևէ երևույթից կամ գործընթացից հավաքված տվյալների տարբեր տարրերի փոխհարաբերությունները ներկայացնելու նպատակով ստեղծել հաշվարկային մոդելներ:</p>	

## Վերջնարդյունքներ

Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կկարողանա.

- Դասակարգել տվյալները աղյուսակներում, որոնք ներկայացնում են տվյալ օբյեկտի հատկանիշները:
- Օգտագործել SQL-ի հիմնական սինտաքսը և ստանալ տվյալներ աղյուսակներից:
- Թվարկել SQL-ում օգտագործվող գլխավոր բանալի բառերը:
- Ստեղծել աղյուսակներ և SQL որոնողական հարցումներ աղյուսակներից տվյալներ ստանալու նպատակով:

## Բովանդակություն

Տվյալների ներկայացումը աղյուսակային տեսքով:

Տարրական SQL հարցումներ:

Տվյալների հարցում բնական լեզվի միջոցով:

SQL հարցումների լեզվի հիմունքները:

### Գործնական աշխատանքներ

- Մոդելներ մշակել և օգտագործել:
- Կիրառել մաթեմատիկական և հաշվողական մտածողություն
- Բացատրություններ ձևակերպել և լուծումներ մշակել:

### Ընդհանրական խաչվող գաղափարներ

Օրինաչափություններ  
Պատճառ և հետևանք, մեխանիզմ և կանխատեսում  
Համակարգեր և մոդելներ

### ՀՊՁ Կարողունակություններ

Կ2

Կ7

Կ5

### ՀՊՁ Վերջնարդյունքներ

Հ6

Հ7

Հ29

## Նշումներ

<b>Թեմա 7-19 (1 ժամ)</b>	<b>Դասարան 7</b>	
<b>Թեստավորման և կարգաբերման հիմունքները</b>	<b>Կող - (ՀՄԳԳ.ԱՄՏԾ.ԾՐԳ.7)</b>	<b>Աղբյուր (AG)</b>
<b>Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ</b>		
Թեստավորել և ուղղել (գտնել և ուղղել) ծրագրի կամ ալգորիթմի սխալները՝ համոզվելով, որ այն գործում է նախատեսվածին համապատասխան:		
<b>Վերջնարդյունքներ</b>		
Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կկարողանա. - Նկարագրել Python լեզվով գրված պարզ ծրագրերում թեստավորման հիմնական քայլերը:		
<b>Բովանդակություն</b>		
Թեստավորման գաղափարը: Թեստավորման հիմնական տեսակները (մուտքի/ելքի համեմատություն):		
<b>Գործնական աշխատանքներ</b>	<b>Ընդհանրական խաչվող գաղափարներ</b>	
- Հետազոտություններ պլանավորել և իրականացնել: - Ներգրավվել ապացույցից բխող փաստարկման/հիմնավորման գործընթացում:	Էներգիա և նյութ, հոսքեր, ցիկլեր, պահպանում Կառուցվածք և գործառույթ	
<b>ՀՊՁ Կարողունակություններ</b>	<b>ՀՊՁ Վերջնարդյունքներ</b>	
Կ2	Հ8 Հ28 Հ51	
<b>Նշումներ</b>		

<b>Թեմա 7-20 (6 ժամ)</b>	<b>Դասարան 7</b>	
<b>Python լեզվի հիմունքները</b>	<b>Կող - (ՀՄԳԳ.ԱՄՏԾ.ԾՐԳ.10)</b>	<b>Աղբյուր</b>
<b>Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ</b>		
<p>Հիմնվելով աշակերտի նախնական գիտելիքների և անձնական հետաքրքրությունների վրա՝ ստեղծել նախատիպեր, որոնք հաշվարկային խնդիրներ լուծելու համար օգտագործում են ալգորիթմներ:</p>		
<b>Վերջնարդյունքներ</b>		
<p>Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կկարողանա.</p> <ul style="list-style-type: none"> <li>- Իրականացնել պարզ ալգորիթմներ՝ օգտագործելով բարձր մակարդակի սկրիպտավորման լեզուներ, ինչպիսին է Python լեզուն:</li> <li>- Գործարկել սկրիպտները և պարզ խնդիրներին լուծում տալ:</li> </ul>		
<b>Բովանդակություն</b>		
<p>Python լեզվի հիմունքները: Python-ի IDE կառուցվածքը:</p>		
<b>Գործնական աշխատանքներ</b>	<b>Ընդհանրական խաչվող գաղափարներ</b>	
<ul style="list-style-type: none"> <li>- Կիրառել մաթեմատիկական և հաշվողական մտածողություն:</li> <li>- Բացատրություններ ձևակերպել և լուծումներ մշակել:</li> </ul>	<p>Համակարգեր և մոդելներ Կառուցվածք և գործառույթ Անհատական և մշակութային արտահայտում</p>	
<p><b>ՀՊՁ Կարողունակություններ</b></p> <p>Կ2 Կ7 Կ5</p>	<p><b>ՀՊՁ Վերջնարդյունքներ</b></p> <p>Հ6 Հ7 Հ14</p>	
<b>Նշումներ</b>		

<b>Թեմա 7-21 (3 ժամ)</b>	<b>Դասարան 7</b>	
<b>Նախասահմանված ֆունկցիաներ</b>	<b>Կող - (ՀՄԳԳ. ԱՄՏԾ. ԾՐԳ. 11)</b>	<b>Աղբյուր</b>
<b>Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ</b>		
<p>Ստեղծել թվային արտիֆակտներ/աշխատանքներ՝ համակարգչային ծրագրի ներսում օգտագործելով ընթացակարգեր, տվյալների և ընթացակարգերի կոմբինացիաներ/համակցություններ կամ անկախ, բայց փոխկապակցված ծրագրեր:</p>		
<b>Վերջնարդյունքներ</b>		
<p>Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կկարողանա.</p> <ul style="list-style-type: none"> <li>- Օգտագործել բազային ֆունկցիաները և ընթացակարգերը, որոնք նախապես սահմանված են եղել ստանդարտ սկրիպտների գրադարաններում:</li> <li>- Բացատրել, որ բոլոր ստանդարտ ֆունկցիաները գրադարանում ունեն կանխորոշված իրականացման ընթացք:</li> </ul>		
<b>Բովանդակություն</b>		
Նախասահմանված ֆունկցիաներ և դրանց օգտագործումը:		
<b>Գործնական աշխատանքներ</b>	<b>Ընդհանրական խաչվող գաղափարներ</b>	
<ul style="list-style-type: none"> <li>- Հարցեր տալ և խնդիրներ սահմանել:</li> <li>- Մոդելներ մշակել և օգտագործել:</li> <li>- Կիրառել մաթեմատիկական և հաշվողական մտածողություն:</li> <li>- Բացատրություններ ձևակերպել և լուծումներ մշակել:</li> </ul>	<p>Պատճառ և հետևանք, մեխանիզմ և կանխատեսում</p> <p>Կառուցվածք և գործառույթ</p>	
<b>ՀՊՁ Կարողունակություններ</b> Կ2	<b>ՀՊՁ Վերջնարդյունքներ</b> Հ6	

47	Հ7
45	
<b>Նշումներ</b>	

<b>Թեմա 7-22 (1 ժամ)</b>	<b>Դասարան 7</b>	
<b>Կողի մեկնաբանություններ</b>	<b>Կող - (ՀՄԳԳ. ԱՄՏԾ. ԷՖԿ.2)</b>	<b>Աղբյուր</b>
	<b>(AG)</b>	

**Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ**

Հիմնավորել որոշակի հսկողական կառույցների (specific control structures) ընտրությունը, երբ առկա վտանգները և առավելությունները պարունակում են ծրագրի իրականացման, ընթերցելու կարողության և դրա կատարողականին առնչվող խնդիրներ, և բացատրել կատարված ընտրությունների ու կայացված որոշումների առավելություններն ու թույլ կողմերը:

**Վերջնարդյունքներ**

Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կկարողանա.

- Բացատրել կատարողականի և ընթերցելիության թույլ և ուժեղ կողմերը. ինչպես կարող է իրագործումը փոխվել՝ հիմնվելով կատարողականին առաջադրվող պահանջներից:
- Գրառումներ կատարել կողին առնչվող մեկնաբանությունների բաժնում:
- Ստեղծել հրահանգներ տվյալների ֆորմատի ներմուծման և արտածման համար:

**Բովանդակություն**

Ընթերցելի կող:

Ինչպե՞ս պատկերել քայլեր, որոնցով ուրիշները կարող են կատարել քո կողմից մտածված քայլերը:

Կողի ներսում կատարվող մեկնաբանություններ:



Մուտք/ելք ֆորմատի փաստաթղթավորում:	
<b>Գործնական աշխատանքներ</b>	<b>Ընդհանրական խաչվող գաղափարներ</b>
<ul style="list-style-type: none"> <li>- Տվյալներ վերլուծել և մեկնաբանել:</li> <li>- Կիրառել մաթեմատիկական և հաշվողական մտածողություն:</li> <li>- Ներգրավվել ապացույցից բխող փաստարկման/հիմնավորման գործընթացում:</li> <li>- Տեղեկատվություն ստանալ, գնահատել և հաղորդել:</li> </ul>	<p>Պատճառ և հետևանք, մեխանիզմ և կանխատեսում</p> <p>Համակարգեր և մոդելներ</p> <p>Կառուցվածք և գործառույթ</p>
<b>ՀՊՁ Կարողունակություններ</b>	<b>ՀՊՁ Վերջնարդյունքներ</b>
Կ2	Հ28
Կ4	Հ31
	Հ2
<b>Նշումներ</b>	

<b>Թեմա 7-23 (1 ժամ)</b>	<b>Դասարան 7</b>
<b>Ծրագրերի փաստաթղթավորում</b>	<b>Կող - (ՀՄԳԳ. ԱՄՏԾ. ՄՍՄ .2) Աղբյուր (BC)</b>
<b>Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ</b>	
Փաստաթղթավորել ծրագրերը, որպեսզի առավել դյուրին լինի տրամաբանությանը հետևելը, թեստավորելը կամ դրանցում առկա սխալներն ուղղելը:	
<b>Վերջնարդյունքներ</b>	
Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կկարողանա.	
<ul style="list-style-type: none"> <li>- Ընդհանրացնել փաստաթղթավորման նպատակը՝ որպես օգտագործողի և սեփական փորձառության բարելավման հնարավորություն:</li> <li>- Գրառումներ կատարել կողին առնչվող մեկնաբանությունների բաժնում:</li> </ul>	

- Ստեղծել հրահանգներ տվյալների ֆորմատի ներմուծման և արտածման համար:

### Բովանդակություն

Համեմատում ենք լավ և վատ փաստաթղթավորումը.

- սովորական տեքստ,
- պարզություն,
- պատկերային լուծումներ և նշաններ,
- կենտրոնացում օգտվողի կարիքների վրա,
- տրամաբանական աստիճանակարգ և հոսք:

Կողի ներսում կատարվող մեկնաբանություններ:

Մուտք/ելք ֆորմատի փաստաթղթավորում:

#### Գործնական աշխատանքներ

#### Ընդհանրական խաչվող գաղափարներ

- Մոդելներ մշակել և օգտագործել:
- Բացատրություններ ձևակերպել և լուծումներ մշակել:
- Տեղեկատվություն ստանալ, գնահատել և հաղորդել:

Կառուցվածք և գործառույթ  
Անհատական և մշակութային արտահայտում

#### ՀՊՁ Կարողունակություններ

Կ4

Կ2

#### ՀՊՁ Վերջնարդյունքներ

Հ2

Հ8

Հ28

### Նշումներ

Թեմա 7-24 (1 ժամ)

Դասարան 7

Աշխատում ենք վրիպակների հետ

Կող - (ՀՄԳ9. ԱՄՏԾ. ՄՍՄ .4)  
(BC)

Աղբյուր

**Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ**

Համակարգված եղանակով գտնել և ուղղել համակարգչային սարքերի և բաղկացուցիչ մասերի խնդիրները:

**Վերջնարդյունքներ**

Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կկարողանա.

- Տիրապետել հաշվողական համակարգերի խնդիրների լուծման, կազմակերպված ընթացակարգերին և զարգացնել դրանք:

- Տիրապետել հաշվողական համակարգերի խնդիրների գրանցման և տեղեկացման, կազմակերպված ընթացակարգերին և զարգացնել դրանք:

**Բովանդակություն**

Ինչպե՞ս կարդալ վրիպակի մասին հաղորդագրությունը:

Ինչպե՞ս օգտագործել էկրանի պատկերը վրիպակները գրանցելու համար:

Բացառել «ուրվական» խնդիրները:

Ինչպե՞ս գործարկել պարզ համակարգային գործիքները ախտորոշման համար:

**Գործնական աշխատանքներ**

**Ընդհանրական խաչվող գաղափարներ**

- Հետազոտություններ պլանավորել և իրականացնել:
- Բացատրություններ ձևակերպել և լուծումներ մշակել:
- Տեղեկատվություն ստանալ, գնահատել և հաղորդել:

- Պատճառ և հետևանք, մեխանիզմ և կանխատեսում
- Կառուցվածք և գործառույթ

**ՀՊՁ Կարողունակություններ**

**ՀՊՁ Վերջնարդյունքներ**

42	47
47	
<b>Նշումներ</b>	

**Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն**

**Ցրդ դասարան (առաջարկվում է 34 դասաժամ)**

<b>Թեմա 8-1 (0.5 ժամ)</b>	<b>Դասարան 8</b>	
<b>Տվյալներից մինչև տեղեկատվություն և գիտելիք</b>	<b>Կոդ - (ՀՄԳԳ.ՀՄՀ.ԱՊ.1)</b>	<b>Աղբյուր</b>
<b>(SM)</b>		

**Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ**

Նկարագրել տեղեկատվությունը հանրայնացնելու և այն գաղտնի ու ապահով պահելու վտանգներն ու առավելությունները:

**Վերջնարդյունքներ**

Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կկարողանա.

- Սահմանել տվյալների, տեղեկատվության և գիտելիքի տարբերությունները:
- Բացատրել ստատիկ և դինամիկ տվյալների էությունը:
- Համեմատել տեղեկատվության ստատիկ և դինամիկ աղբյուրները:
- Սահմանել ուղիղ և անուղղակի տվյալների աղբյուրները:
- Բացատրել ուղիղ և անուղղակի աղբյուրների հավաքած տվյալների առավելություններն ու թերությունները:
- Բացատրել, թե ինչպես կարող են տեղեկատվության ճշգրտությունը, տեղին լինելը, հնությունը, մանրամասնության աստիճանը և լիարժեքությունն ազդել դրա որակի վրա:
- Անհատապես աղբյուրներ որոնել:
- Օրինակներով նկարագրել ինտերնետում առկա լավ և վատ, առաջնային և երկրորդական աղբյուրները:
- Աշխատել ինտերնետային գրադարաններով, համայնքային կենտրոնների, կրթական

ծրագրերի, առցանց դպրոցների, համակարգչային սարքեր և ծրագրեր նվիրաբերող ծրագրերով:

### Բովանդակություն

Տվյալներ, տեղեկատվություն, գիտելիք:

Որոնողական համակարգեր.

- գտնում ենք անհրաժեշտ տեղեկատվությունը,
- գնահատում ենք դրա ճշգրտությունը՝ համեմատելով այլ աղբյուրների հետ,
- ստուգում ենք տեղեկատվության վաղեմությունը, փոփոխված լինելը:

Խորացված որոնման սկզբույթների կիրառում:

Սկզբնաղբյուրի որոնում և տարբերակում երկրորդական աղբյուրներից:

Ինտերնետային գրադարաններից, արխիվներից օգտվելու հմտություններ:

Աշխատանք ինտերնետային տվյալների շտեմարաններով:

#### Գործնական աշխատանքներ

#### Ընդհանրական խաչվող գաղափարներ

- Հարցեր տալ և խնդիրներ սահմանել:
- Տվյալներ վերլուծել և մեկնաբանել:
- Ներգրավվել ապացույցից բխող փաստարկման/հիմնավորման գործընթացում:
- Տեղեկատվություն ստանալ, գնահատել և հաղորդել:

Համակարգեր և մոդելներ  
Անհատ և հարաբերություններ

#### ՀՊՁ Կարողունակություններ

Կ8 Կ3

#### ՀՊՁ Վերջնարդյունքներ

Հ13

#### Նշումներ

<b>Թեմա 8-2 (0.5 ժամ)</b>	<b>Դասարան 8</b>	
<b>Անձնական տվյալների պաշտպանություն</b>	<b>Կող - (ՀՄԳԳ.ՀՄՀ.ԱՊ.2)</b>	<b>Աղբյուր (SM)</b>
<b>Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ</b>		
Բացատրել, թե ֆիզիկական և թվային ինչ միջոցներով է հնարավոր պաշտպանել էլեկտրոնային տեղեկատվությունը:		
<b>Վերջնարդյունքներ</b>		
<p>Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կկարողանա.</p> <ul style="list-style-type: none"> <li>- Նկարագրել, թե ինչպես կարող են անձնական տվյալները հավաքվել դրա իրավունքը չունեցող մարդկանց/կազմակերպությունների կողմից:</li> <li>- Ստեղծել գործընթացներ, որոնց միջոցով ք կարող ենք մեր տվյալները պաշտպանել նման ոտնձգություններից:</li> </ul>		
<b>Բովանդակություն</b>		
<p>Անձնական տվյալների պաշտպանություն:</p> <p>Անձնական տվյալների կորզում սոցիալական ցանցերի, պետական և մասնավոր կազմակերպությունների և կիբերհանցագործների օրինակներով:</p> <p>Անձնական տվյալների պաշտպանություն արտահոսքից:</p>		
<b>Գործնական աշխատանքներ</b>	<b>Ընդհանրական խաչվող գաղափարներ</b>	
<ul style="list-style-type: none"> <li>- Մոդելներ մշակել և օգտագործել:</li> <li>- Ներգրավվել ապացույցից բխող փաստարկման/հիմնավորման գործընթացում:</li> <li>- Տեղեկատվություն ստանալ, գնահատել և հաղորդել:</li> </ul>	<p>Պատճառ և հետևանք, մեխանիզմ և կանխատեսում</p> <p>Համակարգեր և մոդելներ</p> <p>Անհատ և հարաբերություններ</p> <p>Արդարություն և զարգացում</p>	
<b>ՀՊՁ Կարողունակություններ</b>	<b>ՀՊՁ Վերջնարդյունքներ</b>	

Կ8	Հ13
Կ3	Հ46
Կ2	
<b>Նշումներ</b>	

<b>Թեմա 8-3 (1 ժամ)</b>	<b>Դասարան 8</b>
<b>Էլեկտրոնային ապահովություն</b>	<b>Կող - (ՀՄԳԳ.ՀՄՀ.ԱՊ.4) Աղբյուր (SM)</b>

**Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ**

Ճանաչել տեխնոլոգիայի պատշաճ և ոչ ճիշտ օգտագործման եղանակները կամ դեպքերը, երբ կատարում ենք հրապարակումներ/պոստեր սոցիալական մեդիայում, ուղարկում ենք էլեկտրոնային նամակներ կամ տեքստեր և որոնում ենք կատարում ինտերնետում:

**Վերջնարդյունքներ**

Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կկարողանա.

- Պահպանել գաղտնիությունը և տվյալները սոցիալական մեդիայում:
- Պատշաճ հաղորդակցվել էլեկտրոնային փոստի և հաղորդագրությունների ծրագրերով:
- Նկարագրել համակարգչի օգտագործման հետ կապված «առողջությանն» ու ապահովությանն առնչվող խնդիրները:
- Կարողանալ կարգավորել սեփական առօրյան՝ ելնելով ստացված գիտելիքից:

**Բովանդակություն**

Էլեկտրոնային ապահովություն և «առողջություն»:

- Տեղեկատվության պաշտպանություն էլեկտրոնային հաղորդակցության ընթացքում:
- էլեկտրոնային նամակ. ճիշտ գրելու ձևերը:

- Էլեկտրոնային հաղորդակցության հիմնական տեխնիկական և էթիկայի նորմերը (Netiquette՝ թվային էթիկետ):

Էլեկտրոնային սարքերից օգտվելու հիգիենա:

- Ինտերնետային կախվածություն, ինչպե՞ս խուսափել:

- Հեռախոսներում և համակարգիչներում թվային առողջության ծրագրերի կարգավորում:

Գործնական աշխատանքներ	Ընդհանրական խաչվող գաղափարներ
<ul style="list-style-type: none"> <li>- Հարցեր տալ և խնդիրներ սահմանել:</li> <li>- Ներգրավվել ապացույցից բխող փաստարկման/հիմնավորման գործընթացում:</li> <li>- Տեղեկատվություն ստանալ, գնահատել և հաղորդել:</li> </ul>	<p>Պատճառ և հետևանք, մեխանիզմ և կանխատեսում</p> <p>Անհատ և հարաբերություններ</p> <p>Գիտատեխնիկական նորարարություն</p>
<p><b>ՀՊՁ Կարողունակություններ</b></p> <p>Կ8</p> <p>Կ3</p> <p>Կ5</p>	<p><b>ՀՊՁ Վերջնարդյունքներ</b></p> <p>Հ13</p> <p>Հ14</p>
<b>Նշումներ</b>	

Թեմա 8-4 (0.5 ժամ)	Դասարան 8	
Էլեկտրոնային ապահովություն	Կող - (ՀՄԳԳ.ՀՄՀ.ԱՊ.5)	Աղբյուր (SM)
<b>Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ</b>		
<p>Հասկանալ սարքերի ապահով և արդյունավետ օգտագործման այն վտանգները (օրինակ՝ ՍՊԱՄ, ֆիշինգ, վիրուսներ), որոնք առնչվում են տեխնոլոգիայի օգտագործման տարբեր ձևերին (օրինակ՝ ծրագրային ապահովումներ ներբեռնելիս և տեղադրելիս/օգտագործելիս, հիպերհղումներ/հղումներ ակտիվացնելիս, ֆայլեր բացելիս):</p>		



### Վերջնարդյունքներ

Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կկարողանա.

- Պաշտպանել սոցիալական ցանցերում գրանցված անձնական էջերը:
- Պաշտպանել էլեկտրոնային փոստի սեփական հաշիվը:
- Կատարել տվյալների կրկնօրինակում և պահպանում:
- Օրինակներով բացատրել *տվյալների ապահովություն, գաղտնիություն և միասնականություն* տերմինների նշանակությունը:
- Քննարկել և պատշաճ կարևորել ինչպես տվյալների, այնպես էլ հաշվողական համակարգի անվտանգությունը:

### Բովանդակություն

Էլեկտրոնային ապահովություն.

- էլեկտրոնային փոստը և հիմնական սոցիալական ցանցերի հաշիվները,
- տվյալների կրկնօրինակման սկզբուքները և մեթոդները,
- տվյալների պահպանման հարթակները:

Էլեկտրոնային հաղորդակցություն.

- գաղտնի տեղեկատվություն,
- տվյալների և համակարգի անվտանգություն:

### Գործնական աշխատանքներ

- Մոդելներ մշակել և օգտագործել:
- Ներգրավվել ապացույցից բխող փաստարկման/հիմնավորման գործընթացում:

### Ընդհանրական խաչվող գաղափարներ

Անհատ և հարաբերություններ  
Գիտատեխնիկական նորարարություն

### ՀՊՁ Կարողունակություններ

Կ8

Կ3

Կ2

### ՀՊՁ Վերջնարդյունքներ

Հ13

Հ46

<b>Նշումներ</b>

Թեմա 8-5 (1 ժամ)	Դասարան 8
Արտաքին մոդուլներ և ծրագրային միջերեսներ	Կող - (ՀՄԳԳ.ՀՄՀ.ԻՐՎ.1) Աղբյուր (AG)

<b>ՆպատակԳիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ</b>
---

Ներկառուցել առկա ծրագրային կոդը, մեդիան և գրադարանները ելքային ծրագրերում և տալ պատշաճ վերագրում:

Թվել և բացատրել լիցենզիաների գլխավոր տեսակները:

<b>Վերջնարդյունքներ</b>
-------------------------

Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կկարողանա.

- Միացնել համակարգչային ծրագրերի գրադարանները, բաց աղբյուրի և ազատ լիզենզիայով ծրագրերը՝ որպես Python-ի մոդուլներ, դրանց ֆունկցիոնալությունը վերաօգտագործելու նպատակով:

<b>Բովանդակություն</b>
------------------------

Ներմուծում ենք արտաքին մոդուլներ և ծրագրային միջերեսներ:

Գործնական աշխատանքներ	Ընդհանրական խաչվող գաղափարներ
<ul style="list-style-type: none"> <li>- Հարցեր տալ և խնդիրներ սահմանել:</li> <li>- Բացատրություններ ձևակերպել և լուծումներ մշակել:</li> <li>- Տեղեկատվություն ստանալ, գնահատել և հաղորդել:</li> </ul>	<p>Անհատ և հարաբերություններ</p> <p>Արդարություն և զարգացում</p>
<b>ՀՊՁ Կարողունակություններ</b>	<b>ՀՊՁ Վերջնարդյունքներ</b>

45	<14
42	<28
45	<30
<b>Նշումներ</b>	

<b>Թեմա 8-6 (0.5 ժամ)</b>	<b>Դասարան 8</b>
<b>Հեղինակային իրավունք</b>	<b>Կողմ - (ՀՄԳԳ.ՀՄՀ.ԻՐՎ.2) Աղբյուր (SM)</b>

**Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ**

Ծրագրեր ստեղծելիս կամ վերակազմավորելիս պահպանել մտավոր սեփականության իրավունքը և տալ համապատասխան վերագրումներ:

**Վերջնարդյունքներ**

Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կկարողանա.

- Բացատրել ազատ աղբյուրի ծրագրերի սկզբունքները:
- Նկարագրել, թե ինչ ազդեցություն է ունենում բաց աղբյուրի ծրագիրը SS ոլորտի զարգացման վրա:
- Որևէ աշխատանք/արտիֆակտ ստեղծելիս հարգել մտավոր սեփականությունը:
- Օգտագործել տեխնոլոգիան ապահով, հարգելից և պատասխանատու կերպով, տարբերել ընդունելի և անընդունելի վարքագծերը:
- Արդյունավետ օգտագործել որոնման տեխնոլոգիաները և թվային տվյալները գնահատելիս խորաթափանց լինել:
- Ընտրել, օգտագործել, համակցել տարբեր համակարգչային ծրագրեր (այդ թվում ինտերնետ ծառայություններ) և դրա հիման վրա նախագծել ու ստեղծել որևէ որոշակի նպատակին ծառայող բովանդակություն, ներառյալ՝ տեղեկատվության հավաքում, վերլուծություն, գնահատում և ներկայացում:

## Բովանդակություն

Հեղինակային իրավունք:

Ազատ աղբյուրով ծրագրերի իմաստը և կենսունակության մոդելները:

Ազատ աղբյուրով ծրագրերի ազդեցությունը տեխնոլոգիաների զարգացման վրա:

Հեղինակային իրավունքի տեսանկյունից ազատ կիրառման նյութերի որոնում և կիրառում սեփական գործերում:

Ազատ տարածվող ծրագրային այլընտրանքները հայտնի ծրագրերի համար:

### Գործնական աշխատանքներ

### Ընդհանրական խաչվող գաղափարներ

- Ներգրավվել ապացույցից բխող փաստարկման/հիմնավորման գործընթացում:  
- Տեղեկատվություն ստանալ, գնահատել և հաղորդել:

Անհատ և հարաբերություններ  
Արդարություն և զարգացում

### ՀՊՁ Կարողունակություններ

Կ2

Կ5

Կ3

### ՀՊՁ Վերջնարդյունքներ

Հ14

Հ28

Հ30

Հ22

## Նշումներ

### Թեմա 8-7 (1 ժամ)

### Դասարան 8

Ինչպե՞ս է տեխնոլոգիան օգնում արդյունավետ սովորելուն

Կող - (ՀՄԳԳ.ՀՄՀ.ԱԶԴ.1)

Աղբյուր

(AH)

### Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ

Համեմատել մարդկանց առօրյա և մասնագիտական գործունեության վրա ազդող համակարգչային տեխնոլոգիաների վատ և լավ դրսևորումները:

**Վերջնարդյունքներ**

Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կկարողանա.

- Գտնել և քննարկել տեխնոլոգիական այն հմտությունները և փորձը, որոնք անհրաժեշտ են դասարանում կամ աշխատավայրում արդյունավետ աշխատելու համար, ինչպես նաև դրանք ձեռք բերելու հնարավորությունները:

**Բովանդակություն**

Ի՞նչ տեխնոլոգիա է մեզ անհրաժեշտ հաջողության հասնելու համար.

- դասարանում,
- աշխատավայրում:

Ինչպե՞ս կարող ենք շարունակաբար սովորել:

<b>Գործնական աշխատանքներ</b>	<b>Ընդհանրական խաչվող գաղափարներ</b>
------------------------------	--------------------------------------

<ul style="list-style-type: none"> <li>- Բացատրություններ ձևակերպել և լուծումներ մշակել:</li> <li>- Ներգրավվել ապացույցից բխող փաստարկման/հիմնավորման գործընթացում:</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>Համակարգեր և մոդելներ</li> <li>Կառուցվածք և գործառույթ</li> <li>Գիտատեխնիկական նորարարություն</li> </ul>
--	---

<p><b>ՀՊՁ Կարողունակություններ</b></p> <p>Կ4</p> <p>Կ5</p> <p>Կ7</p>	<p><b>ՀՊՁ Վերջնարդյունքներ</b></p> <p>Հ51</p> <p>Հ40</p> <p>Հ10</p>
--	---

**Նշումներ**

<b>Թեմա 8-8 (0.5 ժամ)</b>	<b>Դասարան 8</b>
<b>Ապատեղեկատվություն. ինչպե՞ս և ինչու՞</b>	<b>Կոդ - (ՀՄԳԳ.ՀՄՀ.ԱՁԴ.2) Աղբյուր</b>

	(AH)
<b>Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ</b>	
Քննարկել առկա տեխնոլոգիաների դիզայնում կողմնակալության հասանելիության խնդիրները:	
<b>Վերջնարդյունքներ</b>	
Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կկարողանա. <ul style="list-style-type: none"> <li>- Գնահատել, թե ինչպես կարող է մեդիան և տեխնոլոգիան օգտագործվել տեղեկատվությունը խեղաթյուրելու, չափազանցացնելու և թյուր ներկայացնելու համար:</li> </ul>	
<b>Բովանդակություն</b>	
«Կարդացել եմ առցանց, պիտի որ ճիշտ լինի, թե՞ ոչ».	
<ul style="list-style-type: none"> <li>- Ի՞նչ է կողմնակալությունը:</li> <li>- Ինչպե՞ս և ինչո՞ւ են մարդիկ աղավաղում և սխալ ներկայացնում տեղեկատվությունը:</li> <li>- Ապատեղեկատվություն և սխալ տեղեկատվություն:</li> </ul>	
<b>Գործնական աշխատանքներ</b>	<b>Ընդհանրական խաչվող գաղափարներ</b>
<ul style="list-style-type: none"> <li>- Բացատրություններ ձևակերպել և լուծումներ մշակել:</li> <li>- Ներգրավվել ապացույցից բխող փաստարկման/հիմնավորման գործընթացում:</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>Պատճառ և հետևանք, մեխանիզմ և կանխատեսում</li> <li>Անհատ և հարաբերություններ</li> <li>Արդարություն և զարգացում</li> </ul>
<b>ՀՊԶ Կարողունակություններ</b>	<b>ՀՊԶ Վերջնարդյունքներ</b>
Կ4	Հ40
Կ8	Հ18
<b>Նշումներ</b>	

<b>Թեմա 8-9 (3 ժամ)</b>	<b>Դասարան 8</b>
-------------------------	------------------

Մուլտիմեդիա, աղյուսակներ և վեբկայք. ստեղծում ենք նոր աշխատանքներ	Կոդ - (ՀՄԳԳ.ԹԳԾ.ՕԳՏ.1)	Աղբյուր (AK)
--	------------------------	--------------

**Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ**

Հաշվողական արտիֆակտները/աշխատանքները բարելավելու նպատակով փնտրել և գտնել տարբեր տեսանկյուններ:

**Վերջնարդյունքներ**

Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կկարողանա.

- Տպել մեկ բուլետիմ հինգ բառ/բուլետ անգամ դասարանի թիվը արագությամբ (օրինակ՝ հինգերորդ դասարանցին պետք է տպի 5\*5 բառ բուլետ, 25 բառ/բուլետ արագությամբ):
- Աշխատանք մուլտիմեդիայի հետ. տարբեր ֆորմատներից ստացվող տեղեկատվությունն ինտեգրել մեկ արտիֆակտում:
  - Գտնել կամ ստեղծել համապատասխան ռեսուրսներ, դիտարկել պրեզենտացիաներում սահիկների փոփոխման լավ հաջորդականություն և ժամանակի հաշվարկ՝ նպատակ ունենալով հարմարեցնել այն լսարանի նպատակին և կարիքներին:
  - Թվային աղյուսակների հետ աշխատանք. ստեղծել վերջնական թվային աղյուսակ, որը համապատասխանում է առաջադրված նպատակին և հնարավոր է պատշաճ ներկայացնել լսարանին: Գնահատել թե որքան լավ կարող է այդ աշխատանքը ծառայել իր նպատակին:
  - Վեբկայքերի ստեղծում. ստեղծել փոփակապակցված վեբէջերի շարք՝ տեղադրելով այլ էջեր/վեբկայքեր տանող հղումները, ավելացնելով էջերի միջով նավարկելու հնարավորություն: Տեղադրել էջերի վրա նկարներ և տեքստ այնպես, որ դրանք համապատասխանեն լսարանի պահանջներին, և կայքի բովանդակությանը տալ պարզ կառուցվածք:

**Բովանդակություն**

Մեծացնում ենք տպելու արագությունը:

Մուլտիմեդիա. մեդիայի տեսակներ.

- Ինչպես են տարբեր մեդիաներն աշխատում միասին:

Մեդիա ռեսուրսներով պրեզենտացիաներ/սահիկաշարեր.

- Գտնում ենք լավ ռեսուրսներ:

- Ինչպես ենք դասավորում սահիկները:
- Ով է սահիկաշարի լսարանը, որոնք են լսարանի նպատակը և կարիքները:

Թվային աղյուսակներ.

- Ի՞նչ խնդիր է լուծում թվային աղյուսակը:
- Ի՞նչ նպատակ և կարիքներ ունի թվային աղյուսակի լսարանը:
- Նոր ֆունկցիաներ և գործիքներ աղյուսակում:

Ստեղծում ենք վեբկայք.

- Որոշում ենք կայքի կառուցվածքը, թե ինչ էջեր ենք ունենալու և ինչ բովանդակությամբ:
- Ստեղծում ենք փոխադարձ հղումներ:
- Տեղադրում ենք էջերում տեքստեր և նկարներ:
- Վեբկայքի լսարանը:

Գործնական աշխատանքներ	Ընդհանրական խաչվող գաղափարներ
<ul style="list-style-type: none"> <li>- Տվյալներ վերլուծել և մեկնաբանել:</li> <li>- Բացատրություններ ձևակերպել և լուծումներ մշակել:</li> <li>- Տեղեկատվություն ստանալ, գնահատել և հաղորդել:</li> </ul>	<p>Օրինաչափություններ</p> <p>Անհատական և մշակութային արտահայտում</p> <p>Գիտատեխնիկական նորարարություն</p>
<p><b>ՀՊՁ Կարողունակություններ</b></p> <p>Կ5</p> <p>Կ2</p> <p>Կ7</p>	<p><b>ՀՊՁ Վերջնարդյունքներ</b></p> <p>Հ12</p> <p>Հ14</p> <p>Հ07</p> <p>Հ46</p> <p>Հ28</p> <p>Հ29</p> <p>Հ51</p> <p>Հ25</p>
<p><b>Նշումներ</b></p>	



--

<b>Թեմա 8-10 - (1 ժամ)</b>	<b>Դասարան 8</b>
<b>Ինչո՞ւ և ինչպես չափել մեր ստեղծածի օգտակարությունն ու հասանելիությունը</b>	<b>Կող - (ՀՄԳԳ.ԹԳԾ.ՕԳՏ.2) Աղբյուր (ԱԿ)</b>

**Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք 3րդ մակարդակ**

Գնահատել և կատարելագործել հաշվողական արտիֆակտները/աշխատանքները՝ դրանք ավելի օգտագործելի և հասանելի դարձնելու համար:

**Վերջնարդյունքներ**

Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կկարողանա.

- Մշակել տրված հաշվողական արտիֆակտի օգտակարության չափանիշներ՝ կազմակերպելով հարցումներ և դիտարկումներ:

**Բովանդակություն**

Օգտակարություն և հասանելիություն.

- ո՞ւմ և ինչպես է օգնելու մեր հաշվողական արտիֆակտը/աշխատանքը,
- Ինչպե՞ս գնահատել/չափել օգտակարությունը,
- հարցումներ և դիտարկումներ:

<b>Գործնական աշխատանքներ</b>	<b>Ընդհանրական խաչվող գաղափարներ</b>
<ul style="list-style-type: none"><li>- Բացատրություններ ձևակերպել և լուծումներ մշակել:</li><li>-Ներգրավվել ապացույցից բխող փաստարկման/հիմնավորման գործընթացում:</li><li>- Տեղեկատվություն ստանալ, գնահատել և հաղորդել:</li></ul>	<ul style="list-style-type: none"><li>Համակարգեր և մոդելներ</li><li>Կառուցվածք և գործառույթ</li><li>Անհատ և հարաբերություններ</li><li>Անհատական և մշակութային արտահայտում</li></ul>

**ՀՊՁ Կարողունակություններ**

Կ2

Կ5

**ՀՊՁ Վերջնարդյունքներ**

Հ08

Հ28

Հ29

Հ51

Հ25

**Նշումներ**

<b>Թեմա 8-11 (1 ժամ)</b>	<b>Դասարան 8</b>	
<b>Ինվարիանտներ</b>	<b>Կող - (ՀՄԳԳ.ԹԳԾ.ՕԳՏ.3)</b>	<b>Աղբյուր</b>
<b>Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ</b>		
Ցուցադրել, թե ինչ եղանակներով է տվյալ ալգորիթմը կիրառվում տարբեր ոլորտների խնդիրները լուծելու համար: Ճանաչել առօրյա կյանքի տարբեր ոլորտներում առկա ինվարիանտները/կայուն չփոփոխվող ֆունկցիաները/հատկությունները կամ քանակական միավորները:		
<b>Վերջնարդյունքներ</b>		
Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կկարողանա. - Գտնել, թե օբյեկտի որ հատկությունն է մնում անփոփոխ: - Օգտագործել ինվարիանտի գաղափարը՝ ենթադրություններն ապացուցելու նպատակով:		
<b>Բովանդակություն</b>		
Ինվարիանտները՝ պնդումների ստուգման համատեքստում:		
<b>Գործնական աշխատանքներ</b>	<b>Ընդհանրական խաչվող գաղափարներ</b>	
<ul style="list-style-type: none"> <li>- Մոդելներ մշակել և օգտագործել:</li> <li>- Կիրառել մաթեմատիկական և հաշվողական մտածողություն:</li> <li>- Ներգրավվել ապացույցից բխող փաստարկման/հիմնավորման գործընթացում:</li> <li>-</li> </ul>	Կառուցվածք և գործառույթ Անհատական և մշակութային արտահայտում	
<b>ՀՊՁ Կարողունակություններ</b> Կ5 Կ2	<b>ՀՊՁ Վերջնարդյունքներ</b> Հ14 Հ7	

47

<6

<4

Նշումներ

<b>Թեմա 8-12 (1 ժամ)</b>	<b>Դասարան 8</b>	
<b>Աշխատում ենք միասին առցանց</b>	<b>Կող - (ՀՄԳԳ.ԹԳԾ.ՀԱՂ.1)</b>	<b>Աղբյուր (AH)</b>
<b>Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ</b>		
Փնտրել և ներառել թիմակիցների և օգտատերերի արձագանքը՝ օգտատերերի կարիքներին համապատասխան լուծումը կատարելագործելու համար:		
<b>Վերջնարդյունքներ</b>		
<p>Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կկարողանա.</p> <ul style="list-style-type: none"> <li>- Անհատապես կամ համագործակցությամբ օգտագործել առաջադեմ գործիքներ առցանց բովանդակության մշակման և ստեղծման համար (օրինակ՝ թվային պորտֆոլիո, մուլտիմեդիա, բլոգ, վեբկայք):</li> </ul>		
<b>Բովանդակություն</b>		
<p>Եկեք աշխատենք միասին, առցանց, որևէ բան ստեղծենք.</p> <ul style="list-style-type: none"> <li>- օրինակներ՝ թվային պորտֆոլիո, մուլտիմեդիա, բլոգ, վեբկայք,</li> <li>- ինչպես ստանալ հետադարձ կապ, կրկնողաբար փոփոխել, որպեսզի մեր խմբային լուծումը բարելավվի:</li> </ul>		
<b>Գործնական աշխատանքներ</b>	<b>Ընդհանրական խաչվող գաղափարներ</b>	
<ul style="list-style-type: none"> <li>- Բացատրություններ ձևակերպել և լուծումներ մշակել</li> <li>- Տեղեկատվություն ստանալ, գնահատել և հաղորդել:</li> </ul>	<p>Անհատ և հարաբերություններ</p> <p>Անհատական և մշակութային արտահայտում</p>	
<p><b>ՀՊՁ Կարողունակություններ</b></p> <p>Կ4</p> <p>Կ2</p> <p>Կ7</p>	<p><b>ՀՊՁ Վերջնարդյունքներ</b></p> <p>Հ2</p> <p>Հ7</p> <p>Հ8</p>	

<b>Նշումներ</b>	

<b>Թեմա 8-13 (1 ժամ)</b>	<b>Դասարան 8</b>	
<b>Առցանց բովանդակության ստեղծում</b>	<b>Կող - (ՀՄԳԳ.ԹԳԾ.ՕՊՏ.1)</b>	<b>Աղբյուր (AK)</b>
<b>Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ</b>		
<p>Հաշվողական արտիֆակտներ ստեղծելիս համագործակցել բազմաթիվ աջակից ներդրողների հետ՝ օգտագործելով այնպիսի ռազմավարություններ, ինչպիսիք են ամբոխային աղբյուրաստեղծումը (crowdsourcing) կամ հարցումները:</p>		
<b>Վերջնարդյունքներ</b>		
<p>Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կկարողանա.</p> <ul style="list-style-type: none"> <li>- Անհատապես և համագործակցությամբ օգտագործել առցանց բովանդակություն ստեղծելու և նախագծելու առաջադեմ գործիքներ (օրինակ՝ թվային պորտֆոլիո, մուլտիմեդիա, բլոգ, վեբկայք):</li> <li>- Անհատապես կամ համագործակցությամբ մշակել և իրականացնել առցանց հարցում:</li> <li>- Տվյալներ ներմուծել և խմբագրել շտեմարաններում: Բացատրել, թե ինչպես է պետք օգտագործել շտեմարանները տեղեկատվություն որոնելու և տեսակավորելու համար: Քննարկել, թե ընտրված տվյալների խմբաքանակը ինչ հարցերի կարող է պատասխանել և ո՞ր հարցերին չի կարող պատասխանել:</li> </ul>		
<b>Բովանդակություն</b>		
<p>Ստեղծում ենք տարատեսակ առցանց բովանդակություն.</p> <ul style="list-style-type: none"> <li>- իրականացնում ենք առցանց հարցում,</li> <li>- օգտագործում ենք տվյալների շտեմարաններ,</li> <li>- քննարկում ենք, թե ինչ հարցերի կարող է պատասխանել տվյալների շտեմարանը, իսկ ինչ հարցերի չի կարող պատասխանել:</li> <li>- Քրաուդսորսինգի օրինակներ և կիրառություն մեր նպատակների համար:</li> </ul>		
<b>Գործնական աշխատանքներ</b>	<b>Ընդհանրական խաչվող գաղափարներ</b>	
- Տվյալներ վերլուծել և մեկնաբանել:	Անհատ և Հարաբերություններ	

<ul style="list-style-type: none"> <li>- Բացատրություններ ձևակերպել և լուծումներ մշակել:</li> <li>- Տեղեկատվություն ստանալ, գնահատել և հաղորդել:</li> </ul>	Անհատական և մշակութային արտահայտում	
<b>ՀՊՁ Կարողունակություններ</b> Կ5 Կ2 Կ3	<b>ՀՊՁ Վերջնարդյունքներ</b> Հ14 Հ25 Հ28 Հ34	
<b>Նշումներ</b>		
<b>Թեմա 8-14 (1 ժամ)</b>	<b>Դասարան 8</b>	
<b>Ստեղծագործում ենք խնդիրների շուրջ</b>	<b>Կող - (ՀՄԳԳ.ԹԳԾ.ՕՊՏ.2)</b>	<b>Աղբյուր (AH)</b>
<b>Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ</b>		
<p>Տարբեր մշակույթներից եկող և տարբեր մասնագիտական ոլորտներում աշխատող մարդկանց փոխկախվածությունը բարելավելու նպատակով իրագործվող նախագծի վրա աշխատելիս օգտագործել համագործակցային գործիքներ և մեթոդներ:</p>		
<b>Վերջնարդյունքներ</b>		
<p>Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կկարողանա.</p> <ul style="list-style-type: none"> <li>- Տեղեկատվություն գտնելու նպատակով կատարել ընդլայնված որոնումներ՝ օգտվելով թվային աղբյուրների տարբեր տեսակներից (Բուլյան օպերատորներ, կարդալու մակարդակի, առարկայի, մեդիայի տեսակի պես սահմանափակումները հաշվի առնելով):</li> <li>- Անհատապես կամ համագործակցությամբ ստեղծել արտիֆակտ, որը պատասխանում է հետազոտական հարցին և ներկայացնում է արդյունքներն ու եզրահանգումները:</li> </ul>		
<b>Բովանդակություն</b>		



Դժվար խնդիրներ. ստեղծագործ լուծումներ.

- սահմանում ենք դժվար հետազոտական խնդիր,
- օգտագործում ենք խորացված որոնումներ ոչ պարզունակ տեղեկատվություն գտնելու համար,
- համագործակցում ենք բոլորի համար բավարար լուծում գտնելու համար:

Գործնական աշխատանքներ	Ընդհանրական խաչվող գաղափարներ
<ul style="list-style-type: none"> <li>- հետազոտություններ պլանավորել և իրականացնել:</li> <li>- Բացատրություններ ձևակերպել և լուծումներ մշակել:</li> <li>- Տեղեկատվություն ստանալ, գնահատել և հաղորդել:</li> </ul>	<p>Անհատ և հարաբերություններ</p> <p>Անհատական և մշակութային արտահայտում</p>
<p><b>ՀՊՁ Կարողունակություններ</b></p> <p>Կ5</p> <p>Կ2</p> <p>Կ3</p> <p>Կ6</p>	<p><b>ՀՊՁ Վերջնարդյունքներ</b></p> <p>Հ14</p> <p>Հ25</p> <p>Հ28</p> <p>Հ34</p> <p>Հ24</p> <p>Հ42</p>
<b>Նշումներ</b>	

Թեմա 8-15 (1 ժամ)	Դասարան 8	
Համակարգչի ճարտարապետություն	Կող - (ՀՄԳԳ.ՍՐՔ.ԱՇԽ.3)	Աղբյուր
<b>Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ</b>		
Համեմատել ծրագրային հավելվածների, համակարգչային ծրագրերի և սարքերի շերտերի միջև արստրակցիայի և փոխազդեցության մակարդակները:		
<b>Վերջնարդյունքներ</b>		

Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կկարողանա.

- Բացատրել Վոն Նյումանի մոդելի հիմքը:
- Բացատրել, թե ինչն է առաջնային պահեստավորման անհրաժեշտությունը:
- Բացատրել, երկրորդային (այդ թվում տեղահանվող) պահեստավորման անհրաժեշտությունը:
- Գտնել/ճանաչել այն համակարգչային սարքերը, որոնք օգտագործվում են տեղեկատվության/տվյալների ներմուծման, արտածման և երկրորդային պահեստավորման համար:
- Բացատրել որոշ տեսակի սարքերի ներքին գործողության հիմնական սկզբունքները:

### Բովանդակություն

Համակարգչի ճարտարապետություն:

Ֆոն-Նյումանյան մոդելը:

Հիշողության տեսակները:

Մուտքի/Ելքի սարքեր:

#### Գործնական աշխատանքներ

#### Ընդհանրական խաչվող գաղափարներ

- Մոդելներ մշակել և օգտագործել:
- Կիրառել մաթեմատիկական և հաշվողական մտածողություն:
- Ներգրավվել ապացույցից բխող փաստարկման/հիմնավորման գործընթացում:

Համակարգեր և մոդելներ  
Կառուցվածք և գործառույթ

#### ՀՊՁ Կարողունակություններ

Կ7

Կ5

#### ՀՊՁ Վերջնարդյունքներ

Հ6

Հ12

### Նշումներ

<b>Թեմա 8-16 (0.5 ժամ)</b>	<b>Դասարան 8</b>	
<b>Սխալների փաստաթղթավորում</b>	<b>Կող - (ՀՄԳԳ.ՍՐՔ.ԽԼԾ.1)</b>	<b>Աղբյուր (AG)</b>
<b>Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ</b>		
Մշակել համակարգային խնդիրների լուծման եղանակներ բովանդակող ուղեցույցներ, որոնք օգտագործելով՝ ուրիշները կարող են ճանաչել և ուղղել սխալները:		
<b>Վերջնարդյունքներ</b>		
<p>Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կկարողանա.</p> <ul style="list-style-type: none"> <li>- Մշակել նախագծի փաստաթղթավորում, որում նկարագրված լինեն ծրագրի սխալ աշխատանքի դեպքում խնդրի լուծման գլխավոր քայլերը:</li> </ul>		
<b>Բովանդակություն</b>		
<p>Խնդիրների հայտնաբերում և վերացում.</p> <ul style="list-style-type: none"> <li>- Փաստաթղթավորում ենք ծրագրի հնարավոր սխալները և դրանց վերացման քայլերը:</li> </ul>		
<b>Գործնական աշխատանքներ</b>	<b>Ընդհանրական խաչվող գաղափարներ</b>	
<ul style="list-style-type: none"> <li>- Մոդելներ մշակել և օգտագործել:</li> <li>- Տեղեկատվություն ստանալ, գնահատել և հաղորդել:</li> </ul>	<p>Անհատ և հարաբերություններ</p> <p>Անհատական և մշակութային արտահայտում</p>	
<p><b>ՀՊԶ Կարողունակություններ</b></p> <p>Կ2</p> <p>Կ7</p> <p>Կ4</p>	<p><b>ՀՊԶ Վերջնարդյունքներ</b></p> <p>Հ7</p> <p>Հ2</p>	
<b>Նշումներ</b>		

Թեմա 8-17 (6 ժամ)	Դասարան 8	
Տվյալների շտեմարաններ: MySQL հիմունքներ	Կող - (ՀՄԳԳ.ՍՐՔ.ՑՆՑ.1)	Աղբյուր
<b>Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ</b>		
Իմանալ տվյալների ներկայացման տարատեսակ մոտեցումները, դրանց լավ կողմերն ու թերությունները:		
<b>Վերջնարդյունքներ</b>		
<p>Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կկարողանա.</p> <ul style="list-style-type: none"> <li>- Օգտագործել աղյուսակները՝ որպես տվյալների պարզ պահեստ:</li> <li>- Նկարագրել ռելյացիոն/հարաբերական տվյալների շտեմարանների (relational database) առանձնահատկությունները, նաև թե ինչպես են դրանք լուծում ֆայլի վրա հիմնված մոտեցման մեջ առկա խնդիրները:</li> <li>- Նկարագրել տվյալների խմբերի փոխադարձ կապերի գաղափարը:</li> <li>- Օգտագործել MySQL ծրագիրը պարզ տվյալների խմբեր պահեստավորելու համար:</li> <li>- Ստեղծել SQL հարցումներ, որոնց միջոցով հնարավոր է տվյալների շտեմարանից տվյալներ ստանալ:</li> </ul>		
<b>Բովանդակություն</b>		
<p>Ֆայլերի հիման վրա տվյալների պահպանման համակարգեր. առավելությունները և թերությունները:</p> <p>Տվյալների շտեմարաններ:</p> <p>Ռելյացիոն/հարաբերական տվյալների շտեմարաններ:</p> <p>MySQL հիմունքներ:</p>		
<b>Գործնական աշխատանքներ</b>	<b>Ընդհանրական խաչվող գաղափարներ</b>	
- Տվյալներ վերլուծել և մեկնաբանել:	Օրինաչափություններ	

<ul style="list-style-type: none"> <li>- Կիրառել մաթեմատիկական և հաշվողական մտածողություն:</li> <li>- Բացատրություններ ձևակերպել և լուծումներ մշակել:</li> </ul>	<p>Պատճառ և հետևանք, մեխանիզմ և կանխատեսում</p>
<p><b>ՀՊՁ Կարողունակություններ</b></p> <p>Կ7</p> <p>Կ5</p>	<p><b>ՀՊՁ Վերջնարդյունքներ</b></p> <p>Հ6</p> <p>Հ12</p>
<p><b>Նշումներ</b></p>	

<p><b>Թեմա 8-18 (2 ժամ)</b></p>	<p><b>Դասարան 8</b></p>	
<p><b>Ցանցային հասցեավորում</b></p>	<p><b>Կող - (ՀՄԳԳ.ՍՐՔ.ՑՆՑ.2)</b></p>	<p><b>Աղբյուր (AG)</b></p>
<p><b>Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ</b></p>		
<p>Մոդելավորել պրոտոկոլների/հաղորդակարգերի դերը ցանցով և ինտերնետով տվյալներ փոխանցելիս:</p>		
<p><b>Վերջնարդյունքներ</b></p>		
<p>Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կկարողանա.</p> <ul style="list-style-type: none"> <li>- Բացատրել IP հասցեների ֆորմատը և թե ինչպես է IP հասցեն կապվում սարքի կամ ցանցի հետ:</li> <li>- Բացատրել, թե ինչպես է Ռեսուրսների միանման լոկատորը (Uniform Resource Locator (URL)) օգտագործվում ինտերնետում WWW-ում ռեսուրսներ գտնելու համար, ինչպես նաև Դոմեյնի անուն ծառայության (Domain Name Service) դերը:</li> </ul>		
<p><b>Բովանդակություն</b></p>		
<p>Ցանցային հասցեավորում:</p>		

IP հասցեներ:

MAC հասցեներ:

DNC սերվերներ:

**Գործնական աշխատանքներ**

**Ընդհանրական խաչվող գաղափարներ**

- Մոդելներ մշակել և օգտագործել:
- Տվյալներ վերլուծել և մեկնաբանել:
- Կիրառել մաթեմատիկական և հաշվողական մտածողություն:

Համակարգեր և մոդելներ  
Գլոբալիզացիա և կայունություն

**ՀՊՁ Կարողունակություններ**

Կ7

Կ5

**ՀՊՁ Վերջնարդյունքներ**

Հ6

Հ5

Հ14

**Նշումներ**

<b>Թեմա 8-19 (1 ժամ)</b>	<b>Դասարան 8</b>	
<b>Կլիենտ-սերվեր մոդել</b>	<b>Կող - (ՀՄԳԳ.ՍՐՔ.ՑՆՑ.3)</b>	<b>Աղբյուր (AG)</b>
<b>Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ</b>		
Գնահատել ցանցերի մասշտաբավորումն ու հուսալիությունը՝ նկարագրելով ռաուտերների, սվիչների, սերվերների, տոպոլոգիայի և հասցեավորման փոխհարաբերությունները:		
<b>Վերջնարդյունքներ</b>		
<p>Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կկարողանա.</p> <ul style="list-style-type: none"> <li>- Բացատրել, թե ինչպես է ցանցով միմյանց կապված համակարգիչներում գործում կլիենտ-սերվեր մոդելը:</li> <li>- Տալ այնպիսի ծրագրերի օրինակներ, որոնք օգտագործում են կլիենտ-սերվեր մոդելը:</li> </ul>		
<b>Բովանդակություն</b>		
<p>Կլիենտ-սերվեր մոդելներ.</p> <ul style="list-style-type: none"> <li>- որ դեպքերում են օգտագործում մոդելները:</li> </ul>		
<b>Գործնական աշխատանքներ</b>	<b>Ընդհանրական խաչվող գաղափարներ</b>	
<ul style="list-style-type: none"> <li>- Մոդելներ մշակել և օգտագործել:</li> <li>- Ներգրավվել ապացույցից բխող փաստարկման/հիմնավորման գործընթացում:</li> </ul>	<p>Մասշտաբ, համամասնություն և քանակ Համակարգեր և մոդելներ Կառուցվածք և գործառույթ</p>	
<p><b>ՀՊԶ Կարողունակություններ</b></p> <p>Կ7</p> <p>Կ2</p>	<p><b>ՀՊԶ Վերջնարդյունքներ</b></p> <p>Հ9</p> <p>Հ28</p> <p>Հ46</p>	
<b>Նշումներ</b>		

<b>Թեմա 8-20 (1 ժամ)</b>	<b>Դասարան 8</b>	
<b>Կազմալուծելով խնդիրները՝ վերածում ենք ալգորիթմների</b>	<b>Կող - (ՀՄԳԳ. ԱՄՏԾ. ՈՒՊ.1)</b>	<b>Աղբյուր</b>
<b>Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ</b>		
Օգտագործել բլոկ սխեմաներ կամ կեղծ կող բարդ խնդիրները՝ որպես ալգորիթմներ հասցեավորելու/լուծելու համար:		
<b>Վերջնարդյունքներ</b>		
Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կկարողանա. - Օգտագործել բլոկ սխեմաներ կամ կեղծ կող բարդ խնդիրները՝ որպես ալգորիթմներ հասցեավորելու/լուծելու համար:		
<b>Բովանդակություն</b>		
Խնդրի բարձր մակարդակի տրամաբանական կազմալուծում. - ստեղծում ենք քայլ առ քայլ տրամաբանության բլոկ-դափգրամներ, - սահմանում ենք խնդիրը ներկայացնող ալգորիթմ:		
<b>Գործնական աշխատանքներ</b>	<b>Ընդհանրական խաչվող գաղափարներ</b>	
- Մոդելներ մշակել և օգտագործել: - Կիրառել մաթեմատիկական և հաշվողական մտածողություն: - Ներգրավվել ապացույցից բխող փաստարկման/հիմնավորման գործընթացում:	Համակարգեր և մոդելներ Կառուցվածք և գործառույթ	
<b>ՀՊԶ Կարողունակություններ</b> Կ7 Կ2	<b>ՀՊԶ Վերջնարդյունքներ</b> Հ6 Հ7	
<b>Նշումներ</b>		



<b>Թեմա 8-21 (0.5 ժամ)</b>	<b>Դասարան 8</b>	
<b>Գունային կոդավորումներ</b>	<b>Կոդ - (ՀՄԳԳ.ԱՄՏԾ.ՈԵՊ.2)</b>	<b>Աղբյուր (BC)</b>
<b>Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ</b>		
Ներկայացնել տվյալները՝ օգտագործելով այլազրման բազմատեսակ սխեմաներ:		
<b>Վերջնարդյունքներ</b>		
Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կկարողանա. - ճանաչել և օգտագործել RGB և CMYK գունային կոդավորումները:		
<b>Բովանդակություն</b>		
Ինչո՞ւ RGB and CMYK. -տպագրության մեջ CMYK, -տեսասարքերի վրա RGB, -html գույների կոդավորումը:		
<b>Գործնական աշխատանքներ</b>	<b>Ընդհանրական խաչվող գաղափարներ</b>	
- Տվյալներ վերլուծել և մեկնաբանել : - Կիրառել մաթեմատիկական և հաշվողական մտածողություն:	Օրինաչափություններ Համակարգեր և մոդելներ	
<b>ՀՊԶ Կարողունակություններ</b> Կ7 Կ2 Կ8 Կ3	<b>ՀՊԶ Վերջնարդյունքներ</b> Հ6 Հ7 Հ12	
<b>Նշումներ</b>		

<b>Թեմա 8-22 (0.5 ժամ)</b>	<b>Դասարան 8</b>	
<b>Տվյալների օգտագործմամբ բարելավում ենք մոդելները</b>	<b>Կող - (ՀՄԳԳ. ԱՄՏԾ. ՌԵՊ. 3)</b>	<b>Աղբյուր (AH)</b>
<b>Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ</b>		
Կատարելագործել հաշվարկային մոդելները՝ հիմնվելով այն տվյալների վրա, որոնք ստեղծվել են նույն այդ մոդելների միջոցով:		
<b>Վերջնարդյունքներ</b>		
<p>Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կկարողանա.</p> <ul style="list-style-type: none"> <li>- Կատարելագործել հաշվարկային մոդելները՝ հիմնվելով այն տվյալների վրա, որոնք ստեղծվել են նույն այդ մոդելների միջոցով:</li> <li>- Օգտագործել իտերացիա մոդելները բարելավելու նպատակով:</li> </ul>		
<b>Բովանդակություն</b>		
<p>Օգտագործում ենք տվյալներ մոդելից՝ նպատակ ունենալով հենց նույն մոդելի բարելավումը.</p> <ul style="list-style-type: none"> <li>- ներմուծում ենք հետադարձ կապի գաղափարը,</li> <li>- ներմուծում ենք կոնվերգենցիայի/սահմանների գաղափարը:</li> </ul>		
<b>Գործնական աշխատանքներ</b>	<b>Ընդհանրական խաչվող գաղափարներ</b>	
<ul style="list-style-type: none"> <li>- Մոդելներ մշակել և օգտագործել:</li> <li>- Տվյալներ վերլուծել և մեկնաբանել:</li> </ul>	<p>Օրինաչափություններ</p> <p>Պատճառ և հետևանք, մեխանիզմ և կանխատեսում</p> <p>Մասշտաբ, համամասնություն և քանակ</p> <p>Էներգիա և նյութ, հոսքեր, ցիկլեր, պահպանում</p>	
<p><b>ՀՊՁ Կարողունակություններ</b></p> <p>Կ2</p> <p>Կ7</p>	<p><b>ՀՊՁ Վերջնարդյունքներ</b></p> <p>Հ6</p> <p>Հ7</p>	

Կ8	Հ12
Կ3	
<b>Նշումներ</b>	

<b>Թեմա 8-23 (2 ժամ)</b>	<b>Դասարան 8</b>	
<b>Աշխատանք ցուցակներով</b>	<b>Կող - (ՀՄԳԳ. ԱՄՏԾ. ՌԵՊ. 4)</b>	<b>Աղբյուր</b>
<b>Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ</b>		
Օգտագործել ցանկեր՝ պարզ փոփոխականները կրկնողաբար օգտագործելու փոխարեն լուծումները պարզեցնելու և հաշվարկային (computational) խնդիրներն ընդհանրացնելու համար:		
<b>Վերջնարդյունքներ</b>		
<p>Թեմայի ուսումնառության արդյունքում սովորողը կկարողանա.</p> <ul style="list-style-type: none"> <li>- Օգտագործել լուսերը/հանգույցները Python ծրագրում ցանկերը շրջելու համար:</li> <li>- Կատարել տարրերի ցանկի որոնում:</li> </ul>		
<b>Բովանդակություն</b>		
<p>Ցուցակները Python-ում: Ցիկլերը Python-ում: Ցուցակների շրջում:</p>		
<b>Գործնական աշխատանքներ</b>	<b>Ընդհանրական խաչվող գաղափարներ</b>	
<ul style="list-style-type: none"> <li>- Մոդելներ մշակել և օգտագործել:</li> <li>- Տվյալներ վերլուծել և մեկնաբանել:</li> </ul>	<p>Օրինաչափություններ Համակարգեր և մոդելներ</p>	

	Էներգիա և նյութ, հոսքեր, ցիկլեր, պահպանում
<b>ՀՊՁ Կարողունակություններ</b>	<b>ՀՊՁ Վերջնարդյունքներ</b>
Կ2	Հ6
Կ7	Հ7
Կ8	Հ12
Կ3	Հ14
Կ5	
<b>Նշումներ</b>	

<b>Թեմա 8-24 (2 ժամ)</b>	<b>Դասարան 8</b>	
<b>Ֆունկցիաները Python լեզվում</b>	<b>Կող - (ՀՄԳԳ. ԱՄՏԾ. ՌԵՊ. 5)</b>	<b>Աղբյուր</b>
	<b>(AG)</b>	
<b>Նպատակ/Գիտակարգային առանցքային վերջնարդյունք. 3-րդ մակարդակ</b>		
<p>Մասնատել խնդիրները ավելի փոքր բաղադրիչների՝ օգտագործելով համակարգային վերլուծություն, և այնպիսի կառուցվածքային տարրեր, ինչպիսիք ընթացակարգերը, մոդուլները կամ օբյեկտները:</p>		
<b>Վերջնարդյունքներ</b>		
